



891.99

b-44

19 NOV 2011

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԷՄԺԱՆՍԻԱՆ

26


ԷՄՄԱՆՈՒԷԼ

Ողբերգութիւն հինգ արարուածով.

ԳԻՆԸ—80 ԿՈՊ.



ԳՐՈՒԱԾ 1900 ԹԻՒՆ.



Ե Ր Ե Ւ Ա Ն

ՏՊԱՐԱՆ „ԼՈՅՍ“ ԱՐՁԱԿ ՅԱԿՈՎԲԵԱՆՅԻ ՆԻ ՈՐԴԻՔ:

1908 թ.

891.99 ա
5-44

ՅՈՂՀԱՆՆԷՍ ԷՄՄԱՍՈՆ




ԷՄՄԱՆՈՒԷԼ

Ողբերգություն հինգ արարուածով.

229



ԳՐՈՒՄ 1900 ԹԻՒՆ.



1945

ԵՐԵՒԱՆ
ՏՊԱՐԱՆ ԱՐՁԱԿ ՅԱԿՈՎԲԵԱՆՅԻ ՆԻ ՈՐԳԻՔ.
1908 թ.


15 APR 2013

30439

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ԳԷՈՐԳ	Հին ազնուական կալուածատէր	
ՍՈՒԼԹԱՆԵԱՆ	կրթուած վաճառական	
ԲԱԲԱ	Ս.-ի հայրը հարուստ վաճառական Պարսկաստանցի, վաղուց վերաբնակուած Կովկասում	
ՄԱՐՏԻՐՈՍ	նրանց ծառան	
ԷՄՄԱՆՈՒԷԼ	Գէորգի որդին	
ՀԵՂԻՆԷ	Էմմանուէլի մայրը	
ՎԱՐՍԵՆԻԿ	նրա քոյրը	
ԼԵՒՈՆ	{	Էմմանուէլի ընկերները
ԵՐԻԱՆԴ		
ՄԱՀՏԵՍԵԱՆ	Գէորգի գործավարը	
ՋԱՐԻԿ	Մահտեսեանի աղջիկը	
ՂԱԶԱՐՈՍ	Գէորգի ծառան	
ՍՄԲԱԹ	Ս.-ի գրագիրը	
ՄՆՈ	սրա հայրը	
ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ	Երրիասարգներից մէկը	
ՎԱՐԴԱՆ		

Գործողութիւնը կատարուում է մի հնաւեր արքայական զդեակի մօտ գտնուող գիւղում, որտեղ Կովկասի քաղաքներից ունեւոր մարդիկ երբեմն ընտրում էին իրենց համար որպէս ժամանակաւոր ամարանոց:



ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐ

ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

ՏԵՍԻՆ Ա.

Մտնում է Հեղինէն

ՀԵՂԻՆԷ (մենակ)

Բայց ոչ... դեռ յոյս կայ... Ահա բազումքը
Հասել է մութը երկնի մէջտեղը.

Ահա կշիռը, ահա լուսաստղը,

Ահա և հեռու լեռների վրա

Ուրախ փայլում են լուսափառ ամպերն,

Ահա և դեղնած խոտերի միջից

Վեր վեր է ցատկում արթուն ճպուռը,

Աքաղաղներն էլ վաղուց կանչում են.

Իմ բարի մայրը միշտ ինձ ասում էր,

Որ սովորաբար օրուայ այս ժամին

Հանգիստ են առնում թափառող ոգիքն.

Բացում է Աստուծոյ դրախտի դուռը,

Բոլոր որբերը զգեստաւորուած

Ձեռները կրծքին, Աստուծոյ դէմ կանգնած,

Մեր աղօթքները ջերմ պաղատանքով

Կրկնում եմ նրան: Ես աղօթում եմ,

Ես մեղաւոր եմ. երկնային սրբեր,

Հաղորդէք զիշտս երկնաւոր Հօրը,

Դուք տեսաք սիրտս, տեսաք տանջանքս:

(Դուռը ծեծում են, տիկինը շփոթուած այս ու այն
կողմն է ընկնում:)

Օ՛ չ'լինե՞ թէ մեր լրաբերն է,
 Ես շատ լաւ գիտեմ, նա սրտագէտ է
 Եւ երբէք նա խիստ չէ արտայայտում,
 Ինչ որ գիտէ... բայց նրա գէմքը
 Կեղծել չ'գիտէ... Երանի նրան
 Մէկն զգուշացնէր, որ տխուր գէմքով
 Այստեղ չ'մտնէր... Բայց ոչ, թող նա գայ.
 Ողորմած Աստուած, սիրտս պայթում է:

(Մտնում է ծառան)

Վայ ինձ, նայուածքդ... բայց ասա ամենն
 Ինչ իմանում ես, ինչ որ տեսել ես:

ՂԱԶԱՐՈՍ

Լաւ, հանգստացիր, Աստուած վկայ է,
 Հէնց հիմի կ'գայ, բան չի պատահել:

ՀԵՂԻՆԷ

Ո՛չ, ո՛չ, աչքերդ լեզուիդ հակառակն են
 Պնդում, ասա խնդրեմ պարզապէս:

ՂԱԶԱՐՈՍ

Ինչ պիտի լինի, մի ասա տեսնեմ.
 Ես էլ հէնց քեզ պէս մի մայր ունէի,
 Որ մի օր մի քիչ ուշ էի գալիս՝
 Այնքան էր ոռնում ու գլխին տալիս,
 Այնքան լալիս էր, այնքան սուգ անում,
 Որ էլ ինչ ասեմ... Բայց տես, հիմա նա
 Մեռել պրծել է, իսկ ես ապրում եմ
 Եւ ծերացել եմ. այս էլ ասեմ, որ
 Մի օր էլ ես այդ հացիցը կուտեմ:
 Այսպէս է. ամենքս էլ այս ճանապարհով
 Պիտի գնանք. էլ ինչ մտածել կայ.
 Մտածելով մենք Աստծուն աւելի
 Կ'բարկացնենք. աւելի լաւ է,

Որ թողնենք նրա ողորմած կամքին:

ՀԵՂԻՆԷ

Ինձ սպանեցիր: Ասա, ո՞ւր է նա.
 Օ՛ մի՞թէ նրա ջարդուած մարմինը
 Գիշատում են արդ սև սև անգղերը,
 Կամ թէ արևի թռչնաւոր լոյսը
 Սկսել է այժմ սև լերդ դարձնել
 Նրա արիւնը.

Եւ նրա վերջին ցաւագին ճիչը
 Լսեցին միայն անսիրտ ժայռերը:

ՂԱԶԱՐՈՍ

Էհէ, այդքան էլ խորամիտք. տիկին,
 Այդպիսի մտքեր մի անիլ, չէ, չէ,
 Էդպէս մտքերից, ասում են, վախ կայ:

ՀԵՂԻՆԷ

Ախ, այ մարդ, մի՞թէ դու Աստուած չունի՞ս,
 Դու լաւ հասկացիր մայրերի սիրտը,
 Եթէ ծածկում ես իրողութիւնը
 Ցաւս մեղմելու նպատակով՝ այդ
 Մի անիր, լսիր իմ աղաչանքը:

ՂԱԶԱՐՈՍ

Երդում եմ էն սուրբ մարտիրոսների
 Քաջած ցաւերով, նա հիմի կը գայ:

ՀԵՂԻՆԷ

Վերջապէս ո՞ւր է:

ՂԱԶԱՐՈՍ

Աւերակ վանքի

Վարդապետի մօտ, հէնց հիմի կ'գայ
 Ինձ ասաց, - գնա հիմի գալիս եմ:
 (Ծառան գնում է)

ՀԵՂԻՆԷ (մենակ)

Աւերակ վանքի վարդապետի մօտ.
 Կամ թէ այն մենակ խաչարձանի մօտ՝
 Որի մօտ երբեմն խեղճ նահատակուած
 Նրա եղբայրը մինչև կէս գիշեր,
 Մինչ աքլորականչ նստում էր այնտեղ.
 Իր խղճուկ եղբօր յիշատակի հետ:
 Վայ ինձ, Աստուած իմ, օրինակները
 Նոր սարսափներ են բերում իմ սրտին.
 Ես շատ եմ տեսել. եղել են մարդիկ,
 Նման ցաւերից անվերջ տանջուելով
 Կամ խենթացել են, կամ մի խղճալի
 Վիճակի մէջ սև մահ են գտել:
 (Դուրս է գնում)

ՏԵՍԻՆ Բ.

(մտնում են Լևոն և Երւանդ)

ԼԵՒՈՆ

Երւանդ, սոսկալի լուրեր կ'պտտին.
 Հայ ժողովուրդը վտանգի մէջ է.
 Ու բնաջնջման վտանգի:

ԵՐԻԱՆԴ

Էլ ի՞նչ են ասում, ասա ինձ, խնդրեմ:

ԼԵՒՈՆ

Աստուած իմ Աստուած, ով կարող էր երազել,
 որ քսաներորդ դարու արշալուսին մէջ մեր աչաց
 գէմ երևան կուգային սապիտի տարօրինակ եղեռնա-
 փորձութիւնք. օ եթէ պատուէր Դանթէի գերեզ-

մանը, զար մեր մէջ, տեսնէր մեր ցաւերը, կ'չքա-
 նար անոր երազած դժոգքը, ծանր խաւար կ'տիրէր
 անոր ստեղծագործող երևակայութեան, կը կարկամէր,
 իր պժգալի երազների մէջ ծնուած, մեծացած, հա-
 զար անգամ կերպարանքնին փոխած, նորանոր ձևեր
 ստացած դժոխային պատկերներու առաջ, համեմատե-
 լով մեր քաջածներու հետ և իր իրական յուսահա-
 տութեան մէջ, իր սոսկալի արհաւիրքների դրօշմը ճա-
 կատին վրայ՝ կը զահավիժուէր այս բոցերու, շանթերու
 ներքև անհունօրէն փռուած արեան ծովը: Ա՛ռ, առ,
 կարդա սա նամակը, սա գրեր է մեր կովկասահայ
 ընկերներէն մէկը:

Երւանդը (առնում է ձեռից և սկսում է կարդալ.)

«Միլբիլիք, ես ընդհանուր կոտորածի ժամանակ
 մտայ իմ ծանօթ բարեկամներիցս մէկի տունը... ձեռ-
 ներս դողում են, աչքերս մթնում են, ձեզ կարող եմ
 միայն այսքանը գրել. մայրը մորթուած, տարածուած
 է յատակի վրայ. ութ ամսական զաւակը չոչ անե-
 լով եկել է ընկել մօր կրծքի վրայ. մանուկը մերթ
 խաղում էր ստինքների հետ, մերթ ճչում էր, ոռնում.
 Նրան կեանք տւող ստինքները յաւիտենապէս ցամա-
 քած էին, կաթ չը կար, որ կերակրէր անպաշտպան
 մանկանը: Ես խելագարի նման դուրս թռայ այնտե-
 դից: Մանրամասնութիւնները մի ուրիշ անգամ...»:

(Նորից ներս է գալիս Հեղինէ)

ԵՐԻԱՆԴ

Մեր քրիստոնեայ եղբայրներն չէ՞ որ
 Տեղեակ են այդ քստմեղի, այդ
 Նողկալի եղեռնագործութիւններին:

ԼԵՒՈՆ

Այո, տեղեակ են, քրիստոնեայ Վիլհելմն

Հրատարակել է 'ի լուր աշխարհի՝
Որ ոչ ոք չը պիտի համարձակուի
Հակառակ գնալ իր մեծ մարդասպան
Բարեկամի վայրագ արարքներուն:

ԵՐԻԱՆԴ

Օ, ներոն, ներոն, դու մի շատ ազնիւ
Ու բարի մարդ ես եղել արիւնոտ
Գաղափարների այդ նեղ շրջանում.
Այժմ մոնղոլական ստեղծագործող
Խելքը կը գտնի շատ առատ սնունդ՝
Ստեղծագործելու ոճիրների,
Այն բոլոր ձևերն ու տեսակները,
Որոնք պակաս տեղ են թողել նրանց
Պատմական կեանքի ամբողջ ընթացքում,
Նրանց ա՛ռելի գործողութեանց մէջ.
Եւ որոնց նմանը երբէք չի եղել
Եւ չի յղացել և ոչ մի գլուխ,
Թէկուզ այդ գլուխը տարօրէն կերպով
Նման չը լինէր և ոչ մի գլխի.
Եւ այդ բոլորը, բոլորը պիտի
Պայթի անպաշտպան մի ժողովրդի
Գլխին:

ԼԵՒՈՆ

Ի՞նչ ընենք, ասէք, ի՞նչ ընել:

ԵՐԻԱՆԴ

Լսել եմ, որ այդ Գեր մարդն ուզում է
Մեծ մարդասպանի միջոցով քշէ
Իր արքայական տան խողովները
Արևի տակ. այդ մեծագոյն Վիլհելմն
Շատ լաւ գիտէ, որ խողերն արևի
Տակ միայն պիտի գտնեն այն պարարտ

Մսունդը՝ որը, իրանց խողերից
Պիտի դարձնի գեր խողեր. ի՞նչ է,
Ոճա դուր չեկաւ մեծ հայրենասիրի
Նկատմամբ արդեօք. անհանգստութեան
Նշաներ եմ ես նկատում գէմքիդ:

ԼԵՒՈՆ

Օ', երբէք, ադ չէ պատճառն անհանգստութեանս.
Ես կը զարմանամ, ի՞նչ հարկաւոր է
Այդ խողուկների արևի տակը
Արշաւելու համար կամ Վիլհելմի
Կամ մարդասպանի միջամտութիւնն:
Ամեն մի խող, կամ ինչ տեսակ կուզէ
Կենդանի լինի՝ տեղ ունի մեր մայր
Արևին տակ օգտուելու իր ուժերու
Եւ կարիքներու սահմաններուն մէջ.
Աշխարհը մարդոց մեծ հայրենիքն է:

ԵՐԻԱՆԴ

Սակայն այդ գիտակցութեան վրայ ծանրանում
է մի բան... մինչդեռ գիտակցութիւնը դողդողալով
ոտի է կանգնում իր տեղից, մոլութիւնը իր ձին թամ-
բած պատրաստ է առաջ գնալու. զարմանալի է,
մեղ արևելցիներիս մեղադրում են մեր մոլութեան
մէջ, բայց արևմտեան դիւանագիտութիւնից եթէ հա-
նես մոլութիւնը, կստանաս մի գերօ. զոնէ մեր մո-
լութիւնը խոնարհուում է խեղճութեան առաջ, բայց
ոյժի կատարեալ գիտակցութեան աչքերը արհամա-
տութեանը: Վիլհելմին հարկաւոր չէ, որ քաղցած մար-
դիկ գնան արևի տակ սնունդ գտնեն. նրան երազնե-
րում անգամ հանգիստ չէ տալիս Սղեքսանդր Մեծը,
որի փառասիրութիւնը ստիպեց նրան ընդունել տալու

իրան կուռքերի կուռքը, տիեզերքի կենտրոնը. իսկ երկրագնդի, թէկուզ Մարսի վրայ, առանց Վիլհելմի գիտութեան, ճանձներն անգամ իրաւունք չը պիտի ունենան զուգաւորութիւնը և Հրո կղզու վրայ նոր զուգաւորութեանը պիտի իրանց կուսական առաջատուութեան քաջ անեն Վիլհելմի մեծագիր պատկերը, ամեն օր վեր կենան անկողնից ծունը դնեն նրա առաջ, որ պարգևել է իրանց այդ չնաշխարհիկ բախտաւորութիւնը. զարմանալին այն է, որ այդ մարդը իր ազգի հաշուով է ուզում հասնել այդ տենչանքներին:

ԼԵՒՈՆ

Ի՞նչ ընելու է, Աստուած իմ, ի՞նչ.
Կզգամ մի խիստ ծակծկոց խեղճ գանգիս
Կաշուին տակ և մի թեթև պաղութիւն.
Կր հրաժարուէ խելքս գործելուց:

ԵՐԻԱՆԴ

Կարծեմ ,,Որոտ“ խումբն պատրաստ է արդէն:
Անպատճառ պիտի ճանապարհ գցել:

ՀԵՂԻՆԷ

Դիւանագիտութիւնը կարծես թէ
Կապալով է վերցրել երկրագնդի
Վրայ բոլոր ապրողների ուղեղներն.
Անմատչելի է դարձրել բոլոր
Ականջներին՝ տանջողի մի ձայն,
Մեռնողի մի կոծ, յուսահատութիւն
Մի դառն աղաղակ: Կը գայ ժամանակ՝
Մի զուլուս սնգամ իր նմաններին
Մորթելու խնդրում կունենայ իր
Քաղաքական հաշիւները:

ԼԵՒՈՆ (Երւանդին)

Ախ, Երւանդ, դուն կը խօսիս խումբ ուղարկելու

մասին. մենք կը խեղդուինք զանազան կարծիքներու տարափին տակ:

ԵՐԻԱՆԴ

Այո Աւգէոսի գոմբը լցուած է կրկնակի, եռակի անգամ զանազան աղտեղութիւններով. աւանդ, սէր եւ դու Հերկուէս, լեռնային գետերը այնտեղ արձակէիր մաքրելու հիմնովին: Մեր նեարդերի, մեր ուղեղի ամեն մի հիւլէն այնքան են խոցել, որ այլևս անհնարին է մեզ վերադառնալ կանոնաւոր մտածելու եղանակներին:

Մենք ստիպուած ենք խելագարի պէս
Ջուխտ ոտքով ցատկել գարշահոտ արեան
Սև լճակները՝ կամ այնտեղ խեղդուել,
Կամ խեղդել բոլոր անասուններին՝
Որոնք խեղդուում են, բայց չը գիտեն թէ
Ինչի՞ համար:

ԼԵՒՈՆ

Ձեր Ռուսաստանում

Տարբեր խմբակներ այնպիսի զգուանք
Կը տածեն միմեանց, որ ով գիտէ թէ
Գուցէ ադ զգուանքն բոցերու փոխուին
Միմեանց խարշատին, նախ քան պոստին
Թշնամիին շուրթ:

ԵՐԻԱՆԴ

Գիտեմ այդ ինչո՞ւ,

Մեզնից ամեն մէկը կերակրուում է
Արևմուտքից կորզած փշրանքներով.
Եւ մէշտ մի դատարկ ցիտադ ձեռներիս
Որպէս ձեռնոցներ շարաւում ենք մեր
Իրականութեան առաջարկած շուրջ
Բոլոր հարցերին:

ՀԵՂԻՆԷ

Ներեցէք պարօն,

Մօր սիրտը արդէն առաջ է գնում

Մեզ զբաղեցնող բոլոր հարցերից.

Եւ սառն ու դանդաղ փրկիսփայութիւնն

Նրան աւելի խրանեցնում է:

Նա դեռ չեկաւ, դուք կարող էք արդեօք

Նրա մասին մի տեղեկութիւն տալ:

ԵՐԻԱՆԴ (Լեռնին)

Այս քանի օրը չեմ տեսել նրան:

ԼԵՒՈՆ (Երւանդին առանձին).

Երեկ տեսած եմ, յանկարծ հոս եկաւ:

Այնպէս այլայլուած, այնպէս տարօրէն

Խեղճ շարժումներով ինչ ըսեմ. կարծես

Անողորմ մահից միայն մի ժամ

Փոխ էր առեր ան, լուծելու հոգւոյ

Էն անյայտ գաղտնիքն, որն, իր ասելով,

Տիեզերքի մէջ յաւիտենական

Ժամանակներում գոյութիւն ունենալ

Երբէք չէ կարող:

ՀԵՂԻՆԷ

Սիրելիք, արդեօք

Ճիշտ է այն բոլոր բաները, որ նրա

Մասին ասում են, ասացէք, ճիշտ է:

ԵՐԻԱՆԴ

Ի՞նչ կայ տիկին, ի՞նչ էք լսել նրա

Մասին, ասացէք:

ՀԵՂԻՆԷ

Ասում են, որ նա

Խելագարուած է. այն լերան գլխի

Կիսաւեր վանքը տանող նեղ շաւղից

Գիշեր ու ցերեկ նա պոկ չի գալիս,

Կարծես քաջքերը կապել են նրան

Այն մթին վանքից, այն սև լեռներից:

ԵՐԻԱՆԴ

Տարօրինակ երեւոյթները առաջացնում են տարօրինակ դէպքեր. և այդ տարօրինակ դէպքերը նորից առաջացնում են տարօրինակ երեւոյթներ. և արդեօք կարող է տանել այս ծանր փորձութիւնները, որոնցից ոչ թէ խուսափում է մեր ժամանակը, այլ սպառնում է յարատեւել ջնջելու մեր մէջ այն ամենը, ինչ որ լաւ է, ինչ որ մարդկային է: Մի մարդ, որ իր քթի մէջ մի թոյլ ջիղ է կրում, որ մի նեխուած դիակի ամենագարշելի հոտը շատ թոյլ կերպով կարող է զգալ, նա չի կարող չը ցնցուել և յանկարծ քրքշալ, նկատելով մեր ժամանակի մեծապատիւ տէրերից մէկի ներքինը: Օ՛ մեր ժամանակը առաջացրել է երկու մեծ խելագարների խմբեր՝ որոնք են խելական խելագարները և խելագարացողները, որոնցից ոչ առաջինը գիտէ թէ ինչո՞ւ է թոյլ տալիս իրան խելագարեցնելու և ոչ երկրորդը գիտէ, թէ ինչո՞ւ է խելագարեցնում. տիկին, ձեր որդին չի կարող բացառութիւն կազմել...

ՀԵՂԻՆԷ

Եթէ մի թեթև փորձութիւն լինէր,

Հեշտ կարելի էր նրան բժշկել:

Բայց ան, ինչպիսի բաներ են տառու.

Այնպիսի ախուր ու զարհուրելի

Մեղքեր են նրան վերագրում, որ

Լսելիս քիչ է մնում հողը մտնեմ.

Եւ այդ բոլորը ասում են մեզ մեր

Մերձաւորներն ու ազգակիցները:

ԼԵՒՈՆ

Անիկայ շատ բարդ անձնաւորութիւն մն է.
Ու այդ բարդութեան մի մասը գոնէ
Կարող է թէ ձեզ, թէ ուրիշներին
Խենթութիւն թուալ: Զարմանալի է:
Այդ դէմքի ամեն մի գիծն անսահման
Եւ զարհուրելի մտքեր կը յայտնէ:
Կարծես թէ ան իր ժամանակի հետ
Զէ ապրել. կարծես մեծ տիեզերքի
Անսահմանութեան մէջ միշտ թափառող
Մարդկային թշուառ էն նախասաղմը
Բերած է իր հետ անհուն անցեալից
Իր կրածները, հաղորդել նրան.
Անիկայ ճշգրիտ պատմութիւնն է
Նախախնամութեան էն արարքների
Ու էն ահաւոր բովերի, որոնց
Միջով եկած է ու անցած ան.
Եւ դուք ադ մարդուն խենթ կանուանէք, հա,
Հաւանական է, որ խենթը սապէս
Զգացմունք կրէ իր մէջ. տեսած եմ.
Օր մը, օրուայ էն պահուն, երբ վերջին
Լոյսը հրաժեշտ կուտայ աշխարհին,
Գրկած էր հոն տեղն իր մեռած եղբօր
Տխուր շիրիմը ու կը հառաչէր
Ու ախ կը քաշէր, օ ինչպէս, ինչպէս.
Զոր կարծես կը վրդովէր Աստուծոյ
Կամքն ու կը կռուէր անոր յանցաւոր
Յամառութեան դէմ, որ ախքան արագ
Կը դնէ վճիռն ամեն բանի մէջ:
ՀԵՂԻՆԷ
Ոհ, աւանդ, ինչո՞ւ յիշեցրիր ինձ

Իմ մեռած որդուն: Շուտ եկէք ինձ հետ,
Գնանք որոնել: Ինչո՞ւ չերեաց
Նա մինչև հիմա, ի՞նչ պիտի լինի:
(Գնում են):

ՏԵՍԻՆ Գ.

(Ներս է գալիս Էմմանուէլը.)

ԷՄՄԱՆՈՒԷԼ (մենակ)

Հայրս զրկել է ինձ ժառանգութիւնից.
Ո՛վ դու Ներսնի ժամանակ, արդեօք
Կարո՞ղ ես ոյժ տալ իմ շատ խոշտանդուած
Նեարդերին, որ այս խեղճ բազուկները
Ընդունակ լինեն ծանր մուրճ բռնել
Մեծ փողոցներում քար մանրացնել.
Բայց երանի՜ ձեզ, ո՞վ մուրճ բռնողներ,
Որ դուք ինձ նման երազներ չունիք:
(Նորից գալիս են Հեղինէ, Երւանդ և Լևոն. Էմմա-
նուէլը մօտենում է զրկել իր ընկերներին, բայց յետ
է քաշւում)
Օ, չէք իմանում, սիրելիք, թէ մեր
Ժամանակը որքան փչացած է.
Եւ մտքերը որքան են աղաւաղուած՝
Կեղծութիւնը միշտ անկեղծութեան տեղ,
Անկեղծութիւնը կեղծութեան տեղ է
Ընդունում մեր մէջ: Այս բոլորիս
Ուղեցի սրախ թելադրութեամբ
Գրկել ձեզ և շատ ջերմ համբոյրներ տալ
Բայց շատ վախեցայ շողոքորթութիւն
Անուանէք նրան:

ԼԵՒՈՆ

Ես կգարմանամ:

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Փոքրուց ստիպուած... ես շատ եմ շրջել
Սիրոյ, համակրութեան սահմաններում.
Սէր՝ որը յաւիտեան խոստացել էր ինձ
Բացել առջևս մի չնաշխարհիկ
Հովիտ և տալ ինձ թիթեռի թևեր,
Յաւիտեան լողալ մեղմ արշալուսի
Ոսկեղէն խրճերի մէջ, բայց աւանդ,
Շուտ նկատեցի, որ արդէն այնտեղ
Կան և վխտում են անթիւ թռչնաւոր
Գարշելի ժժմակներ.... Սիրելի մայր,
Ի՞նչպէս է արդեօք սիրելի փեսադ.
Ես պիտի տեսնեմ և խնդրեմ նրան,
Որ չը ձանձրանայ մեզ այսքան երկար
Հիւրասիրելուց:

ՀԵՂԻՆԷ

(Խորհրդաւոր կերպով նայելով նրա ընկերներին)

Սիրելի որդեակ,

Դու ապրում ես քո հօր հարկի տակ.
Փեսադ է մեզ հիւր, դու նրա հիւրը չես:

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Սիրելի Երւանդ, որքան երջանիկ
Ու երանելի արարածներ են
Կրիաները և խխունջները, կամ
Ծովային բոլոր այն ժժմակները,
Որոնց բնութիւնը բարեհաճել է
Պատսպարել ամուր, շատ ամուր
Վահանների մէջ. ինձ ի՞նչ է տուել
Այդ բնութիւնը մեզ շրջապատող

Վահանաւորութենքի մէջ արդեօք:

ԵՐԻԱՆԴ

Մասնաւորելով յայտնած մտքերդ,
Որոնք եթէ քեզ են վերաբերում՝
Ես համարում եմ անտեղի տրտուշ.
Եւ դրանով դու առիթ ես տալիս
Աւելի ևս մօրդ հաստատուելու
Իր ունեցած կասկածների մէջ:

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Կասկած... այդ մասին մի ուրիշ անգամ:
Աստուած հօրն ու մօրս ու իմ փեսային
Այնպիսի մի սէր՝ այնպիսի սէր տայ,
Որ Հրէյի միտքն իր յաւիտեական
Շարունակութեան մէջ, Հկարողանայ
Այնտեղ գտնէ մի որևէ արատ:

ՀԵՂԻՆԷ (մի կողմ Երւանդին)

Ձէք կարող արդեօք մի կապ որոնել
Դրա յայտնած մտքերի մէջ. ասէք,
Կարելի է յուսալ, որ նա խենթ չէ:

ԵՐԻԱՆԴ

Նա խենթ չէ, այսքանը բաւական է:
(Մտնում է Գէորգ.)

ԷՄՄԱՆՈՒԷԼ (ինքն իրան)

Թողէք ինձ, թողէք.... Մահուան ահաւոր
Սուրը նորից նոր ճօճւում է գլխիս.
Ես մի աւագ եմ, յուսահատ մտքի
Սև հեղեղի գէմ՝ որը դեռ ևս
Ինձ մօտ չ'հասած, գլորում է ինձ
Տիեզերքի սև անապատները.
Օ՛ ունի՞ արդօք այս դրութիւնը
Մի շարունակութիւն.. բայց ոչ, ոչ, դեռ

Կեանքը ակամայ թող մագերիցս
Բռնած ինձ քաշ տայ և ես ակամայ
Ուզում եմ մի բանի համար...

ԳԵՈՐԳ (Կէպի Էմմանուէլը)

Պարոն, այդ տարօրինակութիւններն
Ինձ հաճելի չեն, ինձ զգուեցնում են:

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Փառաւոր առիթ ձեր կարգադրութեան...

ԳԵՈՐԳ

Ամեն ինչ չափաւորութեան սահմաններում շատ
բնական և մինչև անգամ գեղեցիկ է երևում, այն
ինչ այդ սահմաններից դուրս, շատ պախարակելի և
արժանի ամեն տեսակ յանդիմանութեան. դու անցել
ես արդէն չափաւորութեան բոլոր սահմաններից. ինչ-
պէս անցեալ օրը մի լուրջ հասարակութեան մէջ չա-
փազանցութեան էիր դիմել և գեղեցիկութիւն էր տեղի
ունեցել, որից ես էլ իմ մասը ստացայ:

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Սպասեցէք հայր, այդ առթիւ ես մի ուսանաւոր
եմ գրել, կը կարգամ այդ ձեզ մօտ:

ԳԵՈՐԳ

Ախ ցնորուած մարդ, ես այստեղ երբէք
Ձեմ կարող մնալ:

ԼԵՒՈՆ

Կարգացէք խնդրեմ.

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Ես ունիմ մի շատ վատ սովորութիւն՝
Տպաւորութիւններս գրի անցրնել
Եւ ստիպել ուրիշներին կարգալ-
կամ թէ ես կարգամ, որ իրանք լսեն:

ԵՐԻԱՆԴ

Այդ երբէք ագեղ սովորութիւն չէ,
Եթէ այդ տպաւորութիւնները
Պարունակում են այնպիսի տարրեր,
Որոնք կարող են հետաքրքրել
Հասարակութեան:

ԼԵՒՈՆ

Անհատականն ալ

Կը հետաքրքրէ զիս, կարդացէք:

ԷՄՄԱՆՈՒԷԼ (կարդում է)

«Բայց իմ հասցրած չարիքը նրանց
«Ամենափոքր վրէժ չէր նիւթում,
«Տեսնում էին, որ ինձնից հասածն՝
«Ինձ աւելի է քան իրանց տանջում:
«Հաւատացէք ինձ, այդ ժամանակը
«Թէ կենդանանար հուժկու Հեկտորը
«Յաւիցս հասած իմ կերպարանքով,
«Կը գցէր ձեռից Աքիլէս սուրը
«Եւ կը մօտենար նա ինձ սիրտ տալով.»
— Էհ, ի՞նչ, ի՞նչ կայ, ի՞նչէ քո վիշաք:

ԼԵՒՈՆ

Օ՛ քո ագ երգը ի՞նչ հրաշալի
Եւ պարզ ձեւերով կարտայայտէ քո
Հոգոյ զրութիւն և կը պարզէ քո
Յարաբերութիւնքն մարդկանց հետ՝ որը
Մինչև այժմ մեզ և թէ ամենին
Համար մի շատ մութ ու տարօրինակ
Հանելուկ կ'մնար. բայց այդ աստիճան
Յուսահատութիւն, այդ տեսակի ցաւն
Բնութեան մէջ անհասկանալի է,
Բնութիւնը մեզ այդ ցաւը չէ տուել:

ԵՐԻԱՆԻ

Այդ ցաւը երբեք մեզ չըջապատող
Հանգամանքներից չէ ծնունդ առած:

ՀԵՂԻՆԷ

Որդեակ, սովորիր աղօթել. փորձիր.
Աղօթքները շատ անգամ օգնում են
Մեզ մեր դժուարին փորձութիւնների մէջ:

ԼԵՒՈՆ

Յուսա, սիրելիս, յոյսն ալ կօզնէ մեզ:

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Էհ. յոյս, յոյս, կեանքը ամեն բոլոր հասցնէ
Քեզ ամենադառը հիասթափութեան. խորամանկ յոյսերը
դարձեալ քեզ կ'հրապուրեն վարագոյրի տակից,
արգելելով առողջ բանականութեանդ զինուելու այդ
մահացու շարիքների դէմ... Այնպիսի յոյսեր, որոնք
պայմանաւորուած են մի քանի չափաւոր ունեղ զբոս-
գիւններով. զրգիւններ, որոնք առաւօտեան ցօղի նման
առաջին ճառագայթներին հանդիպելիս, անհետանում
են, թողելով միայն առժամանակեայ մի աննշան
թարմութիւն:

(Սկսում է երգել)

Օ՛ եզիպատոս, կեանքը որպիսի
Գայթակղութիւն բերեց քո որդոց,
Ինչպիսի օտար ելքի դիմեցին,
Ազատել մահից հակումը հոգոց...
Բայց աւանդ, կանցնեն մի քանի դարեր,
Հետքը կ'ջնջուի յիշատակներիդ.
Յաւիտենական թարմ ճառագայթներն
Փոխան լոյս տալու աշտարակներիդ՝
Լոյս կտան նրանք մի օտար շէնքի
Եւ հոգու ձգտումն. յաւիտենական

Կգտնէ այդպէս մօտալուտ վախճան:
(Յանկարծ տեսնում է սեղանի վրայ եղբօր լուսանը-
կարը, նկարուած դադաղի մէջ)

Օ՛ Աստուած իմ. խեղճ,

Այժմ միայն ես լաւ եմ հասկանում,
Թէ ինչ կարող է անել մեզ խիղճը.
Բայց ինչո՞ւ այսքան խորն են կնճիւղներն.
Եւ զարհուրելի, և ողորմելի.

Օ՛ երանի թէ այս կնճիւղները

Զլինէին այսքան սև ու խորունկ.

Ա՛խ, ոնց են ծակում սրանք իմ սիրտը.

Ահ, տարէք, տարէք սրան այստեղից.

Անցաւ գիշերը. բնութիւնն արդէն

Սկսել է իր բարեգարձ աշխատանքն

Էն արեւագարդ բլուրների վրայ

Եւ մեր մաշմնի մէջ. մանաւանդ, որ մեզ

Այս մօտ օրերում մի ուրախութիւն է

Սպասում, թէ ինձ, թէ ծնողներիս:

ՀԵՂԻՆԷ

Միթէ կարող ենք անվերջ տրամութեամբ
Յարութիւն տալ նրան, այդ ցաւերը
Ինքդ ես գտնում. բնութիւնը միշտ
Մեզ ցոյց է տալիս փրկութեան բոլոր
Ճանապարհները, բայց դու գիտութեամբ
Խոյս ես տալիս և ամեն մի չնչին
Բան քեզ համար մի մեծ ցաւ ես շինում.
Մեր երջանկութիւնը գտնւում է
Անհրաժեշտութեան, հակառակ չ'գնալու
Մէջ որովհետեւ մեր իմաստութիւնն
Զի անցնում Աստուծոյ իմաստութիւնից:

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Այո, մայրիկ, մեր երջանկութիւնը
Գտնուում է անհրաժեշտութեան
Հակառակ չ'գնալու մէջ. պարզ է,
Անհրաժեշտութիւն է 'իհարկէ,
Որ ամեն անգամ ընկերներին հետ
Մեր տուն մտնելիս ստիպուած լինեմ
Հետեւել փետիս քթին, աչքերին...
Ի՞նչ անեմ, հայրս այսպէս կամեցաւ:

ՀԵՂԻՆԷ

Բացարձակ ոչինչ չենք հասկանում մենք
Այդ ակնարկներից: (Դէպի միւսները, մի կողմ)

Ախ, պարոններ, այս

Անկարգ խօսքերը պարզ վկայում են
Նրա ուղեղի խանգարման մասին:

(Դէպի էմմանուէլը)

Օ՛ որդեակ, դու ես թէ մեր արամութեան,
Թէ ուրախութեան միակ առարկան.

Իմացիր, թէ ես ինչեր եմ կրում

Քո մի բոլոր բացակայութեան

Ժամանակ. որդեակ, հասկացիր դու ինձ,

Թող յոյս ունենամ, որ դու իմ նախկին

էմմանուէլն եղա՝ այնպէս չէ՞, որդեակ,

Դու այլ ես երկար բացակայ չես մնալ

Մեզանից. այլ ես երկար չես մնալ

Էս սև լեռներէ մենակութեան մէջ.

Դէ՛հ, խօսք տուր, խօսք տուր, որ այսպէս կանես:

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Երկար չեմ մնալ, սիրելի մայրիկ: (Մի կողմ.)

Ոհ, անմեղութիւն, վերջապէս ինչո՞ւ

Մարդիկ քեզանից օգտուում են. ախ,

Նենգաւոր աշխարհ, որ հնաշխարհիկ
Քո շնորհները անխնայ կերպով
Սփռում ես միշտ ամենասրիկայ,
Ամենակեղտոտ արարածների դէմ:
Այժմ նա փարթամ երազների մէջ
Անհուն տարփանքով զգուժում է քրոջս.
Հեշտալի կրքեր՝ մէկը միւսին
Միշտ յաջորդում են ինչպէս լեռնային
Գետի ալիքներ. և կը շարունակուին,
Եթէ կէս ճամբին չը քարանայ այդ
Հոսանքը ինչպէս եփեստեան փրփուր:

ՀԵՂԻՆԷ

Այժմ հանգիստ ես կարծեմ, որդեակ իմ.
Մենք կերթանք միջոցներ կ'մտածենք,
Քեզ լիակատար հանգիստ գտնելու:

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Գնացէք, մայր իմ. ես շատ հանգիստ եմ:
(Բոլորը գնում են, բացի էմմանուէլից)

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Օ՛ երկի՛նք, երկի՛նք, առաջացրու
Դու մեզ համար մի ուրիշ արեգակ,
Ուրիշ աստղներ՝ բարեխառնելու
Մեզ վրայ այսպէս տարօրէն կերպով
Ծանրացած մթնոլորտն. սրա մի թոյլ
Ճնշումը անգամ կարող է խեղդել
Մեզ, փշրել, մեր հոգին թռնաւորել:
Մայրս չ'գիտէ հօրս նոր արած
Կարգադրութեան մասին ոչ մի բան,
Նա պիտի տանջուի մութ ակնարկներիցս.
Աւելի ես պիտի տանջուի, երբ
Նրան յայտնուի ճշմարտութիւնը:

Հօրս սիրտն արդէն (ո՞վ գիտէ գիտամամբ)
 Գցել են կասկածի որդը. նրա
 Վճիռը վճիռ է: Եղբայրս խողխողուեց,
 Իմ եղբայրը, իմ խղճուկ Վանիկն...
 Ես մինչև հիմայ չ'գիտեմ ոչինչ,
 Թէ այդ սոսկալի, այդ խիստ նենգաւոր
 Սպանութիւնը ո՞վ է կատարել.
 Ի՞նչպէս իմանամ, ի՞նչ անեմ ես, ի՞նչ,
 Գոնէ իմանամ, թէ ո՞վ է արել:
 (Գնում է)

ՏԵՍԻ Լ Դ.

(Ներս են գալիս Սուլթանեան, Երւանդ և Լևոն)

ՍՈՒԼԹԱՆԵԱՆ

Այդպէս ուրեմն. մեր ժամանակուայ
 Հոռետեսների բացատրութիւններն
 Ունեցել են և պիտի ունենան
 Իրանց չարաչար հետեւողները:
 Ես կարծում եմ որ իրականութիւնն
 Իր ամբողջութեամբ չի մտնում դրանց
 Բացատրութեանց մէջ. դրանք գիտութեան
 Ճամբով գնալիս՝ մորեխից փոխ են
 Առնում ցատկիչներ, որ չը լինի թէ
 Իրանց մասերի բաժանած ճամբի
 Խրամատներում ընկնին ու կորչին:
 Խղճում եմ դրանց, երբ ճանաչում եմ,
 Կամ ծանօթանում դրանց մտածելու
 Եղանակի հետ: Այդպէս չը լինի
 Մեր էմմանուէլի բոլոր քայլերը

Հակառակը չեն բացատրիլ միշտ:
 Զարմանալի է, շատ զարմանալի,
 Թէ ի՞նչ բաներ են՝ ի՞նչ բաներ նրան
 Վերագրում. վահ, մինչ այդ աստիճան,
 Քեզ կորցնում ես, երբ որ լսում ես:
 Գոնէ ես երբէք չեմ կարողանում
 Սառնասիրտ լինել: Ի հարկէ, ես նրա
 Ծնողների մօտ կրկնում եմ բոլոր
 Այդ ասուածները, հերքելու համար
 Բացատրում եմ և հակառակ կողմերն,
 Նորից չի լինում. խեղճերն սկսել են
 Արդէն կասկածել: Ես գիտեմ, այդ խեղճ
 Հոռետեսները մի ժամանակ իմ
 Քայլերն էլ պիտի այդ ձևով մեկնեն՝
 Բայց ինձ ի՞նչ, եթէ մի մարդու արած
 Կապուած է իրան համոզմունքի հետ,
 Նրան միմիայն մահը կարող է
 Բաժանել իր արածներից:

ԼԵՒՈՆ

Դուք տարօրինակ բաներ կսէք:

ՍՈՒԼԹԱՆԵԱՆ

Տարօրինակ... ինչո՞ւ տարօրինակ...

ԼԵՒՈՆ

Սպասէք, տեսէք, թէ ձեզ ինչ կսեմ.
 Ձեր մասին յայտնած կարծիքն է, որ ինձ
 Օտար կթուայ. ձեր քայլերը ինչո՞ւ
 Ձեր ասածի պէս պիտ բացատրեն:

ՍՈՒԼԹԱՆԵԱՆ

Ո՞վ գիտէ, մարդիկ ի՞նչ ասես որ չեն
 Կարող հնարել: Պարոն Երւանդ, մեր
 Խօսակցութեանը դուք չէք մասնակցում:

(Մի թափանցող հայեացք ձգելով Երւանդի վրայ)
ԵՐԻԱՆԴ

Ոչինչ, լսում եմ:

ՍՈՒԼԹԱՆԵԱՆ

Սյդպէս ուրեմն,

Պարոնայք, ձեր պարտականութիւնների

Վրայ աւելացաւ մի ուրիշն ևս,

Դուք իբրև նրան մտերիմ ընկեր՝

Եւ ես, միասին պիտի աշխատենք

Նրանց (ուրիշի ստեղծած) զբոլթեան

Մի կերպով վերջ տալ:

(Գնում են:)

ՏԵՍԻՆԱ Ն.

(Մտնում են Մահաեսեան և Զարիկ.)

ՄԱՀՏԵՍԵԱՆ

Որդեակ իմ, դու չար աստղի տակ ես ծնուել,
Դու գժբախտ ես. ես յոյս ունէի, որ դու իմ բարե-
բաւրի որդու կինը պիտի լինես. այժմ ասում են նա
խենթացել է, հայրն էլ նրան ժառանգութիւնից զրկել է:

ԶԱՐԻԿ

Հայրիկ, ես այդ մասին ոչինչ չեմ լսել՝ բայց ես
նրա վարմունքի մէջ այլ ևս այն քնքնշութիւնները
չեմ նկատում, մինչև անգամ նա պատշաճ քաղաքա-
վարութեան ձևերն էլ չի յարգում:

ՄԱՀՏԵՍԵԱՆ

Թէև ես էլ ոչինչ չեմ նկատել, բայց ուրիշներին
լսելն էլ լաւ է. նրանք ի՞նչ շահ ունին այդպիսի ստեր
հնարելու: Սուլթանեանը, որ մեր շրջանում ամենից

զիտունն է՝ նա «հետեւելով նրա հիւանդութեան զա-
նազան աստիճաններին» եկել է այն եզրակացութեան,
որ նա խենթ է: Նա ասում է. «խենթութեան շատ
տեսակները կան. կան խենթեր, որոնց ամեն մարդ
էլ չի կարող ճանաչել, որ խկապէս նա խենթ է....»
Ուրեմն զգուշացիր, որդիս, եթէ պատահամք հանդի-
պէք իրար, սառը դէմք ցոյց տուր նրան և միշտ խու-
սափիր նրանից:

ԶԱՐԻԿ

Շատ բարի, հայրիկ.

(Մահաեսեան գնում է, մտնում է էմմանուէլ)

ԷՄՄԱՆՈՒԷԼ (սկսում է երգել)

Զկայ, չկայ, իմ Զարիկ,

Իմ սև հոգում մի վայրիկ,

Որ դու ափսոսեղ գնայիր

Եւ յաւիտեան մնայիր:

Ափսոսեղ դեեր են նստած,

Աչքները լայն բաց արած,

Միշտ համարձակ հակում են,

Որ քո մութքը արգելեն:

Իսկ դու, չքնադ, սիրուն կոյս՝

Ինչպէս լեռան արշալոյս,

Գնա, ուր սիրտդ կանչում է,

Գնա ուր սիրտդ կանչում է...

ԶԱՐԻԿ

Զարմացնում էք ինձ միանգամայն:

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Դուք էլ ինձ նոյնպէս:

ԶԱՐԻԿ

Ես ի՞նչ եմ արել:

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Դուք ինչ էք արել. ի՞նչ պիտի անէք,
Ինչ ձեր յարգելի քոյրերն են անում՝
Երգուել ու դրժել, ասել ու չանել,
Ամեն բոպէ մի նոր հով առնել
Եւ այդ հովերին յաւիտեան յանձնել
Ձեր կեանքի ղեկը. այսպէս չէ՞ միթէ:

ԶԱՐԻԿ

Դուք այնքան խիստ էք դատում մարդկանց որ...

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Այո և շատ խիստ, որովհետեւ դուք
Տեսնելու եկաք մի անանկացած
Վաճառականի դառն արցունքները
Եւ ոչ ձեր նախկին էմմանուէլին.
Սակայն ձեր դէմքը աւելի անմեղ
Գտնուեց, քան թէ ձեր հոգին՝ որի
Յանցանքը խկոյն մասնեց իմ ձեռքը:

ԶԱՐԻԿ (մի կողմ)

Բայց միթէ խենթը կարող է այսպէս
Մտքեր յայտնել, կամ մարդկանց սրտերը
Այսպէս գուշակել:

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Ինչ պիտի անենք
Յարգելի աղջիկ, որ մեզ հետ փարուած
Ժամանակ աչքներդ յառած չ'ընին
Ուրիշներին:

ԶԱՐԻԿ

Այդ ի՞նչ էք ասում դուք,
Յարգելի պարոն:

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Ասում եմ, որ մեր

Սրտերն այդ խնդրում սաստիկ յամառ են.
Նրանք շարունակ ապստամբուում են
Մեր խելքի դրած կապանքների դէմ.
Այն խելքի, որ շէնքը կառուցել են
Ձեր բիրտ, իմաստակ արտօնեալները,
Ի հարկէ ազատութեան դիմակի տակ:

ԶԱՐԻԿ

Ոչ, մենք ազատութիւնից օգտուում ենք
Այնպէս, հնչպէս մեզ թելադրում է
Մեր համոզմունքը:

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Այդ մասին կերթամ

Կը հարցնեմ ես տիկին Պլանշից՝
Որը առաջին անգամ լսելով
Ազատութեան ձայնն՝ ինչպէս վազեց նա
Սրբոյն Ամուրի շքեղ տաճարի
Գաղտնարանները վայելելու իր
Ազատութիւնը լիակատար:

ԶԱՐԻԿ

Այդ

Ես կասեմ, որ ինձ չի վերաբերում:

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Դուք ինչքան կուգէք ճախրէք երկնային
Արշալուսի մէջ. բայց հէնց որ հասնէք
Մի թզենու, ձեր ամբողջներն իսկոյն
Կը տիրեն ձեր հին, սիրուն մեղքերը:
(Խորամանկութեամբ մօտենում է նրան գրկելու նա
յետ է քաշուում:)

Հպատակում էք ձեր բնազդներին:

ԶԱՐԻԿ

Խնդրում եմ պարոն, հեռու ինձանից:

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Ինչո՞ւ օրիորդ, ինչո՞ւ այսպէս... երբ մենք մե-
նակ ենք. իսկ մօրդ ներկայութեան ապահովութեամբ
հազիւ թէ կարողանում էի ազատուել քո օղակներից.
դու դրդուած չե՞ս արդեօք այն բնագլխից, որ մօրդ
մօտերիտասարդութիւնից հասած վտանգը քեզանից հե-
ռու էր լինում. իսկ դու տարօրինակ կերպով ծաղրում
ես բնութիւնը, երբ գտնում ես անբնական մարդկանց
շրջանում... Ախ ի՞նչ տարօրինակ արարածներ էք.
գնացէք, օրիորդ գնացէք. դուք արդէն հանել էք ձեր
վրայից իմ գաղափարի հագցրած զգեստները, դուք
երևացել էք ինձ ձեր մերկութեամբ. դուք մի հրեշ-
տակ էք, երբ հագնուած էք մեր երազների ձևած
զգեստներով և մի դե էք, երբ երևում էք մեզ ձեր
մերկութեամբ: Գնացէք, ձեր մերկութեամբ կարող
էք ինձ սոսկալի կերպով ձանձրացնել:

ԶԱՐԻՎ (մի կողմ)

Այնուամենայնիւ սրանք երբէք
նենթի խօսքեր չեն:

(գնում է)

ԷՄՄԱՆՈՒԷԼ (մենակ)

Երանի էր քեզ, սի Աղէքսանդր,
Որ քո անսահման շքեղ երազներն
Մարմնացնելու համար բաւում էր
Քո եռանդը. օ, երանի և քեզ,
Ո՛վ Ողորմալիտ, որ որդոցդ հոգու
Այդ հաւումներին սահման էր դնում
Միմիայն ձիթենին... իսկ ես ի՞նչ անեմ...
Այն օրից, երբ որ աչքերիս առջև
Բացուեց այս անհուն տարածութիւնը՝
Տեսայ, թէ ինչպէս երկնային այն մութ

Անապատներում լուռ փողփողում են
Սիրուն աստղերը,
Տեսայ լուսինը լուսաւորելիս.
Աշտարակների մենիկ կատարներն,
Տեսայ հինօրեայ խաչարձանների
Պատռւածքներից կախուած թփերը,
Թէ ինչպէս երբեմն գիշերուայ ընդհատող
Ծովի հետ իրանց մեղմ խորհրդաւոր
Զրոյցն են անում,
Տեսայ թէ ինչպէս գետաքարերը...
Խոնարհած ջրի հարուածների տակ
Աղաղակում են ու սաստիկ կոծում
Իրանց անվախճան վշտից սարսափած...
Օ, հէնց այդ օրից հոգուս տիրեց մի
Սասկալի կսկիծ, ամբողջ մարմնովս
Անցաւ մի սարսուռ... Ես մերթ հոգուս այդ
Սաստիկ յոյզերից աղաղակում էի,
Մերթ ունում որպէս լեբան փոթորիկ՝
Եւ մերթ ստիպւում դուր կռիւ մղել
Մահուան ահարկու թաղաւորութեան դէմ,
Եւ ժամանակի բռնակալութեան
Եւ այն ամենի, ինչ սահմանել է
Մեզ համար Աստուծոյ յարատե կամբը...
Օ, երկինք, Աստուած, ինչու զրեցիք
Ամենատկար այս շինուածքի մէջ
Այս ըմբոստ հոգին, որը չը դիտէ
Երբէք խոնարհել ոչ ժամանակին՝
Յաւիտենականութեան, և մեր կեանքի
Կանոնների դէմ. ի՞նչ սարսափելի,
Ի՞նչ տաժանելի, ի՞նչ սոսկալի է,
Ամենայամառ այս երազներով,

Որ դուրս պիտի գամ երկնից կամքի դէմ:
 Կար մի ժամանակ, որ այս ցաւի դէմ
 Դուրս էի գալիս
 Մանկական անմեղ մի դառը լացով,
 Կամ կարծում էի այս ջերմ կրակը
 Կարող եմ հանգցնել մարդկանց ձեռքերով:
 Բայց ի՞նչ են մարդիկ և ի՞նչ արեցին.
 Չբաւականացան ինձ վիճակուած այս
 Ծանր տանջանքով, չբաւականացան
 Բնութեան ծաղրովն յաւիտենական՝
 Որի տակ հեծում էի անդադար.
 Չբաւականացան հակամարդկային
 Ամենատեսակ կեղտոտ ցոյցերով,
 Չբաւականացան իմ դէմ դուրս գալով
 Բորենու ծաղրով և ամենաշար
 Ու մարդասպան լիւրք կատակներով:
 Օ, այս ամենով չբաւականացան
 Այս վիճակիս մէջ սեւ մահուան տուփն
 Այն ողորմելի ու թշուառ եղբօրս.
 Ի՞նչ պիտի անեմ, ի՞նչ պիտի անեմ.
 Այժմ աւելի տանջում են ինձ իմ
 Ծնողները, որոնք հանգուցեալ եղբօրս
 Դիակի առաջ ընդունել էին
 Այնպիսի մի խեղճ ու կսկծալի
 Կերպարանք, որը այժմ դժուար թէ
 Ես կարողանամ երեւկայութեանս
 Մէջ առնել նրանց. եւ այնպէս էին
 Ծանր հառաչում ու աղաղակում,
 Որ կարծես մեռած աստղերը երկնում,
 Շփոթւում էին, գայթակղուելով
 Կեսնքի տարօրէն այս երևոյթից

Եւ ուզում էին յարութիւն առնել
 Լոկ, որպէս զի այս ցաւին մասնակցեն:
 Իսկ ես, մոռացած իմա մի անգամ
 Գրկում էի նրանց, սիրա էի տալիս,
 Մտածելով, որ մի գուցէ նրանք
 Այս ցաւը չտանեն և եղբօրս հետ
 Գերեզման մտնեն. բայց հազիւ քանի
 Մի օր է անցել, նրանք մոռացան...
 Եւ մոռացել են., ի՞նչ էք դուք մարդիկ.
 Կ'ասեմ, որ ճարպիկ գերասաններ էք՝
 Որ մի շատ ախուր ողբերգութիւնից
 Յետոյ կարող էք ներկայացնել
 Մի շատ խայտառակ կատակերգութիւն:
 (Գնում է)

ՎԱՐԱԳՈՅՐ

ԱՐԱՐՈՒԱԾ Բ.

(Վարսենիկի սենեակում) ՏԵՍԻԼ Ա.

(Մանում են Վարսենիկ և Սուլթանեան):

ՍՈՒԼԹԱՆԵԱՆ

Ասում են, մի քանի ժամանակ է, որ մեր սիրե-
 լի և պաշտելի եղբայրը՝ էմմանուէլը մի տարօրինակ
 դրութեան մէջ է. ես շատ ցաւում եմ և ցաւելով
 հանգերձ, հետաքրքրւում եմ իմանալ թէ հետաքրքրու-

թիւնը յանցանք չ'համարուի, արդեօք ի՞նչ պատճառ-
ներից է առաջացել, կամ Աստուած մի արասցէ, չի
հասել արդեօք այն աստիճանին, որ հարկ լինի նրանից...

ՎԱՐՍԵՆԻԿ

Զգուշանալ, ո՞ն ի՞նչ էք ասում:

ՍՈՒԼԹԱՆԵԱՆ

Ես աւելի շուտ ուզում եմ իմանալ նրա համար,
որ դէպի վատը տրամադրուած հետաքրքրութիւնս ա-
ւելի լայն չափեր չընդունի և իմանամ, որ դեռ ժամա-
նակ կայ նրան ազատելու:

ՎԱՐՍԵՆԻԿ

Ամենեին մի կասկածիր նրա վրայ, ինչ էլ որ
լինի, նա այնքան բարի է, որ ամենավատ վիճակի
մէջ կարող է իր թշնամուն անգամ ներել:

ՍՈՒԼԹԱՆԵԱՆ

Ի՞նչ ասացիր, թշնամուն, ո՞վ է այդ թշնամին:

ՎԱՐՍԵՆԻԿ

Դու ինձ լաւ չ'հասկացար, ես ասացի մինչև ան-
գամ թշնամուն:

ՍՈՒԼԹԱՆԵԱՆ

Հա՛ն, ներողութիւն, այդպէս ասացիր:

ՎԱՐՍԵՆԻԿ

Այո. բայց ի՞նչ կայ, մի գաղտնի ցաւ կարծեա
սաստիկ տանջում է քեզ, ինձ այդպէս է թւում:

ՍՈՒԼԹԱՆԵԱՆ

Ոչինչ. դարձեալ հետաքրքրութիւն, չնայելով որ
կան շատ տեսակի հետաքրքրութիւններ, բայց ես հա-
ւաստի եմ քո ունեցած կարծիքների մասին իմ վե-
րաբերմամբ: Այժմ կան մի քանի հարցեր, որոնք ի
հարկէ դարձեալ վերաբերւում են մեր սիրելի եղբօրը...
Դու իբրև նրա քոյրը՝ և ես, որ կապուած եմ քեզ

հետ այսպիսի անխղիւր կապերով՝ հետևաբար մեզ
երկուսիս միաւորող օղակը կարող է երկուսիս հաւա-
սար կերպով հաղորդել նրա ցաւը. ուրեմն իմ տուած
բոլոր հարցերի ամեն մի կէտին տուր իրան հետևող
բնական պատասխանը, այնպէս որ նրանք էլ չկրկն-
ուին և կտրեն միանգամայն վտանգաւոր կասկածների
բոլոր ճանապարհները, որպէս զի մենք միանգամայն
ապահովուած լինենք նրա խաղացած դերերի վերա-
բերմամբ:

ՎԱՐՍԵՆԻԿ

Ներողութիւն, դու շեշտում ես նրա խաղացած
դերերի մասին՝ ասացի, որ նա ընդունակ չէ ոչ ոքին
մի վրաս հասցնելու:

ՍՈՒԼԹԱՆԵԱՆ

Այդ ես զիտեմ, հէնց այնպէս ասացի, այժմ դի-
մենք հարցերին: Վաղճւց է, որ նա այդպէս է:

ՎԱՐՍԵՆԻԿ

Նա միշտ այդպէս է. բայց առաջ հիմիկուանից
մի քիչ աւելի մեղմ:

ՍՈՒԼԹ.

Իսկ այդ փոփոխութիւնը որքան ժամանակ է:

ՎԱՐՍ.

Լաւ չեմ յիշում, բայց մօտաւորապէս երկու ա-
միս:

ՍՈՒԼԹ.

Երկու ամիս... (Կարճ լուսթիւնից յետոյ) ա-
ռաջին և երկրորդ ամիսների մէջ ոչ մի փոփոխու-
թիւն չի նկատուում:

ՎԱՐՍ.

Ի՞նչ բանի մէջ:

ՍՈՒԼԹ.

Նրա վարմունքի եղանակների մէջ:

ՎԱՐՍԵՆԻԿ

Ոչ մի փոփոխութիւն. երբեմն խիստ, երբեմն մեղմ է լինում, բայց միշտ բողոքում է:

ՍՈՒԼԹ.

Ինչի՞ և ո՞ւմ դէմ:

ՎԱՐՍ.

Բոլորի, բայց և ոչ ոքի դէմ:

ՍՈՒԼԹ.

Ի՞նչպէս:

ՎԱՐՍ.

Նա բողոքում է տիրապետող կարգերի դէմ՝ բոլոր մարդկանց դէմ, ասում է որ նրանք բոլորն էլ չար են, աւելի քան չար. բացի դրանից նա ոչ ոքի հետ չի ուզում խօսել. անիծում է, մերժում է, սաստիկ բարկանում է, անա այդպէս է նա:

ՍՈՒԼԹ.

Դու ասում ես բոլոր մարդկանց դէմ. արդեօք նրա ասածների մէջ կողմնակի ակնարկներ չը կան, կամ չէ՞ն պատահում, այսինքն, խօսքը չի՞ մասնաւորում. խնդրեմ պատասխանիր:

ՎԱՐՍ.

Ոչ:

ՍՈՒԼԹ.

Այդ ի՞նչպէս կարելի է. ընդհանուր առիթների մէջ միշտ մի մասնաւոր առիթ կատարում է գերակշռող դեր. անպատճառ նրան մի մասնաւոր առիթ պիտի հասցրած լինի այդ դրութեան:

ՎԱՐՍ.

Ճիշտ այդ մասին ես ոչինչ չ'գիտեմ:

ՍՈՒԼԹ. (մի կողմ)

Օ՛ ի՞նչ ճարպիկ կերպով նա խոյս է տալիս հարցերից: Աստուած իմ Աստուած, չ'լի՞նի թէ սա էլ մի բան իմացած լինի և թագցնի ինձանից նրա տնելիքը, մանաւանդ սրա յարաբերութիւնն էլ ինձ հետ փոխուած է երևում.... Օ՛ մեղմացիր, ո՞վ ամենակարող երկրի, թող շարունակեմ հարցերս, մինչև կ'բռնեմ քո կոկորդից և կ'տապալեմ յաւիտեան: (Դէպի նա) Ասա, ո՞վ իմ հրեշտակ, եթէ կարծում ես ասածդ ճշմարտութիւնը կարող է մեր սէրուն արգելք դառնալ, դրան երբէք մի հաւատալ. եթէ ես ցանկանամ էլ, չեմ կարող զսպել իմ մէջ այն անհուն փափագը, որը այսպէս սոսկալի կերպով պաշարել է երեակայութիւնս, որ ես քոնը պիտի լինեմ յաւիտեան:

ՎԱՐՍ.

Բայց ի՞նչ ես պահանջում դու. նրա վարմունքի մէջ քո մի քանի հարցերի մասին պատասխան չը կայ:

ՍՈՒԼԹ.

Օ՛, երգուեցնում եմ քեզ մեր սիրոյ կրակով, ասա, նա իմ մասին ի՞նչ է ասում:

ՎԱՐՍ.

Մի շատ հասարակ բան, բայց....

ՍՈՒԼԹ.

Օ՛, մի կասկածիր, եթէ զգացմունքներին մի Սահարա հանդիսանայ՝ ես մի քայլով կանցնեմ նրա վրայից:

ՎԱՐՍ.

Մի՞թէ ամեն մարդ իրաւունք չունի դէպի մէկը՝ կամ միւսը համակրանք կամ հակակրանք տածել. դու այդպէս չ'ես:

ՍՈՒԼԹ.

Հնա, 'իհարկէ... հիմա հասկացայ, էլ ուրիշ ոչինչ
վԱՐՍ.

էլ ուրիշ ոչինչ:

ՍՈՒԼԹ.

Միմիայն նա ինձ ատում է:

վԱՐՍ.

Այո, բայց թող դա քեզ չ'վրդովի:

ՍՈՒԼԹ. (մի կողմ)

Օ՛ անամօթ սիրտ, անամօթ, ի՞նչ ես ուզում ա-
նել ինձ, դու չար կախարդ, որ ամեն բան վատ ես
գուշակում. հանդարտուիր: (Դէպի նա) Այժմ գնա
սիրելիս, այժմ ինձ մի քիչ մենակ թող. գնա տես
ինչ է անում մեր սիրելի եղբայրը:

վԱՐՍ.

Դու սարսափելի կերպով վշտացար. միթէ կա-
րելի է մի մարդու կարծիքից այդպէս տանջուել, դա
սէր կ'տանի մարդու:

ՍՈՒԼԹ.

Նրա հակակրանքը չէ, որ ինձ վշտացնում է. ես
գլխացաւ ունեմ, որը յաճախ կրկնում է շատ խօսե-
լուց յետոյ: Գնա, մի նեղանար ինձանից, ես ուզում
եմ հանգստանալ:

(Վարսենիկ գնում է:)

ՍՈՒԼ. (մենակ)

Ի՞նչ է բարեգործութիւնը... եթէ ես ուզենամ
բարի գործ կատարել՝ այդ անպատճառ կապ պիտի
ունենայ իմ փառասիրութեան հետ, որը հակում է
դարձեալ դէպի նիւթական առարկաները և որը եր-
կրաւոր ցանկութիւնների սահմաններից այն կողմը
չի անցնում: 'Իհարկէ, եթէ ես կարողանայի մի այն-

պիսի գործ կատարել, որ հասարակութեան ներկայ
հոգեկան տրամադրութիւնը միանգամայն բարձրա-
ցնէր, կարող էի այդ ցանկութիւններին աւելի լայն
ծաւալ տալ... Բայց որովհետեւ այդ անելու ոչ մի
հնարաւորութիւն չունեմ՝ ինչո՞ւ մանր-մունր բանե-
րով զրկեմ ինձ այն միջոցներից, որոնք դարձեալ կա-
րող են տանել ինձ դէպի այդ նպատակը: Ուրեմն եր-
կու միջոցներն էլ (չար կամ բարի) մարդուն տանում
են դէպի միևնոյն նպատակը՝ ինչո՞ւ չ'նտրել այն, որն
աւելի հեշտ է և ամեն մարդու հնարաւոր: Ինձ կ'մնայ
իմ նպատակներին հասնելու համար միջոցների խտրու-
թիւնը, որ անխտիր լինելու համար, ասում են— կարող
են խոչնդոտ հանդիսանալ հասարակական կարծիքը և
խիղճը. առաջինի մասին կասեմ, որ ես, այսպէս ա-
սած, առհասարակ ազատ եմ այն հասարակական ախ-
տերից, որոնք կարող են պատճառ դառնալ ինձ խան-
գարելու, կամ ազդելու: Իսկ երկրորդի մասին... հնա,
հնա, հա, ծիծաղա դալիս է... ես բազէի նման անհուն
բաւականութեամբ կ'ճաշակեմ որսիս միսը՝ ճաշակե-
լուց յետոյ նրա տանջանքի մասին ինձ հաշիւ կ'տամ.
կանցնի մի ժամ, մի նորն էլ տեսնելիս կ'մոռանամ
առաջինի տանջանքը և նորից կ'յարձակուեմ նրա վրայ...
ահա թէ ի՞նչ կարող է անել ինձ խիղճը: Ես մի վատ
միջոցով սպանել տուի էմմանուէլի եղբօրը, որի հետ
մի առանձին թշնամութիւն չունէի. ես այդ արեցի,
որպէս զի նա խոչնդոտ չ'հանդիսանայ ինձ տիրանա-
լու նրա քրոջ անաղին օժտի վրայ: Ճիշտ է, ես այժմ
սարսափելի կերպով տանջում եմ, բայց ինձ տան-
ջողը ամենակին խիղճը չէ, այլ այն կասկածը, որ իմ
կեանքին վտանգ է սպառնում էմմանուէլի կողմից:
Այլապէս ես հարիւր-հազարներին կ'սպանէի, եթէ այդ

երկիւղի սպառնալիքը չը լինէր և իմ բոլոր անգուսպ ցանկութիւնները կ'կերակրէի նրանցով. և ի՞նչ իրաւունք ունի մի չնչին ճնճողուկ ոչնչացնելու միլիօնաւոր միջատներ լցնելու իր ստամոքսը եթէ ես չունեմ անելու: Առ այժմ շատ միջոցներ ունեմ նրանից ազատուելու. իսկ եթէ ոչ, այն ժամանակ նրան էլ կը ուղարկեմ նոյն ճանապարհով, որտեղից գնաց նրա եղբայրը:

(Գնում է:)

ՏԵՍԻՆԷ Բ.

(մտնում է Բարա)

ԲԱՅԱ (մենակ)

Անշուշտ այստեղ մի ինչ որ գաղտնիք կայ. ես համոզուած եմ, որ մեր Արշակը իմ կամքին երբէք չի հակառակում. Տարածայնութեան և ոչ էլ մի կէտ Ձեմ երեւակայում պարոն Գէորգի Աղջկայ խնդրում իմ որդու կողմից՝ Նոյնպէս և նրանց: Որքան յայտնի է Ինձ, օրիորդն էլ համաձայն է. բայց թող օրիորդն էլ հէնց չ'համաձայնի. իմ դատողութեան հակառակ է այն. Որ ես մտածեմ. կարող է դուստրը իր ծնողների կամքին հակառակ Գնալ. թէև այժմ նորելուկ ձագերն Ձեն ուզում անգամ պատասխարուել Իրենց հարազատ մօր թեքի տակ, Ասելով, որ այդ իրենց ճնշում է, Թէ դա մեր խղճի ազատութեանը Հակառակ է. բայց թող մօր ճնշումը Նրանք չը տանեն, տեսնենք ի՞նչ կ'անեն...

Մարդո՛ւ, այ Մարդո՛ւ. չը կայ, այ Մարդո՛ւ, Չկայ որ չը կայ, գո՞րծքը կորաւ:
(Մտնում է Մարտիրոս)

Ո՞րտեղ ես յիմար, էնքան գոռացի
Կոկորդոս ձողեց:

ՄԱՐՏԻՐՈՍ (մի կողմ)

Էնէնց պատուով,

Որ ես գիտենամ. (բարձր) ինչ է, աղա ջան:
ԲԱՅԱ

Ո՞ւր է Արշակը:

ՄԱՐՏԻՐՈՍ

Ես նրա ճօրան եմ,

Երեխայ հօ չի, գիշեր ու ցերեկ
Ետեւիցն ընկած պահեմ, պահպանեմ.
Ահագին մարդ է. բա ես բան չունեմ:
ԲԱՅԱ

Այ աղայ, ես քեզ դուրս կը շարտեմ.
Ինչ հարցնում եմ, կարգին պատասխան
Տուր ինձ:

ՄԱՐՏԻՐՈՍ

Աղա ջան, լաւ, կ'պատասխանեմ:
ԲԱՅԱ

Գիշերն ինչպէս էր, լաւ հսկեցիք դո՞ւ:
ՄԱՐՏԻՐՈՍ

Այո, սկեցի. (մի կողմ) մօիցս գնաց,
Որ մատս կտրեմ, ցաւից մոմալ
Քունս չը տանի. ասեմ եղածը...
Հիմի թէ չասեմ.
Վաղը, միւս օրն
Սուսս դուրս կը գայ,
Նա ինձ կը բռնի

Տանից դուրս կանի,
Հաշից կը գցի,
Քաղցած կը մնամ,
Լաւ է, որ ասեմ: (գէպի նա)
Աղա, քեզ մեղա, քո Աստծուն մեղա.
Մտքումս գրի, որ հէնց այս գիշեր
Մատս կտրեմ, որ քունս չը տանի,
Իմանամ թէ նա ինչեր է անում,
Բայց մտիցս գնաց, էլի քնեցի.
Կէս գիշեր էր, որ էլի զարթնեցի.
Զարթնեցի տեսայ, որ նա այստեղ չէ.
Վազեցի գէպի էն թփոտ ձորերն,
Որ ման գամ գտնեմ, յանկարծ տեսայ էն
Սև քարափի տակն լուսնի շողքերը
Լուս էին տալիս ինձ, լաւ տեսնելու,
Թէ ինչ էր անում. իսկը նման էր
Դժոխքից փախած սատանաների.
Անյայտանանում էր քարերի տակին.
Երբեմն երևում, նորից չքանում.
Երբոր որ մօտեցայ, սաստիկ երկիւղից
Նա էնպէս գոռաց, որ ես սարսափից
Երեսիս վրայ ընկայ, որ չը տեսնեմ
էն երկիւղալի աչքերն ու երեսն,
Մօտեցաւ նա ինձ, շուտ խելքի գալով
Ձեռիցս բռնեց ու վերկացրեց,
Իրար հետ եկանք: Պատահում է, որ
Քնած տեղից այնպէս է նա վեր
Թռչում, կարծես թէ երազների մէջ
Սատանէքը փորին քացով տուեցին:
Էլ ինչեր ասես, որ նա չի անում:
Թռչնի մի ծւոց, կամաց ոտի ձայն,

Մկան խլրտոց, քամու շառաչմունք
Նրան էնպէս են սարսափեցնում,
Որ պառկած տեղից վեր է կենում նա
Ու էլ ինչ ասես գլխից դուս տալիս
Եւ ինձ հարցնում. — էս ի՞նչ ձայներ են:
Մէկ էլ էս կայ, որ շատ քիչ է քնում:
ԲԸԲԱ

Բահ, բահ. ինչեր ես ասում դու, այ մարդ,
Խօսքերիցդ թէ մէկն ու մէկը՝ կամ
Աւելի լինի, կամ պակաս, գիտե՞ս...
ՄԱՐՏԻՐՈՍ

Շատ լաւ, եթէ որ աւելի լինին
Ինչ կուզես արա. (մի կողմ)
Ի հարկէ այսպէս կը լինի ջահիլ ձիուն խամ կապի,
գարի տուր, օրն երկու անգամ թիմարի, գլխովը ման
տուր, ու մի հեծնել, պահանջի, որ գժութիւն
չ'անի: Ապա ես ինչո՞ւ չեմ գժութիւն անում. մի թող
ինձ նման մի կտոր հացի համար գիշեր — ցերեկ տան-
ջուի էս շոգ օրերին կրակի բոցերի առաջ, տեսնենք
էլ գժութիւն կանի՞, էլի ես լաւ եմ. տանջում եմ
չարչարում, բայց չեմ գժում: Ասում են, էս մե-
ծապատիւները պարսպ մնալուց ու շատ մտածելուց
գժում են՝ ա՛յ, ինչպէս էն պարոն էմանուէլն էլ
գժւել է: Էհ, էս ամենն էլ լաւ վերջ չեն ունենալ:
Աստուծոյ ողորմութիւնը հասնի էն երկուսին էլ, խեղճ
են, ջիւան են:

ԲԱԲԱ (բարկացած)

Որտեղ որ է շուտ գաիր, կանչիր տուն, սպա-
սում եմ, շուտ: (ինքն իրան) Էլ ի՞նչեր ասես, որ էս
անզգամ բաղբը չը պիտի անի մեզ:

գնում են

ՏԵՍԻՆ Գ.

(Մանուկ են Սուլթանեան և Սմբատ.)

ՍՄԲԱԹ

Գրագրութեանս վարձով պարէնս
 Անգամ չեմ կարողանում հայթայթել.
 Թէ ամեն դժուար ու վտանգաւոր
 Ձեռնարկներն այսպէս են վարձատրւում,
 Կը թքէի ես այդ բոլոր ապուշ
 Ձեռնարկողների ապուշ աչքերում:

ՍՈՒԼԹ.

Ի՞նչ ես շտապում. իւրաքանչիւր մի
 Մեծ ձեռնարկութիւն սկզբում դեռ ևս
 Ներկայացնում է շատ թերութիւններ.
 Թէ ձեռնարկողը պարտ և պատշաճ է
 Վարւում միշտ իր ձեռնարկած բանի հետ՝
 Ժամանակի հետ ձեռ ձեռի տուած
 Ուղղում է միշտ այդ թերութիւնները,
 Այն ժամանակը կարող եմ ասել
 Հասնում է նա իր նպատակին:
 Բայց թէ մեզ նման իր նպատակի
 Համար ընտրում է միայն մի ճամբայ,
 Այն ժամանակը հետեւանքների
 Պատասխանատուն ինքն է լինում միշտ.
 Եւ ինքն ըստ ինքեան նրա բողոքը
 Հաւասարւում է ոչնչութեան հետ:
 Մեր ձեռնարկածը՝ աստ, դրական
 Մի հետեւանքի հասել է արդեօք
 Մինչև այժմ:

ՍՄԲԱԹ

Տէր իմ! աւելին պիտի

Պահանջես ինձնից:

ՍՈՒԼ.

Այո, աւելին:

ՍՄԲԱԹ

Պարոն, վախեցիր յուսահատուածից:

ՍՈՒԼ.

Ինչո՞ւ վախենամ, քանի որ կիրքը
 Քեզ մէջ բանականութիւնից դեռ ևս
 Առաջ չի ընկել. Մի բան ենք անում,
 Ինչո՞ւ ենք անում. կտակած չը կայ, որ
 Թելադրուած մեր ներքին կեանքի
 Նախասահմանուած մի գործողութիւնից.
 Ինչո՞ւ միտին ենք ուզում անել.
 Դա էլ ունի իր ներքին պատճառներն,
 Որից խուսափելն անկարելի է:
 Ուրեմն ինչո՞ւ դու քեզ ուզում ես
 Նուստտացնել և քո արածին
 Քեզ չը համարել պատասխանատու:
 Թէ հանդիպեցինք անյաջողութեան,
 Այստեղ քո կամքն էլ դեր է խաղացել
 Քեզ վրայ էլ կայ պատասխանատուութիւն.
 Իսկ եթէ չէ, դու պատասխանատու
 Պիտի լինիս քո ինքնասիրութեան
 Դէմ:

ՍՄԲԱԹ

Այ մարդ, ես էլ պիտի սպասեմ,
 Սրանք բոլորը լաւ չեն գուշակում.
 Է՛հ մնաս բարեւ:

գնում է:

ՍՈՒԼ. (մենակ)

Գնաս բարեւ:

Անհրաժեշտութիւնից եթէ ստիպուած
Այդ մարդուն տայի հոգուս պատկերը,
Երկար նայելուց գուցէ ձանձրանար
Եւ յուսահատուէր. ցոյց տար նա մարդկանց:
Աւանակի պէս չ'հասկացաւ նա ինձ:
Սրանք են ահա երեւակայածս
Մարդիկը, որոնք, կարծում, եմ գինուած
Աստուածային մի սրատեսութեամբ,
Դիտում են մաքիս բոլոր շարժումներն.
Ի՞նչ շնորհալի մտածողութիւն....
Էմմանուէլի մասին էլ նոյնն եմ
Մտածում, որ ինքս իմ դէմ գէնք եմ
Վերցնում. այն ինչ, նա մի խեղճ մարդ է,
Թերեւս ոչինչ չի մտածում անել,
Նրա ուրուականն յուսահատութիւնս
Հասցնում է սոսկալի չափերի:
Օ! դու անամօթ երեակայութիւն,
Որ ամեն բան այդպէս մեծացնում ես,
Ես քեզ կ'անջատեմ իրողութիւնից,
Որ այդպէս դաժան ու զարհուրելի
Գոյնեբով դու ինձ ներկայացնում ես:
Բահ, բահ, ի՞նչ է այդ անպիտան մահը,
Որի պատկերից այդպէս դողում ենք.
Ինչպէս յարատեւ մի վատ տանջանքից:
Իրողութիւնն և երեակայութիւնն
Միմեանցից այնքան հեռու են, որքան
Նեպտունը մեր այս երկրագնաւից:
Օ! ես կը հսկեմ այս յամառ արեան
Ամենաչնչին մի շարժման վրայ
Եւ այս անամօթ երեակայութեան
Երբեք թոյլ չեմ տալ սպրդելու իմ

Մաքերիս կանոնաւոր ընթացքի մէջ
Գործելու այնտեղ այսպէս զեղծումներ.
Ես կարող եմ իշխել ժամանակի վրայ.
Նրա արգանատում և ոչ էլ մի սերմ
Ձի կարող ծլել անյայտութեան մէջ.
Երեակայութիւնս արդարացնելու:
Ես այժմ ապրում եմ, նա էլ է ապրում
Ես անելիքիս իշխանն եմ. ինձանից եմ
Կախուած ինքս:

(Ներս է գալիս Բաբա)

Բարեւ, որդեակ իմ,

Ի՞նչպէս է արդեօք առողջութիւնդ:

ՍՈՒԼ.

Լաւ է, լաւ, հայրիկ, ինչպէս ամեն մարդ,
Ես էլ այնպէս եմ:

ԲԱԲԱ.

Իմ ցանկութիւնն էլ

Այդպէս է, որ դու միշտ ողջ լինիս:

ՍՈՒԼ.

Ես առողջ եմ, բայց... բայց ինչու ես դու
Հարցնում, հայրիկ:

ԲԱԲԱ.

Դու տարօրինակ

Հարցեր ես տալիս:

ՍՈՒԼ.

Ես, տարօրինակ...

Երբեք, ես էլի նոյն մարդն եմ, որ կամ:

ԲԱԲԱ.

Քեզ սիլ է ասում, որ դու փոխուած ես,
Միայն թէ ուրիշ տեսակ ես խօսում:

ՍՈՒԼ.

Ուրբ՞ջ... ինչ տեսակ:

ԲԱԲԱ.

Բահ, բահ, այ մարդ, դու
Խօսում ես ինչպէս մի խեղճ ցնորուած:

ՍՈՒԼ.

Վահ, միթէ, հայր իմ...

ԲԱԲԱ.

Ճիշտ մի ցնորուածի:

ՍՈՒԼ.

Ի հարկէ... բայց հայր, գիտե՞ս, առածը ասում
է, որ «մարդ մարդի դարդ չ'հասկանայ, կէս գիշերին
ժամ կ'կանչի:»

Ասա, դէ ի՞նչ ես ուզում ինձանից:

ԲԱԲԱ.

Էհ, որդիս, ես ասացի, որ դու այլայլուած ես,
դա ճիշտ է. բայց անպատճառ դա պիտի ունենայ իր
պատճառները և ես գիտեմ, որ այդ պատճառները
աւելի քան չնչին են: Նախ և առաջ մարդ մի քածի՝
որ մի քած է՝ քած, քած, գիտե՞ս, թոյլ չ'պիտի տայ
իրան վրայ իշխելու.~ իշխելու այդ աստիճան: Մի հա-
ւատալ կանանց. վայ քեզ, եթէ նրանք հասկացան քո
մի թոյլ կողմը, առանց մի որեւէ խղճի խայթ զգալու,
քո քայլերը ուղղելու են դէպի խենթանոցը, հասկա-
ցա՞ր: Սրանք մի կողմ. ի՞նչ արգելք կայ թէ օրիորդի
և թէ նրա ծնողների կողմից, որ հարցը այսքան ձգ-
ձգում ես:

ՍՈՒԼ.

Եւ ոչ մի արգելք:

ԲԱԲԱ.

Ուրեմն հէնց այս

Երեկոյ պէտք է իմաց տալ նրանց,
Որ պատրաստութիւն տեսնեն հարսնիքի:

ՍՈՒԼ.

Հարսնիքի ասացի՞ք...

ԲԱԲԱ.

Ի՞նչ տարօրինակ

Արարած ես դու, ի՞նչ զարմանալի:

ՍՈՒԼ.

Ջարմանալի չէ, ցատկելու համար
Ուժեղ ցատկիչներ պիտի ունենաս,
Արածիդ վրայով ցատկել կարենաս:

ԲԱԲԱ.

Դու խենթ ու խելառ բաներ ես ասում.

Սրանից յետոյ քեզանից անկախ

Պիտի կատարեմ, ինչ ցանկանում եմ:

(Բարկացած դուրս է գնում)

ՍՈՒԼ. (մենակ)

Օ', ուզում եմ մահ տալ այն ուղեղին, որի մէջ
այդպէս չի մոռացւում իմ արածները: Տեսնո՞ւմ էք
ինչպէս կենտրոնացած է նա գիշեր ցերեկ իր եղբօր
սպանման մտքի վրայ. օ, մինչև այն աստիճան, որ
իրաւունքը յանցանքի է փոխւում և իրաւատիրօջը
յանցաւոր դարձնում.. Միթէ մի յանցանքի համար
այսպէս գիշեր,- ցերեկ հալածում են առանց հանգըս-
տութիւն տալու, օ, միթէ, միթէ. մի պատուովի,
սիրտ իմ, մի պապակովի, լեարդ իմ. ախ Տանտալէս,
յիմար Տանտալէս, զժողք, եկ ընդօրինակեր կրճքիս
ներսը, որ սատանաները նրան տեսնելուն պէս լեղա-
պատառ յետ փախչեն:

(Գնում է:)

ՏԵՍԻ Լ Դ.

(Մանուս եւն էմմանուէլ և Վարսենիկէ)

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Միւս սենեակում ձայներ էր լսում,
Ովքե՞ր էին:

ՎԱՐՍ.

Ես և Սուրբանեանը,
Որը մի խնդրի առթիւ խնդրեց ինձ
Ընդունել իրան:

ԷՄՄԱՆՈՒԷԼ

Ի հարկէ, գիտեմ,
Երևի մեզ մի ծանօթ խնդրի, չէ՞.
Այդ ոգորմելուն ասա թող գնայ
Մտաւոր մարդութիւններ կատարի
Լուծել կարենալու առաջադրուած
Ծանր խնդիրն. գիտե՞ս որ նրա
Պագմած հաշեկշռի մէջ կարող են երևան գալ յան-
կարճ կարմիր թուանշաններ, լաւ մտաւոր մարդու-
թիւն չը կատարելու պէպքում:

ՎԱՐՍ.

Ախ, այդ ինչե՞ր ես ասում, եղբայր իմ:

ԷՄՄ.

Ո՞ր են ձարակներդ... լցրաւ սենեակդ
Ամեն տեսակի անասուններով՝
Թէ երկոտանի, թէ չորքոտանի,
Որոնք լինէին ամենալաւ տեսակի
Քծնողներից, որոնք կարողանան շատ
Անոյշ զրգիւններ հաղորդել լարուած
Զգերիդ. քեզ ի՞նչ, որ քեզ նմաներն
Մի ուրիշ տեղ իրենց արցունքը
Զէնք շինած դուրս կ'գան թուրք գազանների

Մուկնութեան դէմ. ախ, քեզ ի՞նչ, քեզ ի՞նչ՝
ՎԱՐՍ.

Օ', ի՞նչ հարուածներ, ես չեմ դիմանալ
Այս հարուածներին:

(Ուզում է դնալ)

ԷՄՄ.

Կանգնիր, մի կանգնիր
Տեսնեմ, ես կանանց հանձարն յարգում եմ
Այս երիզների ներդաշնակութեան մէջ.
(Տնողելով նրա փէշերը)

Ի՞նչ բարձր պատնէշ մեր ճաշակաւոր
Պոռնիկների դէմ, որ նրանց քնքուշիկ
Երեւակայութիւնը չը համարձակուի
Երբէք ոտանելու նրա վրայից.
Սպասիր քոյրիկ, նայեմ երեսիդ...
Օ', այստեղ, այստեղ... հայելին շատ վատ
Սխալ է գործել, ախ, ախ, զգուշիկ,
Անպէտք հայելի, այս մի քիչ տեղը
Շարք չի հասել, տուր, ջարդիր, փշրիր,
Փշրիր հայելին, քեզ անքնութիւն
Պատճառողը նա է:

ՎԱՐՍ.

Այս ի՞նչ խօսքեր են:

ԷՄՄ.

Ի՞նչ տարօրինակ արարածներ էք.
Մի չնչին բանից յափշտակուած էք,
Կապկանում էք դուք, կապկանում էք,
Ապա սկսում հարստահարել մեզ:
Ասա, ո՞վ է քեզ յիմարացրել
Այդպէս, ոհ, ասա — էպիկուրոսի
Մնած չար ու վատ

Կապիկները ամենավատը,
Ներոնի տիպարն և Անրիմանի
Յաջող գործիքը... բայց գիտե՞ս, հիմա
Թէ այս ընդհանր նա աստ երևայ,
Եթէ միմիայն նա փոխած լինի
Փողալատը, կամ թէ մօրուքին մի ուրիշ
Ձև տուած լինի, մի քանի յաջող
Ցնդաբանութիւն էլ անգիր արած՝
Այնպէս կարող է յեղաշրջել քո
Հոգին, որը իսկ կարող է թռչել
Առանց արգելքի սատանայի մօտ:
ՎԱՐՍ.

Ո՛հ, ես ի՞նչ անեմ, իմ մեղքերը քո
Մեղադրանքից աւելի փոքր են.
Ես դեռ այնքան էլ հասունացած չեմ
Առնելու համար դրանց առաջը:
ԷՄՄ.

Այո, բնութիւնն քո ներքին կեանքում
Ազատ բացել է իր լայն ուռկանը
Եւ որսում է նա միշտ այն ամենը,
Ինչ որ անյարմար է գալիս իրան
Չարաճճութեան:

ՎԱՐՍ.

Ինչո՞ւ ես հասցնում

Այդ ահուկ վիրաւորանքը ինձ:

ԷՄՄ.

Օ՛, ոչինչ, ոչինչ, գիտե՞ս հէնց վաղը
Կարծածդ շնորհալի գծերը՝
Փոքրիկ բերանը, կարմիր շրթունքը,
Ինչ, ինչ միջոցով սրանց ընչացքը,
Խոշոր աչքերը ու սուր մօրուքը,

Գանգուր մազերը, գունատ երեսը,
Քսան ութ տարիքը (ինչքան էլ դրանց
Տակը մի հրէշ թագնուած լինի)
Այնպէս կը փաթաթեն վերքերդ, որ եղբօրդ
Մահը ու իմ այս դրութիւնն էլ
Չեն բաց անիլ նրանց յաւիտեան:
ՎԱՐՍ.

Ախ, գլուխս ինչպէ՞ս պտոյտ է գալիս:
ԷՄՄ.

Սիրո՞ւմ ես նրան:

ՎԱՐՍ.

Չը գիտեմ թէ ի՞նչ

Պիտ պատասխանեմ:

ԷՄՄ.

Օ՛, կուզէի ես

Յամաքացնել այն պիղծ արիւնը,
Որ բորբոքուած է նրա պատկերով.
Պատուել ուղեղի այն պիղծ ծալքերը,
Ուր ապրում է այն շինական պատկերն.
(Բայց այդ արիւնը ու այդ ծալքերը
Պիտի մեռնին և իրենց մէջ պահեն
Դարձեալ դժողքի այն շան պատկերը
Աւանդեն հողին յաւիտենական.)
Քոյրիկ Վարսենիկ, դու լաւ իմացիր,
Եթէ այդ չնչին մարմնիդ գանգուածը
Ծաւալուէր մեր այս երկրագնդի չափ
Եւ իր աննշան մի կորած հիւլէի
Մէջ թագցնէր այն մարդու սէրը.
Հաւատացիր ինձ, կը գտնէի այն,
Կը տայի մահւան. ես չեմ թողիլ մեր
Մաքուր արեան հետ խառնուի այն պիղծ

Շնական արիւնն. ես չեմ թողիլ մեր
Ցեղը աշխարհին տայ ոճրագործներ,
Զեմ թողիլ, չէ, չէ:

ՎԱՐՄ.

Օ՛, եթէ նրա վրայ երկրագնաի չափ մեղքեր բար-
դուած լինէին, քո այդ խօսքերից մէկը կ'մաքրէր
դրանց և կ'դարձնէր աւելի մաքուր քան ձիւնը:

(Ընկնում է աթոռի վրայ յուսահատ)

ԻՄՄ.

Բահ, վեր կաց, վեր կաց:

(Նոյն բոպէին մտնում է Սուլթանեան)

ՍՈՒԼ.

Ներեցէք պարոն, ձեզ խանգարեցի:

ԻՄՄ.

Ի՞նչ կայ:

ՍՈՒԼ.

Կարծում եմ այսօր պիտի վերջանայ

Ստորագրութիւնը...

ԻՄՄ.

Ստորագրութիւն:

ՍՈՒԼ.

Այն նոր կազմուած ընկերութեան՝ որը...

ԻՄՄ.

Յայտնի չէ ինձ այդ:

ՍՈՒԼ.

Ախ, ներողութիւն,

Կարծեցի, որ ձեզ յայտնի կ'լինի,

Ներեցէք խնդրեմ:

(Դուրս է գնում)

ԻՄՄ. (մի կողմ)

Նայեցէք քրոջս, այսքան ասածներս

Ի՞նչ ազդեցութիւն գործեցին վրան.

Նայեցէք. թէ և նա բռնի կերպով

Աչքերն ուզում է յարմարացնել

Իմ տրամադրութեան. բայց հոգին երբէք

Չի թագնւում. և դէմքի վրայ պարզ

Նրկում է, որ արդէն փոխուեց նա:

(դէպի նա)

Քոյրիկ, լսիր ինձ, մի վերջին խօսք էլ:

ՎԱՐՄ.

Ինձ մէջ ինչ որ կար, արդէն մեռցրիր.

Ինձ համար ոչինչ, էլ ոչինչ չը կայ:

ԻՄՄ.

Քնա պարոնիդ ասա, որ բռնի ձեռք բերածները
խաղաղութեամբ չեն վայելում. գնաս բարե:

(Վարսենիկ գնում է)

ԻՄՄ. (մենակ)

Դիմում եմ քեզ, հոգիս! Եթէ ապրում ես դու
փծուն նիւթերի փոխանակութեան, կամ նրանց զա-
նազանա կերպ շարժումների մէջ և նրանց բնաւորու-
թեան հնաւանքն ես, ինչո՞ւ ես այդպէս անհունօրէն
հակում դէպի բարձրը, դէպի ճշմարիտը, դէպի ար-
ժանաւորը. իսկ եթէ այս տանջւող մեր նիւթեղէն
զանգւածը լոկ միայն մի պատրիշ երևոյթ է և դու
կաս, յաւիտեան ապրում ես առանց գեղիս նիւթերի
օժանդակութեան, և յաւիտենական ժամանակները
ցոլացած են քեզ մէջ իրենց իմաստութեամբ, և քո
խիստ քննող աչքերի առաջ դողում է տիեզերքը իր
գաղտնիքներով, ցոյց տուր ինձ քեզ մի անգամ, ազա-
տիր ինձ այս ահռելի վայրկենից. յայտնուիր ինձ ե-
րազներում, կամ ինչպէս կուգես. ասա ինձ. ինչո՞ւ
եմ ես այսպէս տանջւում. և ասա ինձ, ով մահացրեց

իմ եղբորը: Իմ տկար դատողութիւնը ստիպում է ինձ
կասկածել Սուլթանեանի վրայ և ես ահռելի կերպով
օրէց օր բարդում եմ ինձ վրայ կասկածի հետեանք-
ները. օ՛, եթէ կասկածս չ'արդարացաւ և ես երևացի
ներա դէմ մի ստոր զրպարտիչ՝ օ՛, սարսափելի է. յայտ-
նուիր ինձ գոնէ երազներում ու ասա ճշմարտութիւնը:
(գնում է:)

ՏԵՍԻՆ Ե.

(Մտնում են՝ Հեղինէ և Վարսենիկ)

ՀԵՂԻՆԷ

Ասա տեսներք, քեզ ի՞նչ է պատահել:

ՎԱՐՍ.

Ախ, մի հարցնի:

ՀԵՂԻՆԷ

Էմմանուէլի

Մօտ էիր արդեօք:

ՎԱՐՍ.

Այո, նրա մօտ.

ՀԵՂԻՆԷ

Ի՞նչ ասաց նա քեզ.

ՎԱՐՍ.

Ի՞նչ պիտի ասի,

Աւելի լաւ էր առանց յանցանքի

Ինձ հարիւր անգամ կաղախանի մօտ

Տանէին, քան թէ այդպիսի խօսքեր

Հսէի նրանից. — վայ, ի՞նչ խօսքեր:

ՀԵՂԻՆԷ

Ասա, ի՞նչ ասաց:

ՎԱՐՍ.

Որպէս թէ մարմինս

Ծածկուած ամենատեսակ զգուելի
Պալարներով, ես ընկած լինէի
Շանթերի տակ ու շանթերից ոչ մէկն
Ձը վրիպէր իր խիստ ու ահռելի
Նպատակից:

ՀԵՂԻՆԷ

Դէհ, ասա տեսներք ինձ,

Ի՞նչ պատճառների վրայ հիմնուած:

ՎԱՐՍ.

Ձը գիտեմ, այն — ի՞նչ շատերի համար

Մի շատ հասարակ ու սովորական

Բան է՝ ինձ համար նա մի ոճիր է,

Անառակութիւն և արժանի է

Ամենատեսակ նախատինջների:

ՀԵՂԻՆԷ

Նա Սուլթանեանի վրայ էր խօսում:

ՎԱՐՍ.

Թէ Սուլթանեանի և թէ բոլորի,

Նրա խօսքերին հետևում է այն,

Որ մարդը ոչ մի կիրք չի ունենալու,

Որ ապրելու է անապատներում

Առանց ցանկութեան, առանց իղձերի:

ՀԵՂԻՆԷ

Դ սէր Աստուծոյ, որդեակ, չասես այն

Սուլթանեանի մօտ, ինչ որ լսել ես.

Ոհ, ես կ'աղաչեմ, կ' ինչդրեմ նրա

Ընկերներին, որ համոզեն նրան

Հաշտուելու Սուլթանեանի հետ:

ՎԱՐՍ.

Մայրիկ, այժմեան մարդիկը այլևս

Չեն կերակրւում անոյշ խօսքերով,

Թող դան ցաւերը, ինչ անելու են
Թող շուտով անեն:

ՀԵՂԻՆԷ

Մի յուսահատուիր

Եւ վստահ եղիր, որ նա կը զոհի
Իր ընկերներին, թէկուզ հէնց իրան
Համոզմունքները, դու վստահ եղիր:

(Գնում են)

ՏԵՍԻՆ 2.

(Լերան մի բարձունքի վրայ, աւերակ վանքի մօտ)
(Մտնում են ԼԵՈՆ և ԵՐԼԱՆԴ):

ԵՐԼԱՆԴ

Արդարացնելով այդ Սուլթանեանին,
Մեր նստատակին երբէք չենք հասնիլ.
Նախ, որ այդ մարդը անմեղ չէ երբէք.
Երկրորդ, մի ուրիշ հոգեբանական
Կէտ կայ՝ որ մի մարդ, եթէ միւսի
Հետ լաւ յարաբերութեան մէջ չէ,
Կամ ատելութիւնը հասել է անեղ
Չափերի, պէտք է այն ժամանակը
Շատ զգուշ լինիլ հակառակորդի մօտ
Հակառակորդի մասին ունէ
Մի լաւ բան ասելիս. այլապէս մենք
Խնդրին աւելի մի վատ կերպարանք
Տուած կը լինինք:

ԼԵՒՈՆ

Ինչո՞վ է արդեօք

Մեզաւոր այդ Սուլթանեան ըսածդ:

ԵՐԼԱՆԴ

Մարդ ճանաչելում դու միամիտ ես.

Տես նա ի՞նչպէս է խաբում խեղճ մարդկանց.
Մի ունէ յանցանք կատարելու
Դէպքում նա իսկոյն խոստովանւում է
Մարդկանց առաջին և սովորաբար՝
Ի հարկէ, իսկութիւնն ազաւաղելով:

ԼԵՒՈՆ

Ասացէք, ինչո՞ւ այդպէս կ'են ան:

ԵՐԼԱՆԴ

Այդպէս անելով նախ նա ուզում է
Հաւատացնել մեզ, որ ինքը լաւ
Յատկութիւնների տէր է. (այսինքն
Իր պակասութիւններն չի ծածկում) երկրորդ
Այս է, լաւ լսիր. նա ճանաչում է
Մարդկանց թոյլ կողմը. մի մարդու արած
Եթէ ուրիշն է հաղորդում մարդկանց
Տպաւորութիւնը զօրեղ է լինում.
Մարդիկ նրա դէմ ոտի են կանգնում.
Իսկ ինքն առաջուց խոստովանուելով
Իր արածները՝
Յետոյ ուրիշէ արածներն իրանց
Զօրութիւնն արդէն կորցնում են և
Այդպիսով նա միշտ ազատւում է
Հասարակութեան նախատրիքներից.
Դա գրաւական կը լինի նրա
Անկեղծութեանը այն ժամանակ, երբ
Զի կրկնիլ նորից այն արածները,
Որոնց մասին միշտ խոստովանւում է:

ԼԵՒՈՆ

Ինչ կուզէ ըլլայ, պիտի համոզել.
Պիտ հաշտեցնել, որ բարդութիւններ
Զը ծագին:

(Մանուկ է Էմմանուէլ)

ԷՄՄ.

Բարեւ, սիրելիք, ինչպէս
Տեսնում եմ, արդէն ձեզ էլ է սկսել
Հետաքրքրել այս Հնաշխարհիկ
Սիրուն վայրերը.

Այնտեղ հայեցէք. երազհովիտներ,
Փրփրուն վտակներ, արշալոյսի հետ
Թափառող հովեր, էլ ի՞նչ է պակաս:

ԵՐԻԱՆԴ

Չափից դուրս ուրախ ես երևում ինձ
Այսօր:

ԷՄՄ.

Եւ ինչո՞ւ ուրախ չը լինել.
Ամէն առաւօտ երբ ոսկի շողերն
Ուրախ դողում են այն հեռում կանգնած
Մեծ ժայռի գլխին և դողդողալով
Աշագ թռչում են ձորում փրփրացող
Ալիքների մէջ՝ դա ինձ համար մի
Բախտաւորութիւն է,
Մոռացութիւն է բերում ինձ համար...

ԼԵՒՈՆ

Այ, ճիշտ համեմատ մեր տրամադրութեան:
ԷՄՄ.

Ինչու չէ, մօռյալ Ալպիոնի որդին
Ինքնամոռացութիւն չէր ցանկանում,
Բանաստեղծներն էլ հերարձակ կուսի
Հերքի ստուերում ուզում են քնել,
Մոռանալ ընդմիշտ սև սատանային.
Եւ ես էլ իբրեւ մի խեղճ արարած,
Որ եկել եմ ապրելու աշխարհում,

Մտքիցս պիտի հանեմ անցեալը,
Օգտուիմ Աստուծոյ արարածներից.
Ես հօ մենակ չեմ, որ պիտի դողամ
Այն ամենի դէմ, ինչ կատարում է
Մեր ժամանակում. չէ, ես մենակ չեմ:

ԵՐԻԱՆԴ

Ախ Էմմանուէլ, Էմմանուէլ:

ԷՄՄ.

Բահ, եթէ մարդիկ չը մոռանային,
Հօ չէին կարող երջանիկ ապրել.
Մենք էլ բնութեան խեղկատակներս՝
Որ խորխորում ենք մեր կամքի ոյժով....

ԵՐԻԱՆԴ

Սիրելի ընկեր, մենք երեւի քեզ
Վերաւորում ենք մեր տրամադրութեամբ:
ԷՄՄ.

Ձէ, չէ, սիրելիք, հաւատացէք չէ.
Ես հասկանում եմ, որ մեր սփռազործ
Ժամանակն այնքան վճռական է
Եւ կտրուկ իր լիբբ արարքների մէջ,
Որ անկարող է բոլորիս մէջ էլ
Չյարուցանել նոյն տրամադրութիւնն:
Մի բանի համար միայն ցաւում եմ,
Որ մեզ կարող են տրամադրել,
Որ մեզ մարդիկ կարող են համոզել
Եւ աղաւաղել ճշմարտութիւնը:

ԼԵՒՈՆ

Ի՞նչ բանի մասին:

ԷՄՄ.

Ասացէք խնդրեմ,
Այդ Սուլթանեանի մօտ չէ՞ք եղել դուք:

ԼԵՒՈՆ

Ախպար, ծածկելու մենք բան մը չունինք.
Թէ այդ Սուլթանեան և թէ ան ամեն
Կը խօսին յօգուտ քո բարօրութեան.
Եւ կուզեն ընդ միշտ հեռացնել էն
Ամեն պատճառներ, որոնք կարող են,
Թէկուզ թոյլ կերպով, ազգել հոգուդ
Տրամադրութեան վրայ:

ԷՄՄ.

Այդ գիտեմ.

Չարիքների հետ ով որ հաշտուում է.
Նա ազատում է իր խեղճ գլուխը.
Ով ամեն ինչի հետ յարմարում է,
Հեշտացնում է թշուառ վիճակը:

ԼԵՒՈՆ

Այդպիսի բաներ երբ և իցէ քեզ
Չենք առաջարկեր:

ԷՄՄ.

Ասացէք, մայրս

Ձեզ ի՞նչ է ասել, ի՞նչ պիտի անեմ:

ԵՐԻՆՆԻ

Նախ, էմմանուէլ, աստ ինձ, թէ ի՞նչ
Կարծիք ունիս հաշտութեան մասին:

ԷՄՄ.

Շատ չարիքների առաջը առնող
Բաւարար միջոց:

ԵՐԻՍՆԻ

Ներողամտութեան

Մասին ի՞նչ կասես:

ԷՄՄ.

Պիտի միշտ ներել...

Այ մարդ, ես պիտի շատ յիմար լինեմ
Դրան հակառակ լինելու համար,
Թերութիւնների համար եթէ պատժես
Հուսանի դերը պիտի ստանձնես
Խեղճ քնած թռչնոց վերաբերմամբ:

ԼԵՒՈՆ

Աղէկ. ուրեմն բան մը չէ կարող
Արքելք ըլլալ քո և Սուլթանեանի
Հաշտութեան:

ԷՄՄ.

Ասացիր Սուլթանեանի

ԼԵՒՈՆ

Ինչո՞ւ զարմացար:

ԷՄՄ.

Բա չը զարմանամ,

Այ մարդ, ի՞նչ ունինք մենք իրարու դէմ,
Կամ միթէ՞ թեթե մի ատելութիւն
(Այն էլ իմ կողմից...) առաջացնել
Կարող է այդպէս մի ծանր խնդիր,
Որ այսքան մարդկանց զբաղեցրել է.
Անկեղծ խօսեցէք, ասացէք ի՞նչ կայ:

ԼԵՒՈՆ

Կը հաւատացնենք, որ ոչինչ չը կայ.
Մենք ասացինք որ մեր ցանկութիւնն է
Վերացնել էն բոլոր պատճառներն,
Որոնք կարող են խանգարել հոգուդ
Խաղաղութիւնը:

ԷՄՄ.

Խօսում էք ինձ հետ

Ինչպէս հիւանդի հետ, բայց այդ ոչինչ.
Մենք դառնանք կրկին ներելու խնդրին.

Ասացէք խնդրեմ, մենք արդեօք պիտի
Մի նշանաբան ունենանք միայն
Ներելու խնդրում բոլորի համար
ԼԵՒՈՆ

Ինչո՞ւ չէ:

ԷՄՄ.

Գայլերին քշէք ոչխարների մէջ,
Թողէք գիշապան ինչքան որ կուգեն,
Դուք էլ անտարբեր կանգնէք նայեցէք.
Եւ ինչո՞ւ չը լինել այդքան անտարբեր,
Պատճառ, գայլային սկզբունքն նոյնքան
Հին է, որքան իր, գայլի ծագումը.
Անշուշտ մենք նոյնքան էլ հին լինելով
Որքան որ գայլն է՝ մեր գգայարանքներն
Պէտք է որ արդէն լաւ ընտելացած
Լինին նրանց վատթար արարքներին.
Եւ մեր խիղճն էլ շատ վաղուց հաշտուած
Անխուսափելի սկզբունքների հետ:

ԵՐԻԱՆԴ

Ճիշտ է, մենք միշտ չարագործութիւնը
Աչքով տեսնում ենք, բայց անտարբեր ենք
Մնում նրա դէմ:

ԼԵՒՈՆ

Բայց մարդը գայլ չէ,

Պիտի սպասել. ժամանակը ազ
Ամենը կը հարթէ:

ԷՄՄ.

Թէ դուրս չը քշէնք

Չարագործներին, անառակներին.

Արթուն ու պատրաստ պիտի մնալ միշտ

Այդ չարագործների վերաբերմամբ.

Երբ մտածում եմ, որ մարդիկ նորից
Պիտի զբաղուին այդ հրէշներով՝
Հաւատացէք ինձ, խելագարում եմ.
Մինչև երբ արդեօք թշուառ մարդկութեան
Իրաւունքները արհամարհելով,
Մարդուին դրանք այդ սև մտքերի մէջ.
Ստեղծել տուին մարդկանց օրէնքներ,
Ստեղծել տուին և սկզբունքներ,
Բայց նրանց հիւանդ, սև դիտումները
Մարդկանց այդ բոլոր զիջումների մէջ
Սահման չը գտան. այդ դիտումները
Ամեն մի տեղ էլ ճարակ են փնտռում,
Սրբութիւնն անգամ զէնք դարձնելով.
Ինչպէս մի մոլի եկեղեցական,
Որն աստուածային սպասաւորութեան
Մէջ՝ սիրտը դարձեալ դառնում է դէպի
Այն գանձանակը, որտեղ տեղում են
Արծաթ դրամներ: Ի՞նչ է այդ մարդը
Գիշեր ու ցերեկ զբաղուել իր
Անճաւարութիւնով. անհուն եռանդով
Ստիպում է մեզ ու ուրիշներին
Զբաղուել իրնով, իր խնդիրները
Միշտ մէջ տեղ դնել, ուրիշներինը
Զը ճանաչել. էհ, դա լաւ նշան չէ.
Դա կարող է ինձ և ուրիշներին
Ենթադրութիւնների առիթ տալ.
Ասէք, որ չանի, թողնի այդ բանը:

ԼԵՒՈՆ

Ուրեմն դու այդ խեղճ Սուլթանեանը
Կը համեմատես ոճրագործներու հետ.
Ի՞նչ տարբերութիւն կայ անոր ու աս

Սովորական մարդկանց մէջ. տակաւին
Ան մեր զործունէութեան սկսած է
Մասնակցել և մեծ եռանդ ցոյց կուտայ:
ԷՄՄ.

Օ՛ եռանդ, եռանդ.
Եռանդն էր, որ խեղճ Ներսիսն ձգեց
Սատանայի գիրգը. եռանդն էր, որ հրէայ
Յովսէփի որդու իշխանութիւնը
Տարածեց յաւիտենականութեան վրայ
Եւ յաւիտենական մտքերի հերոս
Դարձրեց նրան: Բայց դուք, սիրելիք,
Զգուշացէք միշտ մասնաւոր
Երևոյթներէջ հանել ընդհանուր
Եզրակացութիւն. ճշմարտանման
Մի երևոյթ դուք երբեք չընդունէք
Յաւիտենական ճշմարտութեան տեղ.
Զառաջնորդուէք դուք թերի մտքերով
Տրամադրութեամբ, ինչպէս անում են
Մեր ժամանակի դատարկագլուխ
Հրապարակախօս քննադատները,
Այդպիսի արարքը վտանգ է սպառնում
Մեր թշուառ դարու բարոյականին.
Քանի որ յայտնի մի գաղափարական
Կարող է այդ սուրբ գաղափարը
Հովանոց շինել, արեւից ազատ,
Նրա ստուերում շատ մտքեր անել:

ԼԵԻՈՆ

Բայց մենք անոնց ի՞նչ պիտ պատասխանենք,
Որոնք կսպասեն ձեր պատասխանին:

ԷՄՄ.

Վահ, ա՛յ մարդ, մի՞թէ այդ բոլորի էլ

Ցանկութիւնն այն չէ, որ հանդիստ լինեմ.
Ասացէք դրանց, որ ամաչում եմ,
Նրա հետ ոչինչ ես չեմ ունեցել.
Իսկ երբ որ, Աստուած մի արասցէ, մենք
Մի բան ունենանք, այն ժամանակը
Կը տեսնենք միմեանց:

ԼԵԻՈՆ

Ուրեմն այդպէս,

Է՛հ ֆաք բարև:

ԷՄՄ.

Դէհ գնաք բարև:

(Երևանդ և Լեոն գնում են)

ԷՄՄ. (մենակ)

Ո՞ւմ դէմ են այսքան մաքառում մարդիկ,
Բնութեան թերի օրէնքների դէմ,
Մարդկութիւնը նուաստացնող
Պայմանների դէմ, ոչ... այս մարդկանց համար
Սրբազան հաստատութիւններն էլ
Մի մի ընդարձակ զինանոցներ են,
Լի ամեն տեսակ վատթար գէնքերով,
Որ իւրաքանչիւրն, ընտրելով մէկը,
Լիբր խրոխտութեամբ դուրս է գալիս
Դժբախտութեան դէմ, կազմուած ու պատրաստ.
Ես, որ մինչև այժմ կարծում էի թէ
Մի բարի մարդ եմ, սրբութեան անւամբ
Խրոխտում էի խեղճ մարդկանց առաջ.
Այժմ այս ի՞նչ դեր եմ ստանձնել ես,
Զեմ հաւատում, մարդկանց ամեն մի խօսքիցը
Ենթադրութիւններ եմ հանում,
Պահում եմ մտքումս մարդկանց խօսքերը
(Ի հարկէ զործածուած լոկ որպէս խօսք)

Որ տեղը գայ, իբրեւ զէնք գործածեմ...
 Իմ ապօրինի սեւ կասկածների
 Վրայ հիմնուած միշտ մաքառում եմ
 Սրա նրա դէմ անխնայ կերպով.
 Նուաստացնում եմ մարդկանց դէմ նրանց
 Ամենաճարպիկ համեմատութիւններով.
 Բահ, միթէ նրանք էլ այսպէս չէն անում,
 Որոնց դէմ ուղղուած է իմ շանթերը.
 Չէ՞ որ մեզանից ով որ ուզում է
 Ոչնչացնել ընդ միշտ չարիքը,
 Չարիք գործելուց պիտի խուսափի:
 (գնում է:)

ՏԵՍԻ 1 Է.

(Մտնում են Վարսենիկ ու Չարիկ.)
 ՎԱՐՍ.

Ասա ինձ, խնդրեմ, եղբայրս քեզ հետ
 Չի՞ փոխել իր նախկին յարաբերութիւնն:
 ՉԱՐ.

Ինչի՞ համար ես հարցնում, քոյրիկ:
 ՎԱՐՍ.

Դա մեզ համար շատ, շատ կարեւոր է:
 ՉԱՐ.

Նախ ասա զու ինձ, թէ նշանածդ
 Արդեօք առաջւայ նման քեզի էլի
 Սիրում է, թէ ոչ. ես էլ քեզ կասեմ,
 Ինչ իմանում եմ:

ՎԱՐՍ.

Դու կասկածում ես:

ՉԱՐ.

Չարմանալի է, մեզ մեղադրում են

Մեր թեթեամիտ արարքների մէջ՝
 Անհաստատ սիրոյ, թուլամտութեան
 Եւ հազարաւոր այսպէս բաների,
 Այն ինչ իրանք են տեղի տալիս հէնց
 Այդպիսի կարծիք ունենալու մեզ
 Իրանց վրայ: Դու հաւատում ես այդ
 Սուլթանեանին և վստահ ես որ նա
 Սիրում է այնպէս, ինչպէս ասում է:
 ՎԱՐՍ.

Ուրիշ կերպ երբէք լինել չի կարող:
 ՉԱՐ.

Դու քեզ խաբում ես. չը կայ աշխարհում,
 Եւ չի էլ եղիլ մի կին, որն իր
 Ամենասիրելի ու հաւատարիմ
 Ամուսնու գրգռում, հոգեւոր մէջ,
 Չը կասկածէր նրա հաւատարմութեան
 Վրայ:

ՎԱՐՍ.

Սակայն իմ սէրը այնպիսի
 Սէր է, որին միշտ կասկածից հեռու
 Պիտի պահել. բայց մի թագցնիր, ինձ
 Ասա. ինչ գիտես:

ՉԱՐ.

Եթէ քո սէրը

Կասկածից հեռու պիտի պահել միշտ,
 Անկարելի է պարզել նրա դէմքն.
 Կանայի սէրը արբուն հասակում
 Մի առ ժամանակ ոչինչ չի տեսնում.
 Նա կոյր է նոյնիսկ ապացոյցների դէմ:
 ՎԱՐՍ.

Խղճա ինձ, ասա, ասա ինչ գիտես.

Ես կը հաւատամ ինչ էլ որ ասես:
ԶԱՐ.

Խոստովանութիւն, հաւատարմութիւն
 Եւ հաղորաւոր այսպիսի բաներ
 Նրանց համար լոկ միջոցներ են
 Հարթելու համար իրենց ցանկութեան
 Ճանապարհները. ոհ, մի հաւատալ
 Դրանց. ես շատ ապացոյցներ ունիմ.
 Այդ Սուրբանեանը հաղարների մօտ
 Սէր է խոստովանել. մի հաւատալ:
ՎԱՐՍ.

Եւ այդ ճիշտ է... ախ, ինչ կը լինէր որ
 Այդ ճիշտ չը լինէր:
ԶԱՐ.

Տղամարդկանց մէջ
 Հաւատում էի ես Կարոյի սիրուն՝
 Որի մասին դու շատ բան ես ասել,
 Բայց որ դու նրան դժբախտացրիր:
ՎԱՐՍ.

Ես նրա մասին շատ քիչ եմ ասել.
 Իսկապէս նա մի Ռօմէօ էր.
 Լսիր, մի անգամ թէ խեղճը ինչպէս
 Ներկայացաւ ինձ, ահ, չեմ մոռանում:
 Մի օր, սրանից ճիշտ հինգ ամիս տուալ
 Եկաւ նա ինձ մօտ. ինչ ողորմելի
 Դրութեան մէջ էր, Աստուած իմ, Աստուած.
 Կարծես թէ նա մայր բնութեան քնքոյշ
 Գրգիցը զրկուած՝ յանկարծ ընկել էր
 Մի օտար աշխարհ. զգայարանքներին
 Անսովոր, ծանր տանջանքների մէջ:
 Դողդողում էր նա, կարծելով գուցէ

Նորից կը բռնեն կը ձգեն այնտեղ.
 Եւ չէր խօսում նա. աչքերը կարծես
 Յակամայից մերթ ուղղում էին
 Ինձ վրայ և մերթ կառչում էին իր
 Հոգու վրայ՝ որ կարծես մի ինչ որ
 Չարաբաստիկ ոյժ արգելք էր լինում
 Իր հիւանդ, տխուր որոշումներին
 Այդ դրութեան մէջ աւելի երկար էր
 Մնում նա, քան թէ նայում էր մի
 Ուրիշ տեղ. ես սիրա առած խղճալի
 Քան սարսափելի այդ դրութիւնից
 Սկսեցի խօսել. նա իւրաքանչիւր
 Խօսքիս հետ կարծես ձուլում էր. ամեն
 Մի խօսքս տեղի էր տալիս անհուն
 Կասկածանքների ու անսահման
 Յոյսերի. ամեն մի խօսքիս հետ նա
 Մեռնում էր, կրկին կենդանանում էր.
 Օ՛, Աստուած, Աստուած, ես այն ինչ տեսայ.
 Վերջին խօսքս քիչ յուսահատական
 Լինելով՝ դողահար կանգնեց տեղից,
 Աղերսախառն ձայնով թոթովեց.
 «Քեզ չեմ մոռանալ, չէ, չէ.»
 Եւ այս «չէ»երը այնպիսի անհուն,
 Այնպիսի տխուր ցաւոտ շեշտերով,
 Որ կարծում էիր հէնց հիմա քարերն
 Պիտ աղաղակեն և նրան սիրտ տան:
ԶԱՐ. (յուզուած)

Պարծեցիր այնքան, որքան որ կուգես:
ՎԱՐՍ.

Հաւատացնում եմ քեզ, չեմ պարծենում,
 Ճշմարտութիւն էր, որ քեզ ասացի:

ԶԱՐ.

Ինչո՞ւ մերժեցիր այդպիսի մի սէր:

ՎԱՐՍ.

Նա ողորմելի մի արհեստաւոր էր:

ԶԱՐ.

Ինչո՞վ է աւել այդ ձեր պարոնը
Արհեստաւորից, կամ մի բանւորից:

ՎԱՐՍ.

Թէ հարուստ է նա, թէ գեղեցիկ է
եւ թէ կրթուած է:

ԶԱՐ.

Թէ հարուստ է նա,
թէ գեղեցիկ է և թէ կրթուած է.
Հասել ես արդէն բաղաւորութեան
Դու վերջին ծայրին. ո՞հ, ի՞նչ լաւ բան է
Հարստութիւնը, երբ որ մի կտոր
Երջիկ կայ ձեռին մի բաժակ օղու հետ...
Ներիր ինձ, քոյրիկ, հեռուն գնացի...

ԶԱՐ.

Լաւ, դու եղբօրս մասին ինձ ոչինչ
Զասացիր, ասա, դէ՛հ ասա տեսնեմ:

ԶԱՐ.

Ճշմարիտն ասած, նրանից ոչինչ
Զի կարելի հասկանալ. նա երբեմն
Ինձ սիրում է և երբեմն էլ ոչ:

ՎԱՐՍ.

Ի՞նչպէս:

ԶԱՐ.

Այ ինչպէս. երբեմն նրանից
Այսպիսի խօսքեր եմ լսում: «Աւանդ»
Զարիկ իմ, Զարիկ. այս խեղճ պատերը

Քո այդ խիստ երկար բացակայութեան
Միջոցին որքան տառապանք կրեցին.
Այս մեր փողոցի տաքցած աւազներն,
Թափառող հողմի հետ միացած,
Որքան ոռնացին ու հառաչեցին
Վաղուց չը կրելով քո չնաշխահիկ
Ոտից հետքերը. այն տաք քարերը
Պապակուեցին, քո սուրբ քղանցքներին
Համբոյր չը տալուց. ո՞հ, ո՛ւր էիր, ո՛ւր.
Երբեմն էլ այնպիսի խօսքեր եմ լսում...:

ՎԱՐՍ.

Դրանից ոչինչ մենք չենք հասկանալ.
(Գնում են:)

ՏԵՍԻՆ Ը.

(Մտնում են Գէորգ և Երւանդ)

ԵՐԻԱՆԴ

Պարոն, եկել եմ ձեզ մի բան խնդրելու:
ԳԵՈՐԳ.

Համեցէք, խնդրեմ:

ԵՐԻԱՆԴ

Դ սէր Աստուծոյ, փոխէք ձեր կարգադրութիւնը.
Էս տեղեկացել եմ կողմնակի աղբիւրներից, որ ձեր
որդի էմամնուէլին զրկել էք հայրական ժառանգու-
թիւնից. միեւնոյն ժամանակ, որպէս բարեկամ, հետա-
քըքիր է ինձ իմանալ, ի՞նչն է առիթ տուել ձեզ այդ
սարսափելի կարգադրութեան:

ԳԵՈՐԳ.

Երբէք սարսափելի չէ. ասացէք խնդրեմ, եթէ
դուք ուղեհայիք մի թանկագին բան տալ մէկին որ-
պէս աւանդ, ի՞նչպիսի մարդու կտայիք:

ԵՐԻԱՆԴ

Ես այդ հարցին ուղղակի չեմ կարող պատասխանել. կասեմ, որ հէնց այդ կարծիքն է, որ ձեր երկուսիդ հասկացողութիւնները հեռացնում է միմեանցից և առաջացնում է ձեր մէջ այդ անագին անդունդը:

ԳԷՈՐԳ

Կը ցանկայի ձեր միջոցով ծանօթանալ նրա հասկացողութեան հետ:

ԵՐԻԱՆԴ

Եթէ նա աշխատելու ընդունակ լինի, նրան ոչ մի թանկագին աւանդ պէտք չէ. իսկ եթէ ընդունակ չէ, նրան այնքան է հարկաւոր, որքան բաւարարութիւն կը տայ նրա ամենահամեստ պահանջներին:

ԳԷՈՐԳ

Իսկ մնացածը:

ԵՐԻԱՆԴ

Մնացածը կը լինի նրա բարի տրամադրութեան տակ:

ԳԷՈՐԳ

Իսկ եթէ նրա տրամադրութիւնը փոթորկուած լինի, չը հնազանդուի նոյնիսկ բնական կարգին:

ԵՐԻԱՆԴ

Խնդրեմ ասացէք, ո՞րտեղից է ծագում նրա մասին այդ կարծիքները, ինչո՞ւ է փոթորկուած նրա տրամադրութիւնը:

ԳԷՐՈՐԳ

Որտեղից ուզում է ծագի, ես իմ սեփական համոզմունքը ունիմ:

ԵՐԻԱՆԴ

Ոհ, դուք խաբուած էք մեր աչքակապներից. նրանք այնքան են վարժուած զանազան մոզական արհեստ-

ների մէջ, որ կատարելապէս տիրապետում են մեր զգայարանքներին. նրանք կարող են մեր դատողութիւնը գերի դարձնել մեր զգայարանքներին. նրանք կարող են մեր զգայարանքներին բոլորովին ուրիշ ուղղութիւն տալ՝ մեզանից ստեղծել մի նոր մարդ, իրանց ցանկութեան համաձայն շարժւող մի նոր մարդ. մի հաւատացէք այդ աչքակապներին:

ԳԷՈՐԳ

Ես իմ զգայարանքների տէրն եմ. ինձ ոչ ոք չի կարող սև գոյնը սպիտակ ցոյց տալ:

ԵՐԻԱՆԴ

Ուրեմն այդպէս. հետեանքների պատասխանատուութիւնը վերցնում էք ձեզ վրայ:

ԳԷՈՐԳ

Այո:

ԵՐԻԱՆԴ

Որպէս զի ուղտը գոհէք լուին...

ԳԷՈՐԳ

Պարոն, անյաջող համեմատութիւն էր:

ԵՐԻԱՆԴ

Կը տեսնենք:

(դուքս են գալիս զանազան գոներից:)

ՏԵՍԻՆԼ Թ.

(Ժայռեղէն մի տարածութեան մէջ, գալիս է էմմանուէլ):

ԷՄՄ. (մենակ)

Օ, այնտեղ, այնտեղ, ինչ զարմանալի Տեսարաններ են. կարծես թէ նրանք ժամանակով ապրելիս են եղել

Մեզ նման՝ բայց մի տարօրինակ կեանքով.
Եւ իրենց կեանքը ապահովելու
Համար կռուել են մռայլ Աստուծոյ
Յամառութեան դէմ երկար ժամանակ.
Ի վերջոյ տեղի են տուել նրան:
Օ, այնտեղ, մի տեղ հսկայ ժայռերը
Խմբովին կանգնած, այրուած, խարակուած,
Իսկ միւս տեղը լեռն ՚ի վեր գծուած
Երկնքին հասած անթիւ ծործորներ,
Թափուած, թափթփուած և իրար վրայ
Կուտակուած անթիւ մամուռ քարավներ՝
Եւ երկու կողմից տաշուած ժայռերով
Պատած խոր ձորեր. օ, ինչ են սրանք,
Կարծես Աստուծոյ հիւանդութեան մի
Արտայայտութիւնն են: Կար մի ժամանակ,
Որ ես էլ հիւանդ, տխուր ոգու պէս
Թափառում էի այս նեղ ձորերում
Քարից քար, սարից սարերը ընկած,
Զիմանալով թէ ինչու համար,
Այսօր ահա այս նոյն իսկ վայրերում,
Ահա այն հսկայ ժայռի ետեւ.
Որի կատարը առաջին անգամ
Տեսնում է լուսնին՝ մի տարօրինակ
Երևոյթ է միշտ տեղի ունենում.
Հողմը ոռնում է սոսկալի կերպով,
Աղաղակում է ճիշտ մարդու նման.
Այնքան ցաւալի մի գանգաղ ձայնով,
Կարծես անում է պատմութիւնը իր
Ահաւոր կեանքի... և ահա այնտեղ
Ես երազներում տեսնում եմ եղբօրս...
(Վարազոյր)

ԱՐԱՐՈՒԱԾ Գ.

ՏԵՍԻՆԱ.

Ամարանոցային մի սենեակ. Սուլթանեանը ան-
գաղար ման է գալիս սենեակում և կասկածոտ աչքե-
րով նայում է այս ու այն կողմը:

ՍՈՒԹ. (մենակ)

Ով յանձն է առնում կատարել մի գործ,
Մի արտակարգ գործ, նախ պարտաւոր է
Լաւ քննել իր անձնաւորութիւնը,
Թէ իր նեարդեր, կամ ամբողջ կազմուածքը
Արդեօք ի՞նչ տեսակ յարաբերութեան
Մէջ են ամեն բան անող կամքի հետ,
Եւ արդեօք նրանք համակերպում են.
Եթէ ոչ, պէտք է բանականութեան
Ասպարէզ կանչել:
Ընդունենք, որ իմ արարքը արդէն
Յայտնի է եղել էմմանուէլին...
Բայց ոչ, ոչ, ի՞նչպէս կարող էր յայտնի
Լինել այդ նրան:
(Յանկարծ քամին շառաշում է և դռները սաս-
տիկ աղմուկով բացում են, նա սաստիկ շփոթուած
ընկնում է այս ու այն կողմը:)
Օ, օ, սպասէք:
Ահա այն դռնից տեղ կայ խոյս տալու:
(Շփոթուած դուրս է վազում, նորից ներս է
գալիս:)

Դու անօրէն սիրտ, հողմն է, հողմը
Որը եկել է այցելելու քեզ:
Նորից կարող եմ հանդիստ մտածել.
Որտեղ թողեցի, հա, միտս եկաւ,
Նա ապագայում գուցէ իմացաւ...
Հաւ... ահա այստեղ իմ տանջանքները
Պիտի վերջանան. սրանից յետոյ
Թափառավայրս լինելու է միշտ
Մարդկային հոգու ամենագաղտնի
Խորշերը միայն. ոչ այն խորշերը՝
Որոնք կապուած են երկնային դատարկ
Խորհուրդների հետ, այլ այն խորշերը,
Որոնք կապուած են հակումների հետ,
Որտեղ ես դիմադրութեան
Ամեն մի չնչին շարժում պիտի խորտակեմ:
Գիտենք, որ մարդը մի յանդուգն գործ
Կատարելիս գրգռում է ուժեղ մի
Տպաւորութիւնից, որը ունի իւր
Պատճառները և ժամանակը, և
Կարելի է համարել նրան գործ
Մինչ այն ժամանակն, քանի կապուած է
Իր նոյն չափ ուժեղ պատճառների հետ՝
Եւ նոյն ուժով էլ շարունակուում է.
Եթէ մէջտեղից վերցրիր յայտնի
Այդ պատճառները,
Կը նշանակի նրան զրկեցիր
Գործ դառնալու իր գորութիւնից:
Այդ պատճառներից այժմ շատերը
Կախուած են ինձանից, այդ ես լաւ գիտեմ,
Ոյժ ունիմ նրանց վերացնելու:
Այս այսպէս. այժմ անցնենք այս խնդրի

Մի ուրիշ կողմը, չէ՞ որ կան դէպքեր,
Որ կատարուում են անկախ մեր կամքից...
Բայց այդ այնպիսի հանգամանքներում,
Երբ մեր արածը իսկոյն չենք կշռում.
Պատահում է մի որևէ բան մեր
Ծրագրի մի ունէ կէտին
Անհամապատասխան և դա է, որ
Անուանում է ճակատագրի կամք:
Այդ չեմ ընդունում. եթէ մեր բոլոր
Արածներն առանց մի զանցառութեան
Ղեկավարում են բանականութեամբ
Եւ ոչ մի բոլորէ նա չի քնում,
(Այսինքն մեր բանականութիւնը)
Այն ժամանակը ճակատագրի
Կամքը խախտում է և թագաւորում է
Մարդկային կամքը. բայց և կարող են
Զանազան ախուր պարագաներում
Նեարդերս ինձ հակառակ գնան.
Չեմ թողիլ այնքան առաջ գնան այդ
Հակադիր միջոցներն, որ գերակշռող
Հանդիսանան գործ դրածս ուժերին...
Այժմ հանգիստ եմ, ես այնպէս կանեմ
Ինչպէս ստացի. կարող եմ անել,
Այո, կարող եմ:
(Ներս են գալիս Բաբա և զրագիւրը)

ԲԱԲԱ

Որդի, հարսանեացդ վերաբերեալ
Պարագաները հոգացուած են արդ,
Մնում է, որ դու համաձայնութեան
Գաւ և վերջացնենք, քանի որ գիտես
Ժամանակը մեր վրայից թեթիւ

Զի անցնում երբէք.
Իր հետ տանում է ահագին տոկոս.
Վահ, այ մարդ, զրա հետ ես չեմ հաշտուում.
Մի բան, որ գիտես քոնն է և ոչ թէ
Ուրիշինը և դու չես վերցնում
Թողնում ես նրան... օ, օ, ցնորուած,
Ցնորուած մարդիկ: Այ մարդ, այս քանի
Ամսուայ տոկոսը կորցրիր դու քո
Քամահաճոյքով, բաւական չեղամ:
Օ, ես գիտութեամբ կորցրածի հետ
Ուզում եմ կորչել, այդպիսի բաներ
Երբէք չը տեսնել:

ՍՈՒԼԹ.

Համբերող եղիր,

Հայր իմ, համբերող:

ԲԱԲԱ

Այ մարդ, այստեղ ի՞նչ
Համբերութեան խօսք կայ, վահ, դու քո
Ոտքով քացի ես տալիս քո բախտին:

ՍՄԲԱԹ

Հայրիկ, մենք պիտի միայն մեր շահը
Մեր աչքի առաջ չունենանք, այլև
Ուրիշներինը:

ԲԱԲԱ

Վահ, ի՞նչ ես ասում. ինչպէ՞ս թէ. մենք այս
Խնդրում ունենք մի փաստ հասցնում:

ՍՈՒԼԹ.

Նիւթական և ոչ մի... այլ բարոյական:

ԲԱԲԱ

Ահ, բառոյական, բառոյական, այդ
Նոր բառերը ձեզ խելքից այնքան են

Հանել, որ առանց հացի էլ դրանցով
Ուզում էք ապրել. ի՞նչ բարոյական.
Իւրաքանչիւր մարդ պիտի հետևի
Իրանից մեծի ու խելօքների
Օրինակին. տես անգլիական
Կառավարութիւնը որքան է խելօք
Վարւում. նա խելօք սարգերի նման
Այնպէս է հիւսել իր մեծ ոստայնը,
Որ երկրագունտը իբրեւ մի միջատ,
Վաղ, թէ ուշ մի օր կընկնի նրա մէջ:
Նա չի տեսնում որ իր ոստայնի մէջ
Մանրիկ միջատներն որքան են տանջւում.
Հիմա նրանից դու քեզ խելօք ես
Համարում, հա:

ՍՈՒԼԹ.

Ամենակին ոչ,

Բայց կը գայ մի օր, որ այդ ոստայնի
Մէջ որտեղից յանկարծ մի մեծ ուժեղ
Միջատ կընկնի և ոստայնի թելերն
Զեն դիմանալ նրա գոռ հարուածներին:

ԲԱԲԱ

Բայց հիւսող սարգերն այդ հօ չե՞ն տեսիլ.
Դու աշխատիր քո կենդանութեանդ
Ժամանակն ապրել քո բոլոր փառքով.
Թուրքն անիծած է. խօսքն օրինած.
Նա ասում է թէ «իմ մեռնելուց յետ
Թող հեղեղն ամբողջ աշխարհը տանի:»

ՍՈՒԼԹ.

Շատ լաւ, մենք հիմա բարեկամական
Դաշինք ենք կապում նրանց հետ. չէ՞ որ
Նրանց տան բոլոր անգամները

Համաձայնութիւնը մեզ համար նոյնչափ
Կարեւոր է, որքան որ մերն. այդպէս չէ:
ԲԱԲԱ

Ոչ ոքի կողմից անհամաձայնութիւն
ես չեմ նկատել:

ՍՈՒԼԹ.

Ճիշտ և ոչ ոքի:

ԲԱԲԱ

Միանգամայն ճիշտ:

ՍՈՒԼԹ.

Ասում էք ոչ ոք:

ԲԱԲԱ

Այո, այո, բայց, այ մարդ, դու ինչո՞ւ
Փոխուել ես այդպէս, ձանձրալի դարձել:

ՍՈՒԼԹ.

Հայրիկ, դիցուք թէ նրանք բոլորն էլ
Համաձայն են մեզ հետ. բայց չէ՞ որ մենք,
Իբրև մարդ, պիտի ցաւակցենք նրան.
Մի քանի ամիս դեռ ես չի անցել,
Որ նրանց որդին ծագիկ հասակում
Մասնուեց....:

(Գրագիրը շփոթուած վեր է կենում.)

ԳՐԱԳԻՐ

Ոհ, խենթ, խենթ ես դու, խենթ ես:

(Գրագիրը դուրս է գնում)

ԲԱԲԱ

Տես, տես, ահա քո գրագիրն անգամ
Համարձակեց քեզ խենթ անուանելու:

ՍՈՒԼԹ. (մի կողմ)

Արդէն թողեցին ինձ միանգամայն
Ինձ միտիթարող քաղցր յոյսերս.

Օ, նրանց վրայ դրուած են ծանր,
Ծանր կապանքներ. չեն համարձակուած
Սողոսկել, փախչել, կամ արհամարել.
Օ, վախենում եմ մասնել ինձ հօրս:

ԲԱԲԱ

Այ մարդ, ի՞նչ եղաւ քեզ, ի՞նչ պատահեց:

ՍՈՒԼԹ.

Վահ, բռնի կերպով ամուսնացնել ես
Ուզում դու ինձ հա՞, չեմ ցանկանում, չէ:

ԲԱԲԱ

Անառակ որդի, որ չես լսում քո
Ծնողներին. դէհ, գլուխդ քարը,
Դու գիտես, գնա անառակութեան
Աղտեղի գիրկը հրապուրում է,
Քեզ բոլոր ոյժով, բոլոր իր լպիրշ
Պատկերներով, գնա:

(Բաբան դուրս է գնում):

(Ներս է գալիս էմմանուէլը, ձեռք տանում է
գրպանը թաշկինակը հանելու, Սուլթանեանը շփոթու-
ած տեղից վեր է թռչում, բռնելով նրա ձեռքը. տի-
քում է խորին լուսթիւն):

ԷՄՄ.

Վեր կացէք, պարոն, ինչո՞ւ էք չոգում...

Սա ի՞նչ տարօրինակութիւն է, որ

Արգելում էք ինձ թաշկինակս հանել:

ՍՈՒԼԹ.

Ահ, թաշկինակդ:

ԷՄՄ.

Ի՞նչ էիք կարծում,

Սո՛ւր էի հանում. ես սովորութիւն

Չունեմ սուր կրել... բարեկամ, լուռ էք

Դուք, անհանգիստ էք. ըստ իս, ձեր մէջ մի
Սարսափելի բան է կատարուում:

ՍՈՒԼԹ. (մի կողմ)

Եթէ չը կաք դուք, ախ, դոյացէք դուք
Երկնային ոյժեր, փոխէք օրէնքը,
Փոխէք, սրա զիտակցութեան լոյսը,
Թող չանդրադառնայ այնտեղ իմ ներկայ
Արարքի պատկերն. թող ներկայանայ
Նա ինձ որպէս մի ուրիշ էակ և ես
Նրան նոյնպէս. թող անցնի այս վայրկեանը՝
Եւ մենք, որպէս իրար մատչելի
Էակներ, դառնանք գէպի մեր նախկին
Դրութիւնն. արդեօք նա չի՞ կասկածում,
Ներկայ վարմունքս ի՞նչպէս կը բացատրի...
Խօսեմ նրա հետ... գլուխս, գլուխս,
Պարոն գլխացաւս, գլխացաւս,
Ինձ կորցնում եմ...:

ԷՄՄ

Գիտեմ հիւանդ էք.

Ուրեմն այնպիսի հիւանդութիւն է
Դա, որի համար Հիպոկրատէսը
Մի գեղ չի գտել. խեղճ, տաքաբախտ մարդ,
Բայց ոչինչ, ոչինչ. իւրաքանչիւր մարդ
Պատասխանատու է իր արածին.
Երբ որ զիտամբ է անում այդ բանը...
Հիւանդութիւնը միթէ յանցանք է,
Որ դուք քաշուում էք այդպէս դրանից,
Մանաւանդ, որ ձեր կամքիցն անկախ է
Կատարուել այդ բանը:

ՍՈՒԼԹ.

Այո, քաշուում եմ

Եւ սարսափելի կերպով քաշուում եմ,
Որ փոխանակ զնահատելու ձեր
Այցելութիւնը, ներկայանում եմ
Ձեզ իմ ձանձրալի խենթ ութիւններով:

ԷՄՄ.

Այո, այո, դուք մի հրեշտակ էք,
Բայց խոր խրուած ճահիճների մէջ.
Երբ ամեն անգամ ճահճի դարձ հոտը
Հասնում է ձեր ուռնգներին, դուք մի
Դե էք դառնում:

ՍՈՒԼԹ.

Դ՞հ:

ԷՄՄ.

Կամ թէ մի անգղ,

Որ կուշտ ժամանակ բարի է դառնում:

ՍՈՒԼԹ.

Ամեն մարդ քաղցած ժամանակ չար է:

ԷՄՄ.

Եւ վայրենի է, և ստախօս է:

ՍՈՒԼԹ.

Ոհ, արժանի եմ ես ամեն տեսակ
Յանդիմանութեան. բայց խնդրեմ լսէք,
Արդեօք թոյլ կը տա՞ք ձեզ հետ խօսելու:

ԷՄՄ.

Պարոն, ձեր ոճը սաստիկ փոխուած է.
Դուք հրաշալի կը կատարէք
Մի յանցաւորի գեր՝ որն աշխատում է
Յանցանքը ծածկել, բայց այդ յանցանքի
Լեզուն դատապարտում է կեղծիքը
Եւ բացատրում է իսկութիւնը:

ՍՈՒԼԹԱՆԵԱՆ

Այո, գուցէ ես յանցաւոր լինիմ,
Բայց խնդրեմ լսէք:

ԷՄՄ.

Համեցէք, խնդրեմ:

ՍՈՒԼԹԱՆԵԱՆ

Իւրաքանչիւր մարդ՝ ի հարկէ չը պէտք է
Իր զգացմունքը անկեղծ յայտնելուց
Կարմրի և նա պարտաւոր էլ է
Չը կեղծել և կամ թէ շողորորթել,
Թէկուզ ուրիշներն ստիպեն նրան
Այդպէս անելու. ես ձեզ կարող եմ
Հաւատացնել, որ այդ զգացմունքս
Ազատ է եղել և ազատ է այժմս
Բոլոր կողմնակի պատճառներից, որը
Ես այժմ պիտի արտայայտեմ
Եւ վստահ եմ, որ ձեր հանձարը
Նման է հզօր ապառաժներին,
Որ չար լեզուների ամենանուրբ
Ակնարկները թափանցել երբէք
Ձեն համարձակուիլ իրենց ուզած տեղն
Խռովելու, կամ շփոթելու. բայց
Չը գիտեմ, արդեօք դուք զբաղուած էք,
Կամ ձեր հոգեկան տրամադրութիւնն է
Փոխուած, (որը իմ սրտին մի մեծ
Վիշտ է պատճառել) դուք ձեր շնորհներն
Պակասացրել էք վաղուց ինձանից.
Դուք, որին այնքան ես սրտիս խորքից
Յարգել եմ, սիրել. բայց ի սէր Աստուծոյ,
Յանգիմանութիւն չընդունէք դուք այս.
Խօսքերիս մէջ թէ կը գտնէք չնչին
Վերաւորական բան, խելոյն ասացէք.

Իբրեւ մարդ, ես միշտ կարող եմ սխալուել,
Ենթակայ լինել փորձութիւնների:

Արդ խնդրում եմ ձեզ ամենախորին
Մի թախանձանքով. ի՞նչ կայ, որ այդպէս
Փոխել էք ինձ հետ յարաբերութիւններդ,
Եւ եթէ մի բան արել եմ արդէն,
Որ չը գիտեմ թէ ի՞նչ եմ արել ես...
Վահ, դուք չը պիտի... ան, էմմանուէլ,
Էմմանուէլ. ներ... ինչո՞ւ էք ատում,
Ես ի՞նչ եմ արել....

ԷՄՄ. (մի կողմ)

Ահ, էմմանուէլ, սա բաւական չէ,
բարե՞րն էլ պիտի լեզու առնեն և քեզ ասեն ճշմար-
տութիւնը. այս ի՞նչ վարմունք է, կամ այս ի՞նչ լե-
զուով է խօսում սա. ճշմարտութեան լեզուն խօսում է
է համարձակ, բարձր ձայնով, վսեմ առողջանութեամբ.
սա ի՞նչ ոճով է խօսում. սա չի՞ կրում արդեօք կա-
տարուած յանցանքի բնաւորութեան կնիքը, սա ի՞նչ
ոճ է: Օ՛ երազներ, երազներ, ես սրանք կը յայտ-
նեմ Երւանդին. կողմնակի դիտողները աւելի ճիշտ են
բացատրում երեւոյթների խելական բնաւորութիւնը:
(գնում է)

ՍՈՒԼ. (մենակ)

Սմբաթ, եկ, Սմբաթ.

(Ներս է գալիս Սմբաթը.)

ՍՄԲԱԹ

Կրկին շփոթուած, ինձ ձանձրացնում ես:

ՍՈՒԼ.

Օ՛, չեմ իմանում, չեմ, չեմ իմանում:

ՍՄԲԱԹ

Ի՞նչ է պատահել, վահ, դէ՛ շուտ ասա:

ՍՈՒԼԹ.

Օ', նա, նա այստեղ, այստեղ էր, այստեղ
Եւ վառւում էին աչքերը, ինչպէս
Ձազը կորցրած էդ վագրի աչքերը:
ՍՄԲԱԹ.

Ինչի՞ համար էր եկել, ինչ ասեց:

ՍՈՒԼԹԱՆԵԱՆ

Երկար խօսեցինք, բայց և ոչ նրա
Եւ իմ խօսքերից ոչինչ չեմ յիշում:
ՍՄԲԱԹ.

Էհ, գնա, գնա տանը նստի՛ր և
Թեչի մանիւր. ուղիղն եմ ասում,
Դու արժանի չես այդ մարդ կոչուելու:
ՍՈՒԼ.

Ո՛հ, կամքս արդէն սոսկալի կերպով
Հպատակում է սև կասկածներին.
Եւ ամեն չնչին մի անհիմն կարծիք,
Ըմբոստանում է բոլոր հիմնաւոր
Իմ մտքերի դէմ. իսկ բանականութիւնն...
Ա՛հ, բանականութիւն, որն առիթ ունի
Իմ մէջ ամեն մի ըսպէ, վայրկեան
Արթուն ֆալու. բայց կամքիս վրայ
Արատ բերելու համար չունի նա
Ոչ մի պատասխան:

ՍՄԲԱԹ.

Այդ գրութեան մէջ ես վստահ չեմ որ
Դու կարողանաս գործն աշխատէս տանել,
Որ ես ստանամ բաւարարութիւն:

ՍՈՒԼ.

Նորից օգնութիւնդ դու մի զլանալ,
Անելիքներին մէջ մինչև վերջը

Կարօտ եմ քեզ պէս մարդու օգնութեան:
ՍՄԲԱԹ.

Հըմ, միտքդ ինչ է, արդեօք երկրորդի
Արիւնն էլ թափել:

ՍՈՒԼ.

Մտածում ես

Այդպէս:

ՍՄԲԱԹ.

Ես ուրիշ միջոց չը գիտեմ:
ՍՈՒԼ.

Լաւ, թող այդ մասին կարծիքս յայտնեմ.
Բայց չը լինի՞ թէ, եթէ վստահ ես
Յաջողութեանը, կարծիքս պատճառ
Դառնայ խանդարման:

ՍՄԲԱԹ.

Ոչ, ոչ, յայտնիր ինձ:

ՍՈՒԼ.

Արդեօք այդ միջոցը կարող է փրկել,
Ուրիշ բարդութիւն չի առաջ բերիլ:

ՍՄԲԱԹ.

Ես երբեք ուրիշ միջոց չը գիտեմ:

ՍՈՒԼԹԱՆԵԱՆ

Լաւ, անելիքիդ մասին շատ խորը
Պիտի մտածես, եթէ ուզում ես
Քո նպատակին կատարելապէս
Դու հասած լինես:

ՍՄԲԱԹ.

Ձը գիտեմ քեզ հետ

Ես ինչպէս վարուեմ:

(Գնում է)

ՍՈՒԼ. (մենակ)

Հանճարեղ կլօղիտսի — Դանիոյ արքայի
 Հանճարեղ մաքի գործադրութեան
 Բոլոր միջոցներն իգերև ելան,
 Ինքը զոհ գնաց մի չար դիպուածի՝
 Այնպիսի դիպուած, որն առանց տեսնել,
 Աստուած անգամ չէր կարող երազել,
 Արիստոտէլի արամաբանութիւնն
 Յաւիտենական իր շարունակութեան
 Մէջ՝ չէր հանդիպել այդ սև դիպուածին:
 Այդպէս է. արտակարգ գործերը միշտ
 Պահում են իրենց մէջ արտակարգ դէպքեր.
 Բայց ես այժմ դեռ կենդանի եմ և
 Չարիքը դեռ չը հասած ինձ՝ նրա
 Հոտը հասնում է ինձ և իմաց տալիս,
 (Որը ինձ հետ այդպէս շատ է պատահել):
 Այժմ վերլուծենք Սմբաթի միտքը,
 Սպանման մասին. ենթադրենք, որ
 Այդ սպանումը կատարուեց գաղտնի
 Կերպով. արդեօք այս տանջող խնդիրը
 Վերջնականապէս միջից կը վերցնուի,
 Չեն կրկնապատկուի իմ կասկածները....
 Չէ, չէ, պէտք է, որ թողնել այդ միտքը,
 Առանց հետեանքը կշռելու
 Ոչինչ չը պէտք է անել. քանի որ
 Յանդգնութեան հետ հարկաւոր է և
 Աներկիւղ մի սիրտ. ուրեմն ի՞նչ անել,
 Հրաժարուիլ այն բոլորից, որոնք
 Հրեցին քեզ այս սև, արիւնալից
 Ասպարէզը և կարգալ մահուան
 Աղօթքը.... կամ թէ փախչել այստեղից...
 Բայց ուր և ինչպէս. ոչ, ես չեմ փախչիլ.

Հանգամանքները գուցէ փոխուեցին
 Մեզ անյայտ օրէնքով. գուցէ նրա
 Քայքայուած նեղերն, որ ամենահաստատ
 Գրաւականն են այդ անսիրտ մարդու
 Կարճատև կեանքի, գուցէ ուրիշ կերպ
 Կարգադրեցին այդ կեանքի մասին.
 Չէ, ես կսպասեմ, դարձեալ կսպասեմ:
 (Գնում է)

ՏԵՍԻՆ 2.

Մանում են Գէորգ և Հեղինէ: (Հեղինէն արտասու-
 ւում է)

ԳԷՈՐԳ

Ահ, էլի արցունք, կանացի արցունք.
 Հեղինէ

Թող քաջալերեն քո արածները
 Այդ սովորական, բայց հրէշաւոր
 Ասացուածները կանանց հասցէին.

Սակայն մայրերի արտասուքները,
 Թափած իրանց դժբախտ զաւակների համար, միշտ
 Կը մնան մի փուշ, ցցուած դժբախտացնողների քարա-
 ցած խղճի մէջ:

ԳԷՈՐԳ

Ես տաքազլուխ երիտասարդ չեմ,
 Որ ստածներդ քեզ յետ դարձնեմ.
 Ես հասկանում եմ սրտեղ են ուղղուած
 Քո սլաքները, բայց ես ամեն բան
 Լաւ եմ քննել, ապա գործ դրել:

ՀԵՂԻՆԷ

Ախ, մինչև այժմս ես կարծում էի

Սուտ են լսածներս, օ, իմ խեղճ որդու
Սութ ակնարկները այժմ ինձ համար
Աւելի քան պարզ են, աւելի պարզ:

ԳԷՈՐԳ

Այո, աւելի պարզ, քան երբևէ իցէ.
Ես ժառանգութիւնից զրկել եմ որդուդ:

ՀԵՂԻՆԷ

Նոյնիսկ, եթէ լինէր նա խենթ, կամ 'ի ծնէ ա-
պուշ, դարձեալ ես այդ կարգադրութիւնը կանուանէի
մի սոսկալի անգթութիւն, մի տարօրինակ մտքի վիժ-
ուածք. ես քեզ ճանաչում եմ, քո արածների մեծ
մասը ծագում են մի անհասկանալի կրքից, քան սառը
գառողութիւնից: Դու նրան հալածում էիր դեռ հինգ
տարեկանից, իսկ այդ ատելութիւնը՝ որ տածում է
մինչև անգամ անմեղ մանուկները, ի՞նչ կանէր ար-
դեօք մեծերին: Ոհ, դու հալածում ես շարունակ, հա-
լածում առանց պատճառների մեր երկուսին: Յայտնի
է, թէ զանազան մարդիկ որքան փնտս են հասցրել՝
պատուիդ, խղճիդ և ունեցածներիդ, բայց դու ոչ մի
միջոց չես գործ դրել դրանց առաջն առնելու և մինչ-
և անգամ մի դատարի, շողոքորթող խօսք քեզ հաշ-
տեցրել է դրանց հետ. իսկ մեզ դու շարունակ հալա-
ծել ես և հալածել:

ԳԷՈՐԳ

Լո՛ւի, աւելին չեմ ուզում լսել:

ՀԵՂԻՆԷ

Հինգ տարեկանից տուել ես նրան
Սև տանջանքների դառը բաժակը
Եւ քամել տուել մինչ վերջին կաթիլն,
Իսկ այս վերջին քո կարգադրութիւնը
Գլուխ գործոցդ էր: Ա՛խ, դժբախտ որդեակ,

Հազար անգամ նա իրան մահուան
Տուած կը լինէր, եթէ թշուառ մօր
Արտասուքները յետ կասեցրած
Չը լինէին նրան:

ԳԷՈՐԳ

Քո ասածների

Պատասխանն առ ինձ լաւ ճանաչող
Հասարակութիւնից:

ՀԵՂԻՆԷ

Ոհ, մի խաբիր քեզ,

Երբէք չի ծածկւիլ կրակը խոխուկ.
Խոստովանուիր, որ ոչ մի նահատակ
Դահճի սրի տակ չի զգացել այն,
Ինչ որ ամեն օր զգալ ես տուել
Քո հայրական խնամքին յանձնուած
Ընտանիքին:

ԳԷՈՐԳ

Թող, քեզ ասացի որ

Էլ ոչինչ, ոչինչ, չեմ ուզում լսել:

(Ներս է գալիս Սուլթանեան)

ՀԵՂԻՆԷ

Էհ, ի՞նչ կայ, այժմ մարդ:

ՍՈՒԼ. (մի կողմ, զարմացած)

Ահ, սա ի՞նչ հարց է: (Դէպի նա)

Ոչինչ, եկայ ձեզ տեսնելու մտքով:

ՀԵՂԻՆԷ

Ոչ, երևում է դուք մի բան ունիք:

ՍՈՒԼ.

Ես, բան ունիմ, ոչ:

ՀԵՂԻՆԷ

Այժմ դու, ի՞նչ ունիք

Ասելու, ասէք, ի՞նչ էք բոլորդ
Միաբանուել և մեզ կեղեքում էք,
Ասէք, շուտ ասէք:

ՍՈՒԼ.

Մի չնչին, բայց ոչ չնչին բան:
Հեղինէ

Մեզ հասկանալի լեզուով խօսեցէք:
ՍՈՒԼ.

Ներեցէք, չը դիտեմ, սա իմ պարտքն է
Արդեօք ձեզ յայտնել, որ ձեր խեղճ որդին...
Հեղինէ

Վայ ինձ, վայ ինձ, ի՞նչ է պատահել, ի՞նչ, ի՞նչ,
Որ հազարաւոր լեզուներ այսպէս
Աղաղակում են իմ խեղճ որդու դէմ,
Իմ խոնարհ որդու, ո՛հ, ի՞նչ են տեսել
Մարդիկ նրանից:

ՍՈՒԼ.

Ոչինչ չեն տեսել,

Ինքներդ պիտի ամեն բան տեսնէք,
Յետոյ քննէք, եզրակացութեան դաք.
Իսկ ես իբրեւ մի ցատակից ընկեր,
Ձեմ կարողանում ցաւս թաղցնել:
Հեղինէ

Է՛հ, ի՞նչ կայ, ի՞նչ ցաւալու բան:
ՍՈՒԼ.

Կրկնում եմ խօսքս. ամեն բան պէտք է
Ինքներդ տեսնէք և քննադատէք,
Եզրակացութեան դաք:

ԳԷՈՐԳ.

Բոլորովին ճիշտ

Նկատողութիւն. մայրերն այնքան

Կուրացած են իրենց որդւոց սիրով,
Որ նրանց բոլոր խայտառակութիւններն
Տանում են, երբէք չեն էլ նկատում:
Հեղինէ

Պարոն Սուլթանեան, կրակի վրայ
Դուք իւր էք ածում. ես թոյլ չեմ տալիս
Ձեզ խառնուելու մեր ընտանեկան
Գործերում երբէք:

ԳԷՈՐԳ.

Իսկ ես քեզ երբէք
Իմ ներկայութեամբ թոյլ չեմ տալիս իմ
Բարեկամներին վիրաւորելու:
Հեղինէ

Ինձ թւում է, որ դուք միաբանուած,
Կարող էք անգամ ինձ բռնեցք ցոյց տալ:
ԳԷՈՐԳ.

Այդ հարցի մասին այլեւ ոչ մի խօսք:
(Գնում են)

ՏԵՍԻՆ Ը.

(Մտնում է Զարիկ)

ԶԱՐ. (մենակ)

Խեղճ Հեղինէ, ո՛հ, նրա մայրական
Խնամքները ինձ ստիպում են
Հակառակ գնալ իմ սրտի ձայնին.
Նա ստիպում է ինձ շողոքորթել
Էմմանուէլին, կարծելով, որ այն
Վէրքը կը բռնաբերէ զատարկ խօսքերով,
Որ բոյն է զրեւ նրա կրծքի տակ:
Ա՛խ, սիրտս ինչպէս թողել է նրան:
Սիրտս սե է քան զիշերուայ ծովը,

Սհ, երանի թէ շուտ յայտնուէր նա:

(Երգում է)

Զնաշխարհիկ շրջափայրում

Սիրուն եղնիկն է վազում,

Օ, մութ անդունդն նրան մօտ է,

Նա նրան է սպասում:

(Մտնում է էմմանուէլ)

(Կարճ լուսթիւնից յետոյ)

էՄՄ.

Քարե, Զարիկ, դու նորութիւն գիտե՞ս:

ԶԱՐ.

Ոչ մի նորութիւն:

էՄՄ.

Վահ, ի՞նչ ես ասում.

Յայտնուել է մի շատ դարմանալի

Վհուկ. օ, նա ի՞նչ, ի՞նչեր է անում.

Սողոմոն արքան որ կախարդութեան

Հայրն էր անուանում, շատ կը դարմանար

Տեսներով սրա այս արարքները:

ԶԱՐ.

Նա ի՞նչ է անում:

էՄՄ.

Երևակայէք,

Կարողանում է կախարդել ամբողջ

Մարդկութեան ուշադրութիւնը և

Կենտրոնացնել մի կնոջ վրայ,

Այնուհետև այդ կինն՝ ինքը գիտէ,

Թէ ինչպէս կ'օգտուի այդ ուշադրութիւնից.

Կարող է նրա դէմ օրը հազար

Կերպարանք ընդունել, հարստահարել,

Զգուեցնել, յետոյ գայթակղեցնել.

Կարող է նրանց այն աստուածային

Պատկերը ծառայացնել, ինչ բանի տեղ որ

Ինքը ուզենայ. կարող է ուղղել

Դէպ իր քմահաճոյքներն

Նրանց աղօթքներն ու երազները,

Վերջապէս, ինչպէս ուզենայ, այնպէս

Կանէ, իսկ այդ խեղճ կախարդութեանը,

Թէ հասկանան էլ իրանց դրութիւնն,

Երբէք չեն կարող ազատուել դրանից:

Սիրելի օրիորդ, եթէ ուզում էք,

Զեր երազները, ցանկութիւնները,

Մտադրութիւններն իսկոյն կարող է

Իրականացնել:

ԶԱՐ.

Այդ ի՞նչ շանթեր են:

էՄՄ.

Միևնոյն ժամանակ ունի այդ մարդն

Մարգարէական շնորհք, օրինակ.

Եթէ մենք՝ ես և այդ Սուլթանեանը

Լինենք միասին, հաւատացէք ինձ,

Նա իսկոյն կասի՝ ուշադրութիւնդ

Ո՞ր կողմն է թեքուած... նրանից թագուն

Ոչինչ բան չը կայ. մեր բոլոր մտքերն

Դեռ ևս չը ծնուած մեր ուղեղում,

Նա արդէն կարգում է մեր ճակատին:

Ախ, մարդիկ ինչպէս դողում են նրա

Առաջ իրանց նենգ մտադրութիւններով,

Որոնցից մէկը թէ երևան գայ՝

Պիտ արժանանայ մարդկային ազգի

Թուք ու մուրին, կամ ծաղր ու ծանակիւն:

ԶԱՐ.

Այգպիտի մէկը չի կարող լինել:

ԷՄՄ.

Եւ նա շատ լաւ է ճանաչում մարդկանց,
Մասնաւորապէս, ձեր կանանց սեռին.
Նա ասում է, որ կանայք ոչ միայն
Խեղկատակներին են սիրում, այլև
Ոճրագործներին, որովհետև այդ
Կարգի մարդկանց ոչ մի արարքի մէջ
Մի լուրջ միտք չը կայ և, հեռաբար,
Կանայք էլ, իբև միշտ խուսափողներ
Լուրջ մտքերից, աւելի հեշտ են
Միանում զրանց հետ, իսկ ես, ես՝ լսիր,
Աւելացնում եմ. կան, որոնք շատ մեծ
Ախորժակով են պարում ձեր սրինգով.
Ի սէր Աստուծոյ, շատ զգոյշ պէտք է
Լինել զրանցից. մի ճարպիկ սրիկայ,
Կամ մի ոճրագործ, եթէ զրաւեց
Ձեր ուշադրութիւնն՝ հաւատացէք ինձ,
Մարդկանց ահագին մի մասը՝ կը տեսնէք,
Ոճրագործանոց, սրիկայանոց
Հիմնեց, որ այդ արհեստների մէջ
Կատարելագործուած տեսնէք դուք իրանց:

ԶԱՐ.

Ես եկել էի ձեզ միտքարելու.
Եւ այն խօսքերը, որոնք հակառակ են
Եղել ձեր արամազրութեան,
Բոլորն յետ առնել. իսկ դուք, Աստուած իմ...

ԷՄՄ.

Բախտախնդիրը բախտ է որոնում
Բաժանելու ձեզ հետ իր գտածը.

Վաշխառուն խեղդում ու կեղեքում է
Շլացնելու ձեզ իր սովու փայլով.
Գինարբուքը միշտ հարբում են ձեզնից
Կրած տանջանքը մոռնալու համար.
Փողատէրերը, միշտ թշուառութեան
Կոկորդից բռնած, ծծում են նրան
Ձեր պահանջները լրացնելու:
Էլ ի՞նչ էք ուզում. պոռնիկի մէկը
Ամուսնանալ էր ուզում անպատճառ
Մի աղջկայ հետ, բայց այդ աղջիկը
Ուզում էր գնալ մի նոյնպէս պոռնիկ
Մարդու, որն ունէր մի մեծ ազարակ
Եւ սեպհական կառք. և ի՞նչ էք կարծում,
Կարճ ժամանակից յետ, առաջինի
Տրամադրութեան համաձայն, երկրորդը
Մեռաւ, կալուածներն անցան առաջինի
Ձեռն, որ նրա ազգականն էր
Եւ անմիջապէս աղջիկն իր սիրոյ
Մրմունջներն սկսեց արտազրել,
Ուզարկելու այդ թշուառականին...
Տեսնում էք, մարդկանց մեծամասնութեան
Բոլոր հակումներն ղեկավարում են
Ձեր հակումներով... իսկ դուք, փոխանակ
Կարեկցելու այդ Աստուծոյ թշուառ
Արարածներին՝ օգտուում էք զրանցից:
Իսկ դուք, օրիորդ, եթէ յիշաւի
Ինձ կարեկցում էք,
Ձեր առաքինութիւնն ինձ չէ կարող
Միտքարել, դուք միայն կարող էիք
Կարեկցել ինձ ձեր կանացիութիւնով,
Որն այլ ևս ինձ չէ հետաքրքրում:

(Մտնում է Երևանդ)

ԷՄՄ.

Ի՞նչ հրաշալի մարդ ես դու, Երևանդ,
Գալիս ես ինձ հետ բաժանելու այս
Ամենաժանր բոլէքները:

ԶԱՐ.

Յ'տեսութիւն:

ԷՄՄ.

Գնացէք բարով:

ԵՐԻԱՆԴ

Ի՞նչ կայ, սիրելիս:

ԷՄՄ.

Շատ բան, սիրելիս:

Յիշում ես, որ դեռ մենք մանկութիւնից
Ի՞նչ մանրակրկիտ քննում էինք
Թէ ուրիշի և թէ մեր արածներն,
Որ ուզում էինք ամեն բանի մէջ
Զարը ու բարին միշտ զանազանել.
Յիշում ես և այն, որ հանճարները
Մեզ ի՞նչպէս էին կախարդում, թողում.
Վայ ինձ, այժմ ես սկսել եմ այդ
Բոլոր բաներին կասկածով նայել:
Մեզ ղեկավարող այս օրէնքները՝
Վարդապետութիւն, կամ այս ինչ «ութիւն»
Եւ այսպէս հազար հազար «ութիւններ»
Մեր տանջանքներն են միայն աւելացրել,
Իսկ հասարակական կարծիքը՝
Վերցրու, նրա տարերրն առանձին
Առանձին քննիր, կը տեսնես, որ նա
Ամենամանր շահերի ընդհարման
Արդիւնքն էր, որ «եան» ազահ, հիւանդոտ,

Զը կշտանալով հաւասար բաժնից,
Կարողացել է մի միջոց գտնել
Բաւարարութիւն տալ հիւանդութեանը:
Թո՛ւն, կատաղում եմ, երբ յիշում եմ այս.
Ես տեսել եմ, որ միշտ ամենավատ
Պոռնիկներին հայհոյողները
Եղել են իրենց նման պոռնիկներ
Եւ այսպէս անթիւ օրինակներ միշտ...

ԵՐԻԱՆԴ

Ո՛հ, ի՞նչ կայ, ասա, խօսքերդ սոսկալի
Կերպով շարժում են հետաքրքրութիւնս:

ԷՄՄ.

Դու զիտե՞ս, թէկուզ հէնց արդարացի,
Արածներս էլ ինձ խիստ տանջում են,
Այդ ես քեզ վաղուց բացատրել եմ,
Բայց լսիր, լսիր, ինձ պատւիրուած է,
Որ ես ամեն բան խիստ զգուշութեամբ
Պիտի անեմ. և այս զաղանիքը քեզ
Զը բացի այս փիլիսոփայութեանս
Վրայ հիմնուած, որ ընդհանրապէս
Կիրքը փակում է մեր դատողութեան
Աչքերը և մենք հակառակորդի
Ամեն մի չնչին արածը այնքան
Մեծացնում ենք, որ մի ոչխարին
Առիւծ ենք շինում.
Զնչին չարութեան վրայ կնքում ենք
Ներոնի անունն: Արդ, որովհետև
Ես Սուլթանեանի դէմ զոգուում եմ,
Կարող էի նրա արածներին
Խիստ վերաբերուել, յանցաւոր դառնալ,
Ուստի ուզեցայ հրաւիրել քո

Ուշադրութիւնն:

ԵՐԻԱՆԴ

Շուտ ասա խնդրեմ,
Ասածներիդ մէջ ինչ մի սոսկալի
Բան է թագնուած:

ԷՄՄ.

Բայց կիրքը, կիրքը,
Կիրքը ծանօթ չէ անտարբերութեան,
Իսկ անիծուած անտարբերութիւնը
Չունի ոչ մի աչք դիտելու համար.
Շատ զէպքերում այդ անիծուած կիրքը
Այնպիսի ուղիղ դիտողութիւն է
Անում, որ մարդը երկար ժամանակ,
Իր դիտողական ամբողջ զօրութեամբ,
Զինուած չէ կարող գտնել այն բանը,
Ինչ կիրքն է գտնում:

ԵՐԻԱՆԴ

Այդ ճիշտ, է ճիշտ է:

ԷՄՄ.

Բայց երբեմն էլ աւելացնում է.
'Ի սէր Աստուծոյ, թանկագին ընկեր,
'Ի սէր մեր անկեղծ բարեկամութեան,
Թող քեզ խօսքերս չը մոլորեցնեն,
Գուցէ ես ինքս հէնց մոլորուած եմ.
Որոնիր ընդ միշտ ճշմարտութիւնը,
Գուցէ անկանոն այս դրութիւնը
Առաջ է բերել անկանոն մտքեր:

ԵՐԻԱՆԴ

Օ, ոչ, ոչ, որքան ես հասկանում եմ,
Ասածներիդ մէջ թագնուած է մի
Սոսկալի գառը ճշմարտութիւն:

ԷՄՄ.

Դէհ, հիմա ասեմ, օ, կսպասէիք,
Որ մի մարդ գիշեր ցերեկ գոռում է
Ճշմարտութեան այն բարձր անունով,
Բայց ճշմարտութեան անուան մի սև
Եւ անջնջելի արատ հէնց ինքն է
Բերում. վնհ, եղբայր, այդ աստիճան էլ
Միթէ կարող է մարդս կեղծել ու
Ստել, Տէր Աստուած, լսիր, լաւ լսիր.
Սուրբանեանն է իմ եղբօր սպանողն:

ԵՐԻԱՆԴ

Օ'..... ինչ ես ասում:

ԷՄՄ.

Ո՛հ, նա է, նա է, նա է սպանել,
Նա է սպանել. այժմ էլ նա ինձ
Խնկնում է անուանում, վախենալով, որ
Գուցէ ես պարզեմ ճշմարտութիւնը:

ԵՐԻԱՆԴ

Ասա ինձ, ասա, ի՞նչպէս իմացար:
ԷՄՄ.

Ձէի հաւատալ ես երազներին,
Եթէ սեփհական փորձերս այնքան
Հաւատարմութեամբ չը պաշտպանէին
Երազներումս բոլոր տեսածներն:

ԵՐԻԱՆԴ

Այո, երազները կարող են լինել
Շարունակ լարուած երեւկայութեան
Արդասիք. և այդ լարող պատճառներն
Մասամբ թագնուած են լինում մեր մէջ:
Այժմ փորձերը, այժմ փորձերը,
Ինչ որ չենք տեսել, այն պիտի տեսնենք:

ԷՄՄ.

Քեզ յայտնի է, որ այդ մարդը արդէն
Ծայրայեղ կերպով փոխել է զէպ ինձ
Իր նախկին բոլոր յարաբերութիւնները
Եւ հաւատացած եղիր, որ մինչև
Վերջին ժամանակներս ոչ մի կերպ
Եւ ոչ մի ձևով առիթ չեմ տուած:
Երբ անցեալ օրը մտայ նրա մօտ՝
Սոսկալի կերպով փոխուեց վիճակը.
Վրաս նայելիս, կարծես նայում էր
Մի անկերպարան էակի վրայ:
Ես ձեռս տարայ զրպանս. յանկարծ
Նա ցնցուեց և խելագարի նման
Վեր ցատկեց, ձեռիցս ամուր բռնելով,
Կարծելով սուր եմ հանում զրպանիցս.
Բայց երբ հասկացաւ բանի էութիւնն,
Այդ վարմունքը նա բացատրեց իր
Հիւանդութեամբ և, ըստ սովորութեան,
Սկսեց շողոքորթել, բայց նրան
Այդ չը յաջողուեց, ես դուրս գնացի.
Եւ ի՞նչ ես կարծում, խիղճը չէ՞ նրա
Կամքի առաջը կտրում և մատնում
Գործած ոճիրը.... ինչ կասես արդեօք:
ԵՐԻԱՆԴ

Գուցէ այդ ուրիշ աղբիւր ունի:
ԷՄՄ.

Ո՛հ, թափանցում ես հոգուս խորքերը.
Ես ուզում էի, որ այդպէս ասես.
Հարցը չը պէտք է քննել այսպէս
Միակողմանի. բաներ կան, որոնք
Կարող էին նրան առիթ տալ այդպէս

Մի վարմունքի. առայժմ մոռանանք.
Ինչ վիճակուած է մահկանացուին,
Թող այնպէս մնայ... ան, յիշողութիւն,
Ի՞նչպէս եմ այն խօսքը այսպէս մոռանում.
Շուտ պիտի կանչել այստեղ ծերունի
Մեր Եղիազարին: Էյ, Եղիազար:

(Ներս է գալիս Եղիազարը)

Օ՛, Եղիազար, Եղիազար, դու երբէք
Նման չես Աբրահամի Եղիազարին:
ԵՂԻԱԶ.

Տէր իմ, ինչո՞ւ ես վրաս զայրացել:
ԷՄՄ.

Ասա, ծերունի, եղբօրս մահուան
Մասին դու ոչինչ չէ՞ս իմանում:
ԵՂԻԱԶ.

Տէր, այդ ինչո՞ւ ես ինձ յիշեցնում.
Ես նրան տեսայ անձայն ու մեռած,
Հեղու չը կար, որ ինձ պատասխանէր:
(Արտասուում է)

ԷՄՄ.

Բայց դու մի բան զիտես, ասա շուտով:
ԵՂԻԱԶ.

Աչքերս բռնի էն աղ ու հացը,
Որ այսքան երկար ժամանակ ձեր տանն
Կերել եմ, թէ մի բան իմանամ և
Չասեմ ձեզ. ինչո՞ւ չը պիտի ասեմ:
ԷՄՄ.

Եղիազար, լսիր, երգուեցնում եմ քեզ,
Թէ հաւատում ես, որ կայ մի Աստուած,
Որ քննում է մեր արածները,
Որ նրան մի օր հաշիւ պիտի տանք,

Ճիշտ խոստովանուիր ինչ կը հարցնեմ:

ԵՂԻԱԶ.

Ախ, ես ի՞նչ գիտեմ:

ԷՄՄ.

Հի՛ա կիմանաս.

Ձե՞ս տեսել արդեօք արիւնոտ ձեռքեր:

ԵՂԻԱԶ.

Արիւնոտ ձեռներ:

ԷՄՄ.

Այն գրագրի

Ձեռները չը տեսար արիւնով ներկուած,

Երբ լուանում էր առուակի վրայ:

ԵՂԻԱԶ.

Այո, բայց դու ի՞նչ գիտես. ես տեսայ

Մեր հարկանի այգու առուակի

Մէջ լուանում էր:

ԷՄՄ.

Ձը հարցրի՞ր դու

Նրանից ոչինչ:

ԵՂԻԱԶ.

Նա ինքը առանց

Իմ հարցներու ասաց, որ մի հաւ

Մորթեցի, ձեռներս ապականուեցին:

ԷՄՄ.

Առանց հարց տալու նա այդպէս ասեց.

Երւանդ, Երւանդ, ո՞հ, լսո՞ւմ ես, թէ չէ:

ԵՐԻԱՆԴ

Ձարմանալի է, շատ զարմանալի:

ԵՂԻԱԶ.

Տէր իմ, չը կասկածեցի ես նրա վրայ:

ԷՄՄ.

Լաւ, գնա, էլ դու պէտք չես այստեղ.

Բայց լսիր, ոչ ոքի բան չը պիտի ասես:

ԵՂԻԱԶ.

Այդ իմ պարտքս է. (մի կողմ)

Այդ նա է արեւ, վա՛յ, աստուածային

Կրակը թափուի քո գլխին, վա՛յ, վա՛յ...

Նրան, որ ողջ ողջ գերեզման զնէն,

Շատ քիչ է, շատ քիչ:

(Գնում է):

ԷՄՄ.

Երւանդ, ի՞նչ կասես:

ԵՐԻԱՆԴ

Եւ երազում դու այդպէս տեսար:

ԷՄՄ.

Բահ, ինչպէ՛ս չէ, ինչպէ՛ս, ճիշտ այդպէս.

Կուղէ՞ի՞ր արդեօք պատմել տեսածս:

ԵՐԻԱՆԴ

Բայց դու սոսկալի կերպով փոխուեցիր,

Քեզ հանգստութիւն է հարկաւոր. այդ թող

Մի ուրիշ անգամ:

ԷՄՄ.

Ամենեկին ոչ.

Այս րոպէին ես քեզ կը պատմեմ:

ԵՐԻԱՆԴ

Դու գիտես, պատմիր:

ԷՄՄ.

Ամենայն օր ես գնում էի այն

Բարձր ապառաժի տակ նստում,

Որտեղ նրա հետ երկար ենք նստել

Ու շատ բաների մասին զրուցել:

Մի օր, ոչ քնած, ոչ արթուն էի,
 Յանկարծ յայտնուեց եղբայրս. բայց ինչ
 Տպաւորութիւն է թողել նա վրաս...
 Այն օրից ես էլ այս սովորական
 Մարդկանց նման չեմ ապրում, օ, մեր այս
 Ներքին աշխարհն որքան հետաքրքիր է:
 Այս տպաւորութեան տակ ես ստիպւում եմ
 Ասել, որ մեր զգայարաններն աւելի
 Նպաստում են մեր հոգու վիճակը
 Լաւ չը հասկանալու... օ, այս երազներն.
 Բայց լսիր, նրա առաջին խօսքը
 Այս եղաւ զէպ ինձ: «Ես քեզ յաւիտեան
 Մենակ թողեցի:» Մի այնպէս խորին
 Ցաւ տիրեց սրտիս, հաւատացնում եմ,
 Արթուն ժամանակս հարիւր հազար
 Եղբօր մահուան վիշտ չէր կարող իմ մէջ
 Այգալիսի մի ցաւ առաջացնել:
 Նա չարունակեց. — «Դու ամենայն օր
 Գալիս էիր մեր մէջ, ընդունած
 Այնպիսի խղճալի մի կերպարանք,
 Որ այգալիսի կերպարանք երբեք
 Այս յաւիտենապէս տանջող ոգիների
 Մէջ ես չեմ տեսել. և խնդրում էիր,
 Որ ես քեզ յայտնեմ՝ ո՞վ ինձ սպանեց:
 Ո՞վ ինձ սպանեց՝ նա այս ըսպէին
 Վայելում է մեր քրոջ սէրը,
 Մեր ծնողների համակրանքը.
 Նա, որն այս մեծ ստեղծագործութեան
 Մէջ, Աստուծոյ աչքերից ծածկուած
 Ամենազաւթան, չար մանրեների
 Մի խտացումն է, մի մարմնացումն է:

Քեզ յայտնի է, որ ամեն առաւօտ
 Ես գնում էի լեռներն շրջելու:
 Մի օր, երբ լռիկ արնն անցնում էր
 Բարձր լեռների սուր կատարներից,
 Տաքանում էին ապառաժները,
 Մեղկանում էին մատաղ թփերը,
 Ես եկել էի նստել մեր այգու
 Ծեր ընկուզենու միջին ստուերում.
 Յանկարծ լսեցի հեռում ոտնաձայն,
 Բայց այս անգամ այդ ոտնաձայնը իմ
 Զգերի վրայ իր սովորականի
 Նման չը աղբեց. սիրտս ոտակալի
 Կերպով բաբախում ու վրդովւում էր:
 Ո՛հ, հոգիս որքան ճիշտ մարգարէացաւ....
 Դուրս եկան առջև ժայռերի միջից
 Երկու մարդ՝ մէկը քրոջս ներկայ
 Սիրելին էր, մէկն իր գրագիրը.
 Տեսնէիր, ինչպէս, ինչ զարհուրելի
 Կերպարանք էին ստացել նրանք....
 Առաջ սկսեցին պատմել առակներ՝
 Ես սկսեցի նրանց սպասնալ,
 Ապա աղաչել. ես ասացի, որ
 Խնայէք կեանքս, գեռ ես չեմ հաշտուել
 Մահուան հետ. մահն ինձ դեռ սոսկալի է.
 Բայց նկատեցի, որ գործ ունէի
 Անսիրտ, անհոգի էակների հետ:
 Այն գրագիրը ամենաստոր,
 Գազանային, լիրբ կատաղութեան մէջ
 Հանեց դաշոյնը, սոսկալի ոյժով
 Մի քանի անգամ մխեց իմ կուրծքը:
 Սաստիկ ցաւից ես ճանկոտում էի

Քարերը, ճգնում էի թփերը,
 Դնում լայն բացուած վերքերիս վրայ,
 Որ հանգիստ գտնեմ. բայց ինչ հանգիստ»
 Երազումս գիտէի, որ նա մեռած է
 Եւ մի զօրաւոր ցանկութիւնից
 Դրդուած, ուզում էի իմանալ արդեօք
 Իսկապէս նա կայ, բայց խոյս էր տալիս:
 — «Ես ոչնչացած չեմ, ասում էր նա.
 Թող այդ բանը քեզ չը սարսափեցնի:
 Բայց գիտե՛ս, օ, լսիր, սարսափելի է.
 Ես թափառում եմ մի տարօրինակ
 Տարածութեան մէջ, որտեղ որ միտքը
 Ֆաւրտենական իր ուղեորութեան
 Մէջ և ոչ մի սահման չի գտնում,
 Բայց ես քայլերով այն պիտի չափեմ.
 Եւ այդպէս անթիւ տանջանքների մէջ
 Այնքան ու այնքան պիտի թափառեմ,
 Մինչև որ փոխւի Աստուծոյ հիւանդոտ
 Կամքի որոշումները:» — Ոչ որ չը տեսաւ
 Քեզ սպանելիս, նրան հարցրի:
 «Ոչ որ, բայց երբ որ այն գրագիրը
 Ձեռներն արիւնոտ անուակի վրայ
 Լուանում էր, դուրս եկաւ առաջը
 Մեր նղիազարը. նա խաբեց խեղճին,
 Ասելով «որ ես մի հաւ եմ մորթել:»
 Նա պատմեց այսպէս
 Եւ անհետացաւ յաւիտենապէս:
 Իսկ ես արթնցայ, տեսածս երազ էր:

ԵՐԻԱՆԴ

Լաւ յիշում ես դու նրա ասածներն:

ԻՄՄ.

Օ', շատ լաւ, շատ լաւ. եւ ոչ մի խօսք, ոչ աւել-
 ացրի, ոչ պակասացրի, կէտ առ կէտ նրա խօքերն
 էն, որ քեզ կրկնեցի, որ և այն օրից ամեն ընդէ,
 ամեն մի վայրկեան բարձր հնչում է ականջներիս մէջ:

ԵՐԻԱՆԴ

Հիմա ինչ պիտի անես, էմմանուէլ:

ԻՄՄ.

Վստահ ես արդեօք, որ այս երազը
 Ճշմարտութիւն է:

ԵՐԻԱՆԴ

Եւ ի՞նչպէս արդեօք

Ձը վստահել, որ այդպիսի փաստեր
 Կան արդէն մէջտեղ. ի՞նչպէս ամենիս
 Յիմարացրել էր այդ անպիտանը:
 Գնանք, սոսկալի բաներ կան ծածկուած:
 ԻՄՄ.

Ո՛հ, ինչ պիտի անեմ, ինքս չը գիտեմ:
 (Երևանդը գնում է)

ԻՄՄ. (մենակ)

Ինչո՞ւ հասաւ այս ահոեղի վայրկեանն,
 Ոհ, օձի ծնունդ, չար և անհողի.
 Ինչո՞ւ այն փծուն նիւթի համար դու
 Ձեռք թաթախեցիր անմեղ արեան մէջ՝
 Որ այժմ ես ստիպուած պիտի անեմ այն,
 Ինչ որ խեղճ կամքս ինձ չէ վիճակել:
 Սպանել նրան, ինչ ողորմելի
 Հատուցում է այդ, որ մի հաւասար
 Հատուցում դեռ ևս չստացած.
 Իր արածները անօրէն արեան
 Հետ պիտի դնան միանան իրանց

Անմահ մասերի հետ՝ իրբն մի վատ

Աւանդ յաւիտենականութեան...

Կենդանի մնայ... բայց կը մոռանայ.

Նրա մարմինը ընդունակ չէ իր

Սե նախնիքների դատակնիքը

Դնել իր վրայ, որպէս մի վկայ

Այդ նախնիքների. և չի ապրիլ նա

Յաւիտեան կրելու Աստուծոյ և մարդկանց

Իրան արժանի սե նախատինքը.

Ո՛հ, ի՜նչ անեմ ես.... Ձէ՛, ես նրա դէմ

Միշտ կը մնամ արթուն ու անուիլ՝

Որ չարը նրա մէջ ինձ միշտ տեսնելիս՝

Սոսկայ, սարսափի և ինքը իրան

Մահուան վճիռը իսկոյն արձակի:

(Գնում է)

ՎԱՐԱԳՈՅՐ

ԱՐԱՐՈՒԱԾ Դ.

Սուլթանեանի սենեակում

ՏԵՍԻԼ Ա.

(Ներսէն գալիս Սմբատ և Սուլթանեան)

ՍՈՒԼ.

Այդպէս, այժմ նա հիւանդ պառկած է.

Կամ դեղագործը, կամ թէ բժիշկը

Մի սխալ կանեն, դեղը աւելի

Կամ պակաս չափով կը տան նրան և

Նա... բայց մոռացայ, այստեղ բժիշկներ

Կամ դեղագործներ չը կան. աւելի

Լաւ, միթէ նրա ամբողջ կազմուածքում

Ձի լինելու մի չար ընդունարան

Բնութեան որ և է պատուհասի,

Մահացնելու նրան յաւիտեան.

Էհ, ես կարծում եմ կը լինի անպատճառ,

Այդ հիւանդութիւնից նա չի ազատուիլ:

ՍՄԲԱԹ

Եթէ ազատուէց:

ՍՈՒԼ.

Այդ մասին ինձ

Ոչինչ մի ասի. ասա, որ երբէք

Նա չի ազատուիլ:

ՍՄԲԱԹ

Էհ, դու յիմար ես:

ՍՈՒԼ.

Ա՛խ, Սմբատ, Սմբատ, յիշում ես, որ մի

Ժամանակ չէիր համարձակւում իմ

Ներկայութեամբը խօսել քիչ բարձր,

Այնքան էիր դու քաշւում ինձանից,

Որ ինձ տեսնելիս կարմրում էիր,

Իսկ այժմ ինձ յիմար ես անւանում:

ՍՄԲԱԹ

Դրանից աւելի վատը կասեմ քեզ:

ՍՈՒԼ.

Երևում է, որ դու խենթացել ես:

ՍՄԲԱԹ

Ես քեզ կարող եմ ձեռիս մէջ պահել, որպէս մի
կտոր սպունդ, ինչի մէջ ուզենալ թաթախել, սխմել,
նորից թաթախել:

ՍՈՒԼ.

Ձուրքը սաստկօրէն եռում է կաթսայի մէջ, եր-
կաթէ պատերը էլ չեն կարողանում դիմադրել նրան.
էյ, պարոն, զգուշացիր, իմացիր, իմ մէջ ինքնասիրու-
թիւնը գեռ չի մեռել:

ՍՄԲԱԹ.

Ինձ համար քո այդ ինքնասիրութիւնը
կէս գրօշ չարժէ:

ՍՈՒԼԹ.

Եղբայր, ինչո՞ւ ես
Դու այդպէս խօսում, դու որ ուզեցես՝
կարող ես քաղաքավարի լինել:

ՍՄԲԱԹ.

Դու մի շատ տխմար, մեծամիտ, գոռոզ,
Բայց վախկոտ մարդ ես:

ՍՈՒԼԹ.

Այ տղայ, լռիր,
եւ վախկոտ մարդ չեմ, բայց չեմ ուզում քեզ
վնաս հասցնել, ափսոսում եմ քեզ:

ՍՄԲԱԹ.

Ձեռիցդ չի գալ, կ'երգուեմ, որ քո
Ձեռիցը ոչինչ, ոչինչ էլ չի գալ:

ՍՈՒԼԹ.

Լսիր ինձ, Սմբատ, ի՞նչ է պատահել,
Ինչո՞ւ ես այդպէս վարւում դու ինձ հետ:

ՍՄԲԱԹ.

Դու ինձ շատ, շատ ես ձանձրացրել,
եւ քեզ սոսկալի կերպով տառամ եմ,
Ուզում եմ քեզ հետ ոչ մի գործ չունենալ,
Նրան էլ պետք է սատակացնեմ,
Քեզ էլ, եթէ ուզածս չես անիլ:

(Գնում է)

ՍՈՒԼԹ.

Սմբատ, էյ, Սմբատ, այստեղ կանգնիր...

ՍՈՒԹ. (մենակ)

Երեւակայութեանս մէջ իրականութեան
Ձե չի ստանում այն միտքը, որ նա
Էինս է լինելու, թէև սոսկալի
Կերպով սիրում է ինձ: Մարդկանց հոգին
Երբեմն շատ ճիշտ, երբեմն հակառակն է
Գուշակում... Իսկ այս նոր պատուհանը....
Ահ, մի րոպէ թող կորցնեմ ինձ:

(Մտնում է Երևանդը)

ԵՐԻԱՆԴ.

Մի շփոթուէք դուք, եկողը կին չէ.....

ՍՈՒԼ.

Որքան ուրախ եմ, որ այս ձեր ներկայ
Տրամադրութիւնից պիտի օգտուեմ,
Շնորհ էք արել այցելելու ինձ,
Համեցէք խնդրեմ, այստեղ ամեն ինչ
Ձեր տրամադրութեան տակ է:

ԵՐԻԱՆԴ.

Շնորհակալ եմ:

ՍՈՒԼ.

Իհ, նորութիւններ:

ԵՐԻԱՆԴ.

Էլ ի՞նչ նորութիւն,

Այստեղ ամեն ինչ նորութիւն չէ....

Պարոն, ձեզ հանգիստ տանն եմ գտնում ես:

ՍՈՒԼ.

Ապա ռթեղ էիք ուզում տեսնել ինձ:

ԵՐԻԱՆԴ.

Վահ, փոթորկալի կռուի դաշտերում:

ՍՈՒԼԹ.

Պարոն, ես զինւոր չեմ:

ԵՐԻԱՆԴ

Վահ, ի՜նչպէս չէ,

Մենք բոլորս էլ գոյութեան կռուի

Քաջ ու հաւատարիմ զինւորներն ենք:

ՍՈՒԼ.

Այո, այդ կէտից ճիշտ է ձեր ասածն:

ԵՐԻԱՆԴ

Եւ անհատական, ոչ հաւաքական

Գոյութեան կռուի:

ՍՈՒԼ.

Դա մասամբ ճիշտ է:

ԵՐԻԱՆԴ

Եւ մենք յաւիտեան մրցման ասպարէզի

Վրայ կանգնած ենք. ուր բարին այնտեղ

Ոչ մի մուտք չունի, ուր հակառակորդի

Արիւնը թափելը արդարանում է,

Ուր կատարւում է ամեն տեսակի

Գարշելի, վատթար, նողկալի ոճիւր.

Խնդրեմ, պարոն, սա ձեզ չի վերաբերում,

Երբէք չը փոխէք տրամադրութիւններդ,

Հանգիստ եղէք, կըթուած մարդու մէջ

Դ հարկէ, զազանն յաղթահարւում է

Եւ նա մարդկային արժանաւորութիւնը

Անձնական բախտից թանկ է համարում:

ՍՈՒԼԹ.

Այդ բոլորից ես բան չեմ հասկանում:

ԵՐԻԱՆԴ

Ի՜նչպէս չէ, ուրեմն դուք ընդունում էք

Դրա հակառակն:

ՍՈՒԼԹԱՆԵԱՆ

Թողնենք այդ, պարոն:

Մի բան կայ, որ ինձ ենթարկել է խիստ

Մտատանջութեան. ի՜նչպէս է արդեօք

Մեր էմմանուէլն, այս երկու օր է,

Որ նրա մասին լուր չունիմ. արդեօք

Նոյն դրութիւնը շարունակւում է:

ԵՐԻԱՆԴ

Ոչինչ, շատ լաւ է:

ՍՈՒԼԹ.

Շատ լաւ է, շատ լաւ:

ԵՐԻԱՆԴ

Ի՜նչ էիք կարծում:

ՍՈՒԼ.

Ախ, չար լեզուներ,

Ախ չար լեզուներ, ի՜նչ, ի՜նչ բաներ են

Տարածել նրա մասին, այնպէս որ

Հազիւ թէ նրան մարդ կը հաւատայ:

ԵՐԻԱՆԴ

Որ նրան խենթ չէ՞ ընդունել այսինքն:

ՍՈՒԼ.

Այո, այդպէս են հաստատում մարդիկ:

ԵՐԻԱՆԴ

Ձերս գտնում են Սամսոնի ջգերն,

Որ այսպէս կեղծիքն ուզում են մարդկանց

Ընդունել տալ զուտ ճշմարտութեան տեղ.

Պարոն, միթէ դուք չէք այդ բոլորի

Հեղինակը, հա՛:

ՍՈՒԼ.

Պարոն, ես երբէք

Ձեզ չեմ հասկանում:

ԵՐԻԱՆԻ

Ես էլ նոյնպէս ձեզ:

ՍՈՒԼ.

Սակայն ես միշտ էլ զիջող եմ եղել,
Ես մարդկանց խաղաղ տրամադրութիւնը
Պահպանելու գէտ
Սովոր եմ զոհել յիմար, հիւանդոտ
Ինքնասիրութեան զառանցանքները:

ԵՐԻԱՆԻ

Այո, յանցանքը սովոր է իրան
Միշտ դատապարտել զիջող լինելու,
Հակառակ դէպքում, նրան ամեն բան
Ոտատակ տւող ոյժն է միմիայն
(Եթէ կայ) հասնում փրկութեան:

ՍՈՒԼ.

Կարո՞ղ էք ասել ուրիշ ի՞նչ յանցանք
Ունե՞մ ես արդեօք:

ԵՐԻԱՆԻ

Իսկ այդ մէկը դուք

Խոստովանւում էք:

ՍՈՒԼ.

Ո՞րը:

ԵՐԻԱՆԻ

Որ դուք էք ուզում ամեն տեղ
Ապացուցել, որ այդ թշուառ մարդը
Կատարեալ խենթ է:

ՍՈՒԼ.

Ո՛հ, ամենահին:

ԵՐԻԱՆԻ

Իսկ ես պնդում եմ, ասում եմ այն,
Շարունակ կասեմ այո, այդ դուք էք: (գնում է)

ՍՈՒԼ. (մենակ)

Նրանք գիտեն այդ... Նրանց այդ խառը
Այլաբանական դարձուածներն իրանց
Մէջ կրում են իմ արածիս դրօշմը....
Վայ ինձ, ուրեմն մօտ է վախճանս.
Զղջումն է այս...
Ոչ, ոչ, զղջումն, որ գերեզմանի
Մօտ բռնում է չարագործների
Կոկորդից. սրան զղջումն չեմ կարող
Անուանել: Եթէ մեր ցանկութիւններն
Կազմուած է կեղտից՝ ինչո՞ւ արարիչն
Ստեղծագործութեան մարգարիտներն
Շաղ տուեց այնտեղ, այն կեղտի մէջ՝ որն
Քաշում է մեր շուրջը էն կախարդական
Շրջանը ու միշտ շլացնում մեզ.
Թէ լաւ քննենք մեր ցանկութիւններն,
(Որոնք միշտ մի նոր ուղի են հարթում
Մեր տարագրուած յոյսերի առաջ
Եւ ներշնչում են միշտ մի թարմ եռանդ
Որը խթանն է յարատեւ շարժման)
Բաժնենք մասերի, նրանց ոչ մի մասն
Ապահով լինել չի կարող մեղքից.
Բահ, թէ այդպէս է, ուրեմն մեղքը
Ընկնում է բնութեան, կամ Աստուծոյ վրայ:
Ի՞նչ է մեր կեանքը....
Առանց ուղածիդ կատարման, կեանքը
Նման է անծայր անապատներին,
Որտեղ արևի ջերմագին շողերն
Տխուր ու տրտում անվերջ շրջում են,
Բայց ոչինչ, ոչինչ չեն դանում այնտեղ:
Բարոյագէտների զառանցանքով,

Մեր կեանքը այնպէս է բռնադատուած,
 Որ մեր ամեն մի չնչին ցանկութեան
 Իրագործումը ճակատագրի
 Վճռին է հասնում: Աստուած իմ, Աստուած,
 Միթէ բնութիւնը մի մեղք է գրել...
 Դժոխքից երբէք ես չեմ վախենում,
 Բայց յայտնի է իմ երկիւղի ծագումն
 Եւ այս երկիւղը կեանքիս մէջ այնքան
 Ծանր ու սոսկալի բոլորէն է
 Բերել ինձ, որ ես հարկադրուած եմ
 Եղել չափելու սրանց ընթացքը,
 Իւրաքանչիւրի տեղութիւնը,
 Եւ վախճանը և տեսել եմ նրանք էլ
 Ժամանակի պէս վաղանցուկ են եղել:
 Գիտեմ, սա վերջն չէ, որ հոգիս այսպէս
 Սոսկալի կերպով ուզում է փշրել
 Իր շղթաները. սա վաղածանօթ
 Այդ փոթորիկն է... ես կը մաքառեմ.
 Բայց սոսկալի մարդ, օ, խիստ սոսկալի,
 Ինչո՞ւ, ինչո՞ւ չի շուտ վերջացնում...
 Օ, հոգիս, հոգիս, մի հրաշքով այն
 Ամենը ցոյց տուր, ինչ լինելու է:
 (Գնում է)

ՏԵՍԻՆ Բ.

(Մտնում է Էմմանուէլ)

ԷՄՄ. (մենակ)

Ի՞նչ անել արդեօք, սոսկալի դատիդ
 Ճշմարտութիւնը յաւիտեան քննել
 Եւ ապա անել, թէ մի քանի գծերով

Վճռել և վերջ տալ... բայց այստեղ
 Ամեն ինչ վերջանում է, ի՞նչ պիտի
 Անեմ այն ժամանակը, եթէ ես
 Նոյնը արեցի, ինչ նա եղբօրս է
 Լրել, և արդեօք դա կարո՞ղ է միշտ
 Բաժանել հոգիս այն ամենիցը,
 Ինչ որ կայ այնտեղ... օ, ոչ, ոչ, Աստուած,
 Ով կարող է հասնել ինձ օգնութեան
 Այս ծանր բոլորէն...
 (Յանկարծ ներս է մտնում Սմբատը, հանում է
 զաշոյնը ու յարձակւում է Էմմանուէլի վրայ. Էմմա-
 նուէլը վայրկենապէս ձեռ է բերում իր հաստ ձեռ-
 նափայտը, մի շղթային խիստ հարուած է իջեցնում նրա
 սուրը բռնող բազկին, ընկնում է սուրը, Էմմանուէլը
 վերցնում է, Սմբատը փորձում է նրա ձեռից խել,
 բայց չի յաջողում:)

ԷՄՄ.

Կստանաս հիմա արդար հատուցումն,
 Դէհ, առ բաժինդ:

(Սպանում է նրան)

Կարծեցիր, որ ես այնպիսի մէկն եմ,
 Որ կարող ես ինձ շան պէս սպանել:

ՍՄԲԱԹ

Ա՛խ, ներիք ինձ, անի, ես մեղաւոր եմ:

ԷՄՄ.

Թող դայ քահանան, նա քեզ կը ների:

ՍՄԲԱԹ

Ո՛չ, ոչ, դուք միայն կարող էք ներել,
 Ես մեղք եմ գործել ձեր դէմ, մի մեծ մեղք:

ԷՄՄ.

Ի՞նչ է ձեր մեղքը:

ՍՄԲԱԹ

Օ՛, մի հարցնէք,
Միմիայն ներեցէք:

ԷՄՄ.

Ասացէք խնդրեմ,
Ես սկսում եմ արդէն ձեզ խղճալ:

ՍՄԲԱԹ

Եթէ կը ներէք, ես այն չեմ ծածկիլ:

ԷՄՄ.

Ներում եմ ես ձեզ:

ՍՄԲԱԹ

Յաւիտեան արդեօք:

ԷՄՄ.

Ընդ միշտ ներում եմ:

ՍՄԲԱԹ

Մի բոպէից

Յետ ես պիտի գնամ դէպի անծանօթ
Այն աշխարհն, որի մասին ինձ այնքան

Անգամ պատմել են, որից դողում եմ

Եւ սարսափում եմ. եթէ յանցանքս

Լիովին պատմեմ, այսպէս չեմ դողալ

Եւ չեմ վախենալ:

(Էմմանուէլը, այս խօսքերից յուզուած, ուզում է
դուրս գնալ):

Օ՛, խնդրում եմ քեզ,

Աղաչում եմ քեզ, մի գնալ, այստեղ

Մնա մինչև այն ծանր բոպէն,

Ես վախենում եմ:

ԷՄՄ.

Երբէք այստեղից

Չեմ գնալ, ասա:

ՍՄԲԱԹ

Ես եմ քո եղբօր
Սպանողն.... տես՞ որ քեզ էլ ուզում էի
Սպանել:

ԷՄՄ.

Ա՛հ, սիրտս, ա՛հ, ամուր յենուէք
Գետնի վրայ, ոտքեր.... ո՛վ լսողութիւն,
Պահիր մի բոպէ քո բնութիւնը,
Որ լսեմ նրան....:

(Կարճ լռութիւնից յետոյ):

ՍՄԲԱԹ

Բայց թելադրուած

Ես ոսկու սիրուց... ա՛խ,... ա՛խ... ի՛նչ բան է

Անպիտան ոսկին՝ որոյ համար մարդ

Ծախում է հոգին, կորցնում արժանիքն...

Օ՛, ես մեռնում եմ... նիրբի ինձ....:

ԷՄՄ.

(Հանելով ծոցից թուղթ ու մատիտ, տալով մեռնողին)

Առ այստեղ գրիր. որ դու ես արել:

(Անում է թուղթը)

ՍՄԲԱԹ

Ձեռներս... դողում են... չեմ... կարող գրել...

(Մեռնում է)

(Էմմանուէլ առնում է թուղթը ու պատառոտում)

ԷՄՄ.

Ո՛հ, ի՛նչ անմիտն եմ, ուզում եմ մօրս

Ձարմացնել, կամ բարեկամների՞ս

Եւ անգութ հօրս, նրանից գրաւոր

Փաստ ունենալով. չէ՞ որ նա տուեց

Ինձ այն ամենը, ինչ որ կեանքիս մէջ

Ոչ ոք չէր տուել՝ որ տեսայ, երկինքը:

Արդէն յետ քաշեց իր վարագոյրը:

(Ներսէս է գալիս Հեղինէն, տեսնելով դիակը, հազիւ կարողանում է յենուել պատին:) Սիրելի մայրիկ, քեզ ի՞նչ պատահեց:

ՀԵՂԻՆԷ (կարճ լռութիւնից յետոյ)

Ա՛խ, վա՛յ ինձ, վա՛յ ինձ, այս դճւ արեցիր: ԷՄՄ.

Այո, մայր իմ, նա իր վարձն ստացաւ:

ՀԵՂԻՆԷ

Նա ի՞նչ էր արել:

ԷՄՄ.

Նա ինչ էր արել.....

Ամեն բան մայրիկ, բայց ոչ իրանից:

ՀԵՂԻՆԷ

Ոհ, ի՞նչ սոսկալի:

ԷՄՄ.

Սոսկալին այդ չէ,

Սիրելի մայրիկ, սոսկալին այն է՝

եղբօրն սպանել, քրոջը տիրանալ:

ՀԵՂԻՆԷ

Ի՞նչ... ո՞վ... ո՞ւմ... բան չեմ հասկանում:

ԷՄՄ.

Սուլթանեանն է եղբօրս սպանել տուողն

Այս մարդու ձեռքով:

ՀԵՂԻՆԷ

Օ՛, այդ չի կարող

Լինել, չի կարող, չէ, չէ, որդեանկ իմ:

ԷՄՄ.

Նա ուրիշ միջոց չունեմ այս բանը

Քեզ հաւատացնելու:

ՀԵՂԻՆԷ

Տարօրինակ բան:

ԷՄՄ.

Բաւական է, մայր և քանի ուշ չէ

Ազատեցէք ձեզ մօտ ապագայի

Սի նախատինքից, ո՛, մի թոյլ տուէք

Դու և իմ հայրը՝ այս օթհանը

Ազականութեան մի վայր դառնայ միշտ.

Մի պաշտպանէք դուք չարութեան դատը,

Ոտի տակ մի տուէք արդարութիւնը,

Օ՛, նա է, նա է այս հրէշաւոր

Սև չարիքների բոլոր պատճառը.

Նա է սպանել քո անբախտ որդուն,

Նա է, որ փորձ է անում կեանքիս դէմ,

Որին վկայ է այս թշուառ դիակն,

Նա է, որ այդպէս մոլորեցրել է

Ձեզ, որ այժմ իմ խօսքերը ձեր մօտ

Կորցրել են իրանց ոյժը և ոչինչ

Գարձրել ընդ միշտ:

ՀԵՂԻՆԷ (նայելով դիակին)

Անողորմ Աստուած, որ պահել էիր

Այս օրը մեզ համար, ամեն ինչ կորաւ,

Փրկութիւն չը կայ այլ ևս մեզ համար,

Կորած ենք ամենքս, աւերակ տանը

Վայրի խոտը պիտի բնի՝ և մամուռ

Պատերին, մարդկանց տեղը՝ սարսքերը

Պիտի վիսաւն և միշտ անվերջ հիւսեն

Իրենց ոստայնը: Վա՛յ, որդեանկ, այս ի՞նչ

Բերիւ մեր գլխին, ինչո՞ւ մատնեցիր

Քեզ և թէ մեզ այս սոսկալի ցաւին...

Սիրտս պայթում է...:

ԷՄՄ.

Սիրտ առ, սիրտ, մայր իմ:
Ի՞նչ կայ այդքան վրդովելու, ես եմ
Պատասխանատու թշուառականին,
Դու մի մտածիր...
Կը գայ առաւօտն
Նախրապան Յակօն
Իրան նախիրը
Էլի կը քշի
Իրան հին ճամբով....
Գնա, գնա դու հանգստանալու:

(Դուրս են գնում)

ՏԵՍԻ Լ Գ.

(Ներս են գալիս Հեղինէ և Գէորգ)

ԳԵՈՐԳ

Ասա, էլ ի՞նչ նոր բօթ ունիս արդեօք:

ՀԵՂԻՆԷ

Ա՛խ, վաճ մեզ, վաճ մեզ, բոլորս կորած ենք:

ԳԵՈՐԳ

Ի՞նչ կայ, ասա ինձ:

ՀԵՂԻՆԷ

Նա սպանել է այն գրազրին:

ԳԵՈՐԳ

Տեսա՞ր աչքովդ,

Գնա պաշտպանիր:

ՀԵՂԻՆԷ

Նա ինձ ասում էր,

Որ նա էր ուզում ինձ սպանել, բայց

Զը յաջողուեց այդ, ինքը զո՞հ գնաց

Իր յանդգնութեան:

ԳԵՈՐԳ

Ահ, ցնորուած մարդ, ի՞նչու պիտի նա
Ուզենար նրան սպանել, ի՞նչու...

Ա՛խ, խենդ մարդասպան, քո աշխարհ չը գալով

Աշխարհը պիտի տակն ու վրա՞յ լինէր,

Ահ, ի՞նչ չար ժամում դու ծնունդ առար...

Ես այստեղ երբէք չեմ կարող մնալ՝

Կրելու ծանր այդ նախատինքը.

Կերթամ այստեղից, կը մասնեմ ինձ

Բնութեան կամքին. թող նա առջևս

Բերի հեղեղներ, անջուր անապատ,

Վայրի գազաններ և ամենայն ինչ

Զարհուրելի բան, այդ ամենը ինձ

Հեշտ է լինելու կրել:

ՀԵՂԻՆԷ

Մեղ միայն

Համբերութիւնը կարող է փրկել.

Մի չար փորձանք է, դուցէ և վանցնի:

ԳԵՈՐԳ

Քեզ յայտնի լինի, գնա և յայտնիր

Քո որդիներին, որ այստեղ այլ եւս

Ինձ չէք տեսնելու:

ՀԵՂԻՆԷ

Գլուխդ ես ուզում

Ազատել:

ԳԵՈՐԳ

Այո, գլուխս եմ ուզում

Ազատել, այո:

ՀԵՂԻՆԷ

Էլ ուրիշ ի՞նչ կայ,

Ես-մի կինարմատ, այս օտար վայրում

Նորանոր հասնող ցաւերի զէմը պիտի առնեմ...

Գնա, ի՞նչի ես սպասում, գնա:

ԳԵՌՐԳ

Օ, ես չեմ կարող անտարբեր նայել

Այս ամօթալի խայտառակութեան:

(գուրս է գնում)

ՀԵՂԻՆԷ (մենակ)

Ո՞րտեղից հասաւ այս փոթորիկը,

Ա՛խ, ես ի՞նչ պիտի անեմ, ո՛ւր գնամ:

(գնում է)

ՏԵՍԻՆ Դ.

(Մտնում են Զարիկ և Սուլթանեան)

ՍՈՒԼ.

Ախ Զարիկ, Զարիկ, թէ ներկայութիւնս

Կարող է ճնշել քեզ, թող ես գնամ:

ԶԱՐԻԿ

Քեզ չեմ հասկանում:

ՍՈՒԼ.

Այո, ես ինքս

Ինձ չեմ հասկանում:

ԶԱՐԻԿ

Ի՞նչ է պատահել:

ՍՈՒԼ.

Օ, իմ մէջ այժմ ամեն բան չափից

Ու սահմանից անցել է. միտքս

Հիւանդ աստղի պէս թափառում է միշտ

Ամեն բան տեսնելու, ոչինչ չի տեսնում,

Ամենը, ամենը այս սրտիս տուաջ

Նմանում են անապատներում մի

Բուսած չաք փշի, էլ ուրիշ ոչինչ:

ԶԱՐԻԿ

Ի՛նչ 'ի գուր, 'ի գուր:

ՍՈՒԼ.

Թէեւ մի չնչին արգելքի առաջ

Այժմ ընդունակ եմ խորտակուելու,

Բայց և պատրաստեմ քո մի շատ չնչին

Քմահաճոյքի համար այդ գոհը

Շատ չը համարել: Այժմ իմ մէջ

Կամքը ոչինչի հետ է հաւասար.

Եթէ աշխատեմ մի թոյլ փորձ անել

Վերականգնելու՝ նա միանգամայն

Կորչելու է միշտ. իսկական սիրոյ

Բնաւորութիւնն այդպէս է, սիրոյ

Մէջ որքան ցանկանաս նրան գործ գնել,

Այնքան աւելի թուլանալու է:

ԶԱՐԻԿ

Բայց կայ մէկն արդէն քո սրտում, որի

Դէմ ես այնպէս աղօտանում եմ,

Ինչպէս աստղերը արշալոյսի դէմ:

ՍՈՒԼ.

Օ, ոչ, այդպէս չէ, չէ՞ որ ես քեզ այդ

Բացատրել եմ. պաշտօնական մի

Բան է եղել այդ, որն էլ այնպիսի

Վիճակի մէջ է՝ որ դու լաւ գիտես....

Իսկ ես միշտ այսպէս ուզում եմ տանջուել,

Մաշուել, կեղեքուել, պապակուել դժոխքի

Յաւիտենական վառ բոցերի մէջ:

ԶԱՐԻԿ

Ա՛խ, Արշակ, Արշակ,

(գզւում են նրանք)

ՍՈՒԼ.

Ախ, Աստուած, Աստուած, ի՞նչ անեմ ես, ի՞նչ.
 Վախենում եմ այն առաւօտուայ մէջ
 Բացւող հովասէր ծաղիկներն ընդ միշտ
 Զոհ գնան միջօրէի խորշակին
 Եւ արշալոյսը յանկարծ հանդիպի
 Գարշ ճահիճներին.... Օ, իշխիր, իշխիր
 Քեզ վրայ և ինձ, շուտ օգնականներ
 Կանչիր գան այստեղ, որ ինձ դուրս ձգեն.
 Այս ամենազօր յանցանքի առաջը
 Կտրիր, թող խորտակուի նա....

ԶԱՐԻԿ

Ոհ, դու ինձ

Վախեցնում ես:

ՍՈՒԼ.

Թոյլ աուր ես գնամ:

ԶԱՐԻԿ

Կարող ես գնալ:

ՍՈՒԼ.

Դէհ, մնաս բարե,

Գնում եմ արդէն:

ԶԱՐԻԿ

Կարող ես գնալ:

ՍՈՒԼ. (տեղից բարձրանալով)

Արդէն գնացի:

ԶԱՐ.

Սպասիր, սպասիր,

Արդեօք կարող եմ ես համաձայնել

Այն բանում, ինչ որ անկարելի է

Մինչեւ մեր...

ՍՈՒԼ.

Ոհ, ոհ, ես էլ համաձայն
 Զեմ կարող լինել:

ԶԱՐԻԿ

Ոհ, աղաչում եմ,

Եթէ հնար է, գատար ինձ այս...

Գիտե՞ս, որ կանանց երևակայութիւնն....

Եթէ չես խաբում.... Եթէ չես խաբում....

Երկնային Աստուած, փրկիր ինձ մեղքից:

ՍՈՒԼ

Պահպանեցէք մեզ, երկինք ու Աստուած:

ԶԱՐԻԿ

Ոհ, դու պահպանիր ինձ, դու պահպանիր:

ՍՈՒԼ.

Ոհ, կառավարիր ինձ, կառավարիր:

ԶԱՐԻԿ

Աստուած իմ, Աստուած:

(Գնում են:)

ՏԵՍԻԼ Ե.

(Ներս են գալիս էմմանուէլը, Երեանդը հայ ուսու-
 ցիչներ, Զաւրիկ և ուրիշներն:)

ԷՄՄ.

Բարե՛ ձեզ, բարե՛, ձեզ այստեղ տեսնել

Եւ չուրախանալ, անչափ ուրախ եմ...

Հա՛, սա Արամն է, այն Հարաճճին,

Որ այնքան անդամ պատժւում էիր

Խստասիրտ՝ բայց և բարի ուսուսչից,

Ահ, բաւականին մեծացել ես դու,

Այն օրուանից, երբ բռնեցքներս

Տեսնելիս մկան ծակը փոխ էիր

Առնում. իսկ հիմա ո՞րտեղ կարող ես
թագնուել՝ նորից թէ բռնանցքներս
Տեսնես:

ՆՐԱՆՔ

Հա, հա, հա, (ծիծաղում են)

ԷՄՄ.

Իսկ դու Արտաշէս,
Ուսուցի՛չ ես հա. ո՞, զգուշացիր
Աշակերտներիդ քթերից, որ շատ
Չ՝ ուռչեն, որ մի միամիտ աղնարկի ց
Իսկոյն չը պայթեն:

ՈՒՍՈՒՅԻՉ

Սրախօսում էք:

ԷՄՄ.

Վահ, բթախօսենք, բայց նորից ես քեզ
Զգուշացնում եմ, աշակերտներիդ
Ուղեղի շուրջը էն կախարդական
Շրջանը չը գծես, բայց միշտ էլ անքուն
Դիտողութեամբդ նրանց հետես,
Պատճառ՝ դրանք գոյութեան կռուի
Ներկայացուցչաց զաւակներից են
Եւ թէ բնութեան հարուստ զանձերի...
Այս հանգամանքում աւելի լաւ է
Լաւ ընտելանալ մեր կատուների
Որսալու ձևին:

ՈՒՍՈՒՅԻՉ

Էհ, ներկայումս

Եւ ոչ մի ուսուցիչ չի գտնուում
Իր կոչման բարձրութեան վրայ, դրա
Հակառակ, այնքան են իրանցով զբաղուած,
Որ այն ձևական պարտականութիւնն

էլ չեն կատարում:

ԷՄՄ.

Շատ ցաւալի է: (դէպի միւսները)

Իսկ դուք ամենքդ պատրաստուած էք արդ
կատարելու մեծ պարտականութիւն.

Շատ լաւ է, շատ լաւ. բայց և լսեցէք,

Ձեզ մի խորհուրդ տամ. ձեր պարտքը չը թողէք
Երկար մնալու ճարպիկ դերձակի
Քանութեամբ, եթէ ոչ, գիտէ՞ք նրա
Մկրտը....

(Մտնում է Լեոն)

Օ՛, այդ դ՞ու ես, հիմա ինձ համար
Դու ամենահետաքրքիր մարդն ես՝
Գուցէ և բոլորիս համար, պատմիր
„Երկրի“ ցաւերից առանց շեղուելու
Ճշմարտութիւնից:

ԼԵՒՈՆ

Վանը մեր տղոց առաջնորդութեամբ երեք օր դի-
մադրեց կանոնաւոր զօրքերի և ամբոխի դիմաց, մեզ-
մէ քանի մի տղայք ընկան հոն: Մեր անուն կամաց
կամաց նուաճումներ կ'են՝ քրդերու, թէ զօրաց երևա-
կայութեան մէջ. սա կերպ կարող ենք կ'ստալարու-
թեան շարունակ շփոթ դրութեան մէջ պահել:

Վանէն ութ հարիւր հոգի-ծեր, մանուկ, կիներ,
երիտասարդ, ուղեցել են անցնել պարսկական սահ-
մանը, քիւրդ Շարաֆ բէգ հասել է նրանց Բաշ-Կա-
լէի մօտ և բոլորին, մինչև վերջին մարդը կոտորեր է:
Մեզ օգնութիւն է հարկաւոր, այլապէս մենք կ'որած
ենք. այդ Սուլթանի ծրագիրն է, եթէ մենք չ'օգնենք
նէ, ան ուրիշ պատրուակներու կը դիմէ մեզի
տէնչացնելու:

ԵՐԻԱՆԴ

Ամեն մի հայ մի ուումք պիտի դառնայ պայթելու հազարաւորների գլխին և նրանց շան դիակի մասերը երկինք թռցնի: Այս ի՞նչ են անում մեզ....:

ԼՆԻՈՆ

Կը զարմանամ աս Կովկասահայ մինչև անգամ տաճկահայ «խելօքներու» դատողութեան վրայ, որոնք շատ կը խանգարեն մեզի. ատոնք մեր նահատակութիւնը սրիկայութիւն կը համարեն, կը նախատեն մեզի, կասեն—դուք Սուլթանին կը գողռէք: Սապէս ասելնքը ոմն կամ կուզեն մեզի շփոթեցնել, կամ ինքեանք քաղաքականութենէն բան մը չեն հասկնար:

ԵՐԻԱՆԴ

Մեզ շատ լաւ յայտնի է ուրքեր են այսպէս ասողները, ուշ չը պիտի դարձնել դրանց վրայ:

ԷՄՄ.

Այ մարդ, մի մըջիւն ըմբոստանում է մի առիւծի դէմ, երբ այդ առիւծը ամեն օր ճնշում է իր թաթերի տակ մըջիւններին, անցնելով մըջնանոցի վրայ: Մեզ յաւիտենապէս արհամարել են, արհամարում են, անասուններից էլ ստոր դասում. կեանքի յաւիտենապէս մնայուն նշանակութիւնը կայանում է իր նմանների փոխադարձ յարգանքի մէջ: Մեզ ո՞վ է յարգում, մի խումբ մարդիկ մեզ հետ վարւում են այնպէս, որպիսին չի կարող տանել ամենաաղանդակ, հրէշաւոր, անզգայ մի կենդանի, եթէ կայ այդպիսի մի կենդանի տիեզերքի անյայտ անկիւններում:

ԼՆԻՈՆ

Բացի այդ, գեռ Եւրոպայի լուսաւոր կենտրոններէն շատ եկողների տրամաբանութիւն կը մօտենայ ազոնց տրամաբանութեան:

ԵՐԻԱՆԴ

Զարմանալի, տարօրինակ ցեղ է մեր ցեղը, անդունդը իր առաջ չի տեսնում, շլանում է անդնդի միւս կողմում վառւող ճրագից. սարսափելին այն է, որ այդ ողորմելի շիլը ուզում է, որ բոլորն էլ իրան նման շլանան, թուչեն այդ անդնդի վրայից այդ ճրագը բռնելու համար. ինձ համար այս աստուածային զինւորը հազարաւոր այդպիսի փրկսփայլական առեղծուածների լուծումն է, որը միշտ արթուն ու պատրաստ, տապալում է գետին իր անգոր զոհի դէմ ծառացած մեղաւորին:

ԷՄՄ.

Թող մարդիկ զգուշանան զանազան վարդապետութիւններից, որովհետեւ ոչ մի վարդապետութիւն չի կարող ընդգրգել մեր յաւիտենական կարիքները. մանաւանդ, եթէ դա չի յարմարւում մեր իսկական պահանջներին, կամ չի պայմանաւորւում մեր ժամանակակից իրականութեան հետ, այդպիսին փաստակար է և մինչև անգամ վտանգաւոր: Եթէ մենք ուզում ենք մի ունէ գործ կատարել մեր կաշուի կամ մեր իրաւունքների վտանգուելու խնդրում, մեր կաշին, կամ իրաւունքը մեր վարդապետութեան ամենաճիշտ կողմնացոյցները կարող են դառնալ, որովհետեւ իրաւունքը միշտ անիրաւութիւնից առաջ է գնում և զինուած պատրաստ մնում նրա դէմ, իսկ անիրաւութիւնը, յագեցած ոչխարհային միամտութեամբ, որորճում է իր ստացուածքի սահմաններում:

ՆՐԱՆՔ

Շատ ճշմարիտ է:

ԷՄՄ.

Ես շատ ուրախ եմ ձեզ ղեկավարների դերում

տեանելիս, բայց մի խորհուրդ պիտի տամ ձեզ: Փակէք ձեր աչքերը շողոքորթութեան բոլոր ձևերի դէմ. շողոքորթութիւնը փակում է մեր իմաստութեան աչքը և մեր միտքը հեռացնում ճշմարտութիւնից: Եթէ դուք շողոքորթութեան տեղ տաք ձեր այդ սարսափելի պատասխանատու գործի մէջ, կարճ ժամանակից յետոյ, ինչպէս մի ճշմարիտ պարսիկ խան, դուք ձեզ շրջապատած կը տեսնէք աւելի շողոքորթողներով, քան թէ իսկական գործի կանչուած մարդկանցով. իսկական ճշմարտութիւնը շարունակ խուսափում է կեղծիքներից. անկեղծ մարդը չի կարող երկար շարունակել իր ճանապարհը կեղծաւորի հետ. իսկ դուք գործի փոխարէն կունենաք դատարկ բառերի կոյտեր:

ԵՐԻԱՆԴ

Այո, հեռու պիտի մնալ կեղծաւորներից, բախտախնդիրներից, որովհետեւ եղել են մարդիկ մեր մէջ որոնք երևացել են այսօր որպէս մի ճշմարտութեան զինւոր, իսկ վաղը գործիք են դարձել մի ստոր սրիկայի դաւերին:

ԷՄՄ.

Ուրեմն յոյս ունենք, որ ձեզ շուտ պիտի ճանապարհ ձգենք:

ՆՐԱՆՔ

Այո, այո, սպասելու կարիք չունենք:

ԼԵԻՈՆ

Մեր հոս տեղը մի ժամ սպասելը, հոն տասը տարուայ գործը կը քանդէ:

ՈՒՍՈՒՑ.

Դէհ, որ այդպէս է, վաղը մեր չհաշխարհիկ ձորերից մէկում մեր երեակայութեանը և ախորժակին մի լաւ ազատութիւն տանք:

ԲՈՂՈՐԸ

Այդ իրան կարգին:

(Դուրս են գնում:)

ՏԵՍԻ Լ Զ.

(Մտնում են Երւանդ և Էմմանուէլ)

ԷՄՄ.

Երւանդ, Երւանդ, եկ տես ինչ սոսկալի Բան պիտի պատմեմ, չե՞ս լսել արդեօք. Զբաղուած էինք մենք այնպիսի մի Ծանրակշիռ խնդրով, որ մոռացայ Քեզ հաղորդել այն, բայց դու չե՞ս լսել:

ԵՐԻԱՆԴ

Ոչինչ չեմ լսել:

ԷՄՄ.

Բահ, կարծում էի,

թէ արդէն ամբողջ աշխարհում պիտի Տարածուած լինի: Օ, չես իմանում, Չես իմանում, թէ այս երկու օրը Ինչ ծանրակշիռ և ինչ անսովոր Դիպուածներ տեղի ունեցան այստեղ. Գիշեր, ցերեկ ինձ տանջող երազներս Արդարանում են, ան, Երւանդ, Երւանդ, կարծես աշխարհի ստեղծուած օրից Ապրել եմ արդէն և այդ անցեալը Իր ամբողջութեամբ երազի նման Աչքերիս առաջ կանգնած է տխուր Ու մեղամաղձուած... Էհ, բայց թողենք այս: Արդեօք երեակայել կարո՞ղ էիր, Որ փեսաս արդէն վճռած է եղել Եւ ինձ սպանել:

ԵՐԻԱՆԴ

Վահ, ի՞նչ ես ասում:

ԷՄՄ.

Անցեալ օրը ես սենեակումս ընկած
Մտածում էի, յանկարծ ներս եկաւ
Այն գրագիրը. և ի՞նչ ես կարծում,
Ես արդէն վաղուց սպանուած էի,
Թէ մի հրաշքով ձեռիցը չառած
Լինէի սուրը և սիրտը մխած:

ԵՐԻԱՆԴ

Բրաւօ, ուրեմն արդէն մեռած է:

ԷՄՄ.

Այո, այո, արդէն նա մեռած է,
Վահ, այ մարդ, երբեմն մեր բնազդները
Խղճից և սառած բանականութիւնից
Առաջ են գնում:

ԵՐԻԱՆԴ

Օ, նա, նա, սվ գու

Արիւնդուշտ, տես էմմանուէլ,
Այլեւ քեզնից բան չեմ հարցնիլ
Եթէ չը լսես: Նա մեռնելու է:

ԷՄՄ.

Լաւ....:

ԵՐԻԱՆԴ

Տառանդում ես:

ԷՄՄ.

Չը նայելով, որ

Հաստատ է արդէն, որ այս ամենը

Նա է արել, բայց....:

ԵՐԻԱՆԴ

Էլ ի՞նչ բայց, ի՞նչ բայց:

ԷՄՄ.

Լաւ պիտի քննել և ապա անել:

ԵՐԻԱՆԴ

Ես չեմ հասկանում, ի՞նչ քննելու բան կայ:
ԷՄՄ.

Սպանութիւնը ոճիր է արդէն,
Բայց գիտե՞ս. մարդիկ ունեն այնպիսի
Մեղքեր, որոնք ըստ երևոյթին շատ
Չնչին են թւում, բայց հաղար անգամ
Վատ են այդ ոճրից և հէնց դրանք են,
Որ պատրաստում են այդ ոճիրները:
Ի՞նչ գիտես, գուցէ այդ սպանութեան
Գողափարի մինչև այդ կէտը՝ ես
Եւ եղբայրս ենք հասցրել նրան:

ԵՐԻԱՆԴ

Ես եղբորդ խնդրին ծանօթ եմ եղել,
(Նա ինչ արել է, իր իրաւունքների
Մահմաներում է արել. նա զուր
Վիրաւորանք չէ հասցրել նրան,
Նրան մղել է այդ ասպարէզը
Նրա աւելորդ ախորժակները:

ԷՄՄ.

Մենք ամենքս ունենք այդպիսի աւելորդ
Ախորժակներ, որոնց ուղեցել ենք
Բաւարարութիւն տալ՝ բայց եղել են
Պատճառներ, որոնք կարողացել են
Փրկել մեզ խայտառակութիւնից.
Գուցէ շտապերը, որոնք յայտնի չեն,
Կամ բռնուած չեն ոչ մի յանցանքում,
Բայց կարող էին կատարած լինել
Աւելի մի մեծ յանցանք, քան թէ դա.

Դրա յանցանքը նրանուսն է միայն,
 Որ յայտնուել է արդէն յանցանքը:

ԵՐԻԱՆԴ

Այդ խնդրում երբէք այդպէս չեն դատում,
 Բայց պէտք է մի բան վճռել անելու,
 Այդպիսով մեղքը երես է առնում:
 ԷՄԾ.

Ի՞նչ ես շտապում. սպանութիւնը
 Իմ պատիժներին ամենթոյլն է,
 Օրն հազար անգամ ես սպանում եմ
 Այդ մարդուն: Երւանդ, սոսկալի մարդ եմ
 Ես, շատ սոսկալի, ոչ մի սպանութիւն,
 Կամ թէ ի՞նչ տեսակ սոսկալի պատիժ
 Ուզենաս ստեղծել, չի կարող լուծել
 Իմ վրէժը, ան, գնանք, պէտք է մտածել,
 Ահ, սարսափելի մարդ եմ ես, գնանք:
 (Գնում են)

ՏԵՍԻՆ Է.

(Ներս են գալիս Սուրբոնեան և իր ծառան:)

ՍՈՒԼԹ.

Ասածս արեցիր:

ՄԱՐՏԻՐՈՍ.

Ի՞նչ:

ՍՈՒԼ.

Ի՞նչպէս թէ ի՞նչ:

Աւանակ, ուրեմն մոռացել ես, հա:

ՄԱՐՏԻՐՈՍ.

Օհ, էհ, ի՞նչը:

ՍՈՒԼ.

Դու չե՞ս գնացել:

Պարոն Գէորգենց. քեզ բան չասացիր:

ՄԱՐՏ.

Հա, հա, գնացել եմ:

ՍՈՒԼ.

Ի՞նչպէս ընդունեց:

ՄԱՐՏ.

Ո՞րք թէ:

ՍՈՒԼ.

Աւանակ,

Ոչինչ, ոչինչ, չես կարող անել այս

Լիրբ ծառաների միջոցաւ, ոչինչ,

Ձեռն հասկանում և հասկանալ էլ չեն

Ուզում: Էհ, այ մարդ, դու ի՞նչ ասացիր:

ՄԱՐՏ.

Ասացի պարոնս ուզում է տեսնել

Ձեզ:

ՍՈՒԼ.

Տիկինն էր չէ:

ՄԱՐՏ.

Այո տիկինը:

ՍՈՒԼ.

Ներս գնացիր ու իրան տեսար, թէ...

ՄԱՐՏ.

Իրան ասացի:

ՍՈՒԼ.

Երբ քեզ տեսաւ հա:

Աչքերը չը կախեց:

ՄԱՐՏ.

Այո, կախեց:

ՍՈՒՆ.

Ճիշտ, լաւ նկատեցիր:

ՄԱՐՏ.

Աչքերս բաց էր

Մտիկ անելիս:

ՍՈՒՆ.

Ի՞նչ պատասխանեց:

ՄԱՐՏ.

Ասաց, որ թող գայ:

ՍՈՒՆ.

Ճիշտ այդպէս ասեց:

ՄԱՐՏԻ.

Քալիս է թող գայ, ճիշտ այնպէս ասեց:

ՍՈՒՆ.

„Քալիս է թող գայ.“ կոպիտ դարձուած է՝
Վերաւորական, և այն էլ շատ խիստ:

(Դէպիւնա)

Այդ ասելուց նա աչքերը շրջեց:

ՄԱՐՏ.

Այդքանն էլ մտքումս չեմ կարող պահել:

ՍՈՒՆ.

Լաւ, գնա բանիդ... է՛հ է՛յ, սպասիր.

Գնա այնտեղից կանչիր Վարդանին:

(Ճառանքնում է)

ՍՈՒՆ. (մենակ)

Անշուշտ, Սմբաթի մահը անաւոր

Իրողութիւնը պարզած կը լինի:

Ի՞նչ ես անելու, այսպէս է, պարզ է.

Ա՛խ, ուրիշ կերպ չէ, նրանք այդ գիտեն:

Հրաշքներ չը կան, երկրագնտի չափ

Այս բոլորն չի կարող քաշուել

Մի պատուար մեր մէջ, որը ինձ ծածկէր
Նրանց երեսից:

Անցաւ երկիւղը, ես խորխտութեամբ

Դուրս կը գամ նրանց դէմ՝ իբրեւ թէ

Նրանք են ինձ այս տեղը հասցրել.

Ես կատաղութեամբ պաշտպանում եմ իմ

Իրաւունքները: Ո՛հ, ինչո՞ւ, ինչո՞ւ

Այս բոլորն չի կատարւում այդ,

Դէհ, շո՛ւտ, շո՛ւտ, ախ շո՛ւտ:

(Ներս է գալիս Վարդանը:)

Օ, ես կաւերեմ, կը նահատակեմ,

Այնպէս կ'որոտամ, ձայնս աստղերին

Կը հասնի և խեղճ մուրացկաններին

Ահարկու կը դարձնի, ահարկուններին

Մկներ կ'շինի, կը չորացնի

Մարդկային գիտակցութեան աղբիւրը.....

(Անհաստատ քայլերով ման է գալիս:)

ՎԱՐԴԱՆ

Է՛յ, Սուլթանեան, է՛յ, մարդ Աստուծոյ, ինձ վա-
խեցրիր:

ՍՈՒՆ.

Ձարմանալի բան....

Վահ, այ, մարդ, Էս, Էս, ես եմ սպանել,

Շատ լաւ եմ արել, թող տիեզերքը

Հիմքից խորտակեն, բողոք բռնան թող

Աստուծոյ, աստղերի դէմ, ինչ ուզում են

Անեն, թող, թող:

ՎԱՐԴԱՆ

Այ մարդ, գժուէ՛լ ես,

Ի՞նչ ես դուրս տալիս:

ՍՈՒԼԹ.

Ո՛հ, ես չեմ գիտէլ,
Զարմանալի բան, լսիր, ասում են
Դու ես սպանել:

ՎԱՐԴԱՆ

Ո՞ւմ, ո՞ւմ մասին է

Խօսքդ, ասա ինձ:

ՍՈՒԼԹ.

Էմմանուէլի.

Վահ, կարծում է թէ եղբօրը ես եմ
Սպանել արդէն. շատ լաւ եմ արել.
Թող անի, տեսնենք ի՞նչ է անելու:

ՎԱՐԴԱՆ

Տարօրինակ է, շատ տարօրինակ:

ՍՈՒԼ.

Կը կանչեմ նրան մենամարտութեան:

ՎԱՐԴԱՆ

Իսկապէս նա այդ բանը ասել է:

ՍՈՒԼ.

Միասին պիտի լինէք խնճոյքի,
Կը նկատես այդ: Դէհ, ի՞նչ ես ասում
Մենամարտութեան:

ՎԱՐԴԱՆ

Այդ մասին ոչինչ

Չեմ կարող ասել, կան մարդիկ, որոնք
Արհամարում են, կան էլ, որոնք ձեր
Առաջարկած միջոցն են ընտրում,
Եթէ կարող էք հաշտուել ձեր պատուի
Հետ՝ աւելի լաւ է արհամարել,
Իսկ եթէ ոչ, այն էլ դուք գիտէք:

ՍՈՒԼ.

Արհամարանքը մի չոր վիրակապ է,

Որով կապում են զազրալի վերքը՝
Ցոյց տալու համար միամիտներին,
Որ բոլորովին առողջ են իրանք.
Բայց իրենք գիտեն և Աստուած, թէ ի՞նչ է
Բերում այդ վերքը իրանց. Խեղճ գլխին:

ՎԱՐԴԱՆ

Բայց մէկի մասին ինչ որ ասում են՝
Թէ սուտ են ասում, վերքը այնքան էլ
Խորը չի բացւում, չնչին միջոցով
Նա բժշկւում է:

ՍՈՒԼԹ.

Իսկ թէ չես արել,

Բայց համոզում են միամիտներին
Եւ արդէն նրանք հաւատացած են:

ՎԱՐԴԱՆ

Այդ հանգամանքում արհամարանքը
Ինքն ըստ ինքեան է առաջ գալիս.
Եւ հասցրած մի շատ չնչին զրկանքն
Նահատակութիւն է զրկուածին:

ՍՈՒԼ.

Ա՛խ, շատ լաւ, շատ լաւ, բայց այս անօրէն
Ինքնասիրութիւնը թոյլ չի տալ, որ մի
Մարդ այսքան զրկանք հասցնի ինձ:

ՎԱՐԴԱՆ

Այդ էլ ձեր գործն է:

ՍՈՒԼ.

Ի՞նչպէս իմ գործն է.

Ուրեմն մէկի վիճակով միւսն
Այդքան քիչ պիտի հետաքրքրուի:

ՎԱՐԴԱՆ

Ի՞նչ ես ուզում անեմ քեզ համար:

ՍՈՒԼԹ

Այդ ինձանից էք հարցնում դուք, վահ:

ՎԱՐԴԱՆ

Ես կառաջարկեմ, որ այդ բոլորը

Մի կողմ թողնէք, էլ ուրիշ ոչինչ:

ՍՈՒԼԹ.

Էլ ուրիշ ոչինչ:

Ձեք յանձն առնիլ մեզ հաշտեցնելու:

ՎԱՐԴԱՆ

Ես՝ այդ ամենայն ուրախութեամբ,

թէ հնարաւոր լինի միմիայն:

ՍՈՒԼ.

Հնարաւորութեան մասին կասկած կա՞յ:

ՎԱՐԴԱՆ

Այդ էլ դուք պիտի իմանաք:

ՍՈՒԼ.

Դձուք էլ ուրեմն կասկածում էք, որ

Մեր մէջ կարող է այնպիսի մի բան

Տեղի ունենալ, որ հաշտութիւնը

Անհնար լինի:

ՎԱՐԴԱՆ

Դ հարկէ երբէք.

Երեւկայել, որ մի կրթուած մարդ

Կարող է մտքովն անգամ անցընել

Այդպիսի ստոր և խիստ զգուելի

Մի ոճրի մասին. նա ինքը արդէն

Տրամադիր է ոճիր գործելու:

ՍՈՒԼԹ.

Օ, լաւ, գնանք:

ՎԱՐԴԱՆ (առանձին)

Օ, տարօրինակ բաներ կան այստեղ. (Գնում են)

ՏԵՍԻՍ Բ.

Լեւնային մի տափարակի վրայ՝ կիսաւեր մի հրաշալի հին դղեակի բեկորների մօտ: Շուրջը կան պատուանդանից խոնարհած, բազեզներով ծածկուած խաչարձաններ: Կէս գիշեր է, եռադադաթ բարձր ժայռերի ետեւում երևում է լուսինը: Խմբուած են այնտեղ բոլոր երիտասարդները, որոնք երկու օրից յետ պիտի հրաժեշտ տան ընկերներին, գնալու դէպի արեան զաշտերը: Գալիս են այնտեղ էմմանուէլ, Հեղինէ և Վարսենիկ:

ԼԵՒՈՆ

Հոն նայէք, լուսնին, կարծես կրսէ ան

Ողջոյն յաւիտենականութեան:

ԷՄՄ.

Անա քողարկուեց, կարծես զարհուրած

Հրեշտակ լինի՝ վարսերը ցրուած

Թափուած երեսին. և զեռ երբեմն

Վարսերի միջից ցոյց է տալիս նա

Ցաւատանջ աչերն. Օ՛, որքան, որքան

Տրտում են նրանք. կարծես թէ նրանք

Գուշակում են մի սոսկալի վախճան

Ամբողջ մարդկութեան ազնիւ տենչանքին:

ԼԵՒՈՆ

Նայէք ադ ախուր աւերակներու

Թանձր պատերու խորունկ ճեղքերէն

Բսած թուփերուն, ասես թէ աղոնք

Աւերակներու սիրահարներն են

Եւ կ'ողբան անվերջ ու անմխիթար

Աղոնց խեղճ մահը:

(Ուտում են և խմում զինի)

ԵՐԻԱՆԴ

Դէհ հիմա դուք էլ ձերը սկսէք,

Պարոն երաժիշտ և պարոն երգիչ.

Պատրաստ ենք բոլորս էլ լսելու ձեզ:

(Երգում են և թառի վրայ նուագում արևելեան
մեղամաղձոտ եղանակներէջ:)

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՅ ՄԷԿԸ

Օ՛, ինչ հնչեղ ձայն... ինչպէս երգում է

Եւ ինչպէս ձայնի կայտառ հնչիւններն

Երջանկօրէն տարածւում են անվերջ

Յաւիտենականութեան մէջ՝ հասնում են

Աստծուն, բերելու վերջին պատգամը:

ԷՄՄ.

Նուագարանին դեռ ուշ դարձրէք,

Մերթ հրամայում է ամբողջ աշխարհին,

Մերթ նուաստանում հիւլէի առաջ,

Մերթ մեղկանում է, մերթ որոտում է

Առիւծի նման, մերթ անմխիթար

Մի սուգ է անում, մերթ աղաչում է,

Մերթ սպառնում է: Կար մի ժամանակ,

Երաժշտութիւն լսելիս՝ սաստիկ,

Հիւանդանում էի:

(Մօտ է արշալուսին. գունատում են աստղերը
և հեռաւոր երկնքում երևան են գալիս լուսաւոր
ամպեր:)

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՅ ՄԷԿԸ

Տես, ինչ նագելով փախչում է հովի

Առաջից սիրուն լեռնային վարդը

Եւ կրկին դառնում, գգւում նրա հետ.

Օ՛, ինչքան ուրախ հովը երգում է,

Կարծես երգում են հրեշտակները,

Տօնում են մի նոր և հրաշալի

Աստղի ծնունդը և ուղարկում են

Մեզ իրենց երգը:

ԷՄՄ. (դէպի երգիչները)

Ինչո՞ւ էք ստիպում մեռեալներին

Կտրատել մահուան ծանր կապանքներն,

Գալ ձեզ լսելու. ինչո՞ւ էք դուք մեզ

Շուարեցնում մեր ճակատագրի

Առաջ. Օ՛, թողէք գայթակղութիւնն

Փախչի յաւիտեան մեզանից հեռու...

ԵՐԻԱՆԴ (դէպի կոյր աշուղը)

Դէհ, հերթը քոնն է, սիրելի աշուղ:

(Կոյր աշուղը նուագում է ջութակի վրայ և եր-
գում:)

ԿՈՅՐ ԱՇՈՒՂ

Տանջւո՛ղ, էյ տանջւո՛ղ ինչո՞ւ լռեցիր....

Միթէ տանջանքիդ հետ դու հաշտուեցի՞ր.

Կամ թէ թշնամին արդէն մոռացա՞ւ...

Նա էլ չի՞ տանջիլ, քեզ հետ հաշտուեցա՞ւ...

ԷՄՄ.

Բաւական է, սրա երգելու եղանակը, շեշտերը
Երակների մէջ մակարդուած արեանը նոյն իսկ կա-
րող են փոխել զարհուրելի կրակ ու բոցի, որի հրեղէն
հոսանքին չեն կարող դիմադրել երկրում գտնուող ա-
մենակարծր մարմիններն անգամ:

ԵՐԻԱՆԴ

Այո, սրանց դերը աննման է:

ԷՄՄ.

Վահ, այ մարդ, սրանց նմաններն են, որ անհուն
խաւարի մէջ լոյս են առաջացնում: Նա կարծում եմ,
որ եթէ մեր պատմական բարեշրջութեան մէջ ան-

հատին դեր է յատկացւում, պէտք է վերագրել այդպիսիներին և ոչ թէ մի քանի բախտաւոր անհատներին: Իսկ ի՞նչ է անում մեր գրականութիւնը՝ որ մինչև այժմ չը կարողացաւ ազատել որոշ շրջանների սեպհականութիւն լինելուց:

ԵՐԻԱՆԴ

Ես հասկանում եմ կենդանի խօսքի ոյժը:

ԷՄՄ.

Դու ճանաչում էիր Ե ...ցի Յովսէփին:

ԵՐԻԱՆԴ

Ոչ, դու գիտես, որ ես երկար ժամանակ է ինչ բացակայ եմ եղել Կովկասից:

ԷՄՄ.

Երանի թէ ճանաչած լինէիր նրան: Նա մի դժգոյն, նիհար պատանի էր. նրա դէմքին նայողը ասում էր, հէնց հիմա կը լուծի սա մեզ յաւիտենապէս տանջող հարցերը և կասէ մեզ փիլիսոփայութեան վերջին խօսքը: Նա, թէև շատ քիչ ապրեց, բայց նրա դերը անսահման էր. մի ամբողջ նահանգ մտածում էր, խօսում էր նրա պէս. խեղճը մեռաւ մի տարօրինակ մահով:

ԵՐԻԱՆԴ

Ի՞նչպէս:

ԷՄՄ.

Համարեայ թէ մեռաւ քաղցածութիւնից: Նա շարունակ Քրիստոսի նման թափառում էր քաղաքի մերձակայ լեռներում: Նրա ընկերները գնացել էին մի օր տեսել իր սովորական առանձնանալու տեղը, որը երկու կողմից բարձր ժայռերով օղատած մի խողոզ էր, որտեղից նա նայում էր դէպի անսահման կապոյտ տարածութիւնը: Նրանք ասում էին, որ մենք

առաջին հայացքից կարծեցինք թէ նա կենդանի է. մօտեցանք նրան, մեզ վրայ սարսուռ տիրեց. նրա աչքերը բաց էին, անշարժ, անհուն խորհրդաւորութեամբ յառած էին դէպի հեռուն: Մենք տեսանք, թէ ինչպէս աշխան արևի դժգոյն ճառագայթները թափանցելով ժայռերի ճեղքերից՝ ոստոստում էին նրա գանգուղներին, թիկունքին, դէմքի վրայ, կարծես ուզելով փարատել նրա մահուան թախիծը: Մի ամբողջ ժամ մենք ուշքի չէինք գալիս: Մենք բերինք նրան քաղաք ու հողին յանձնեցինք, ամբողջ քաղաքը սգի մէջ էր: Խեղճ պատանի, այս դէպքը ես երբէք չեմ մոռանում. մի օր եկաւ ինձ մօտ՝ լուռ ու մունջ, դէմքի գծերը այլայլուած. նա անհանգիստ սենեակում ման էր գալիս. երբ որ ուզում էր ինչ որ բան ասել ինձ, յուզմունքը կրկնապատկւում էր և դէմքը աւելի տարօրինակ արտայայտութիւն էր ստանում. և այդպէս մի քանի անգամ, բայց վերջը ոչինչ չասաց ինձ: Ես իսկոյն հասկացայ բանն ինչու՞ն էր. նա քաղցած էր և իմացայ, որ մի քանի օր էր որ ոչինչ չէր կերել: Ես գիտէի, որ նրան ոչինչ առաջարկել չէր կարելի. նա այն աստիճան զգայուն էր, որ նրա ընկերները նրա տարրական կարիքները հոգում էին տարօրինակ կերպով. նա գնում էր և ամեն բան պատրաստ գտնում էր իր տանը, չը իմանալով, թէ ովքեր են այդ անողները: Վերջապէս, թէև ես ճաշել էի, բայց ձկացայ, թէ քաղցած եմ, ճաշ բերել տուի և մենք ճաշեցինք:

ԵՐԻԱՆԴ

Ինչո՞ւ մի ուէ աշխատանք չէր յանձն առնում կատարելու:

ԷՄՄ.

Նա այդ հարցին պատասխանում էր այսպէս. «օ-

բազմաճյուղի մի երկու կողմէ կեռք բերելու համար մարդիկ գործ են դնում իրանց ամբողջ ժամանակը, իսկ գիտէք որքան ժամանակ է հարկաւոր հասնելու համար մի իսկական ճշմարիտ մտքի՝ եթէ դու ուզում ես այդ ասպարէզը ընտրել:

ԵՐԻԱՆԴ

Ի՞նչ էր քարոզում նա:

ԻՄՄ.

Նա առօրեայ չարիքները վերացնելու համար ուսուցանում էր Սոկրատէսի եղանակով-հարց ու պատասխանով: Նա մի քանի կարճ հարց ու պատասխանով ամենատեղէն մարդու ուղղորդութիւնը այնպէս էր կենտրոնացնում իր տանջանքների, հոգսերի իսկական աղբիւրների վրայ, որ նրան անհնարին էր լինում ուրիշ կերպ մտածել: Նա այսպէս էր եզրակացնում իր առօրեայ քարոզները:

«Հասարակութեան ներկայ վիճակը մի ակտ է, որ պատրաստել է մարդկային թոյլ ու բութ իմացականութիւնից խոյս տուած ճակատագիրը. և երկար պիտի շարունակի նա իր զարհուրելի արշաւանքները, եթէ միայն մեր զգոյշ բանականութիւնը չանցնի, չը փակի այն գաղտագողի բոլոր անցքերը, որտեղից որ նա պիտի թափանցի»: Երբէք չեմ մոռանում նրա փիլիսոփայական մտքերը: Նա ասում էր. «Քրիստոնէութիւնը մարդասիրութիւն քարոզելու փոխարէն, պիտի քարոզէր մարդկայնութիւն, որովհետեւ սէրը շատ առաձգական է. ամեն մարդ մէկին կամ միւսին սիրում է իր տեսակ. բայց մարդկանց պիտի սովորեցնել յարգել մարդուն և մարդկայինը, միջոցներ մշակել հասկացնելու մարդկանց, որ մէկը ոչնչանալով, ամբողջը կորցնում է իր նշանակութիւնը, որ այդ ամբողջ-

ջութիւնը իր ոյժերի մեծ մասը պիտի գործ դնի մի յաւիտենական նպատակի համար...: Սէրը երբէք չի կարող փոխել մեր կեանքի տրամաբանութիւնը, իսկ մեր վրայ սոսկալի կերպով ծանրացող չարիքները այդ տրամաբանութեան հետեանքներն են, այդ տրամաբանութիւնը մէկին մղում է դէպի անձնասպանութիւնը՝ մէկին դէպի ոճիրների քաղաքականութիւն, մէկին մի ուրիշ բան, և այլն և այլն: Մենք այդ տրամաբանութիւնը պիտի թողնենք, անցնելով դէպի բնութեան տրամաբանութիւնը՝ որ դահճի կացնի տակ անգամ մեր մէջ դնում է ձգտումներ, տանելով յաւիտենական ճանապարհներով դէպի մի անմեկին նպատակ:» Նա շատ քիչ էր գնահատում գրելը, այդ պատճառով էլ գրաւոր վաստակներ չունէր: Նա ասում էր. «գրելը միայն մի օգուտ ունի՝ այդ այն է, որ մարդկային մտքի պատմութիւնը աւանդում է յետագայ ժամանակներին»: Նա մեռաւ քսան տարեկան հասակում:

ԵՐԻԱՆԴ

Այո, կեանքը յեղաշրջողները մենակ մի քանի ընտրեալները չեն:

(Նուագածութիւնը ու երգեցողութիւնը դադարում է. բոլորն էլ ոտի են կանգնում նորեկ երիտասարդներին հրաժեշտ տալու. այդ իսկ միջոցին գալիս է Սուլթանեանը և ջղային մի զոդով յարձակւում է էմմանուէլի վրայ:)

ՍՈՒԼ.

Համեցէք մէջտեղ... դմբ... դմբ... դմբ էք ինձ...

ՀԵՂԻՆԷ

Բաժանեցէք, էյ, շուտ բաժանեցէք:

(Երբ Սուլթանեանը զիմաղրութիւն է տեսնում, դադարում է:)

ՍՈՒԼ.

Սպանէք ինձ. ես չէի եկել ձեզ
Մի բան անելու.... եթէ չէք ուզում....
Ահա.... համեցէք:
(Զգում է թաշկինակը էմմանուէլի առաջ, նրանց
մէջ իրարանցում է տիրում:)

ԵՐԻԱՆԴ

Հեռացէք, պարոն, ես ձեզ ասում եմ:

ԷՄՄ.

Ես ընդունում եմ:

Հեղինէ (դէպի Սուլթանեանը)

Դու խենթացել ես,

Ի՞նչ է պատահել:

ՍՈՒԼ

Ո՛հ, ո՛հ... ես խենթ չեմ...

Ես չեմ խենթացել... ես... ահ...

ԷՄՄ.

Զը միջամտի

Ո՛հ որ, ասում եմ... մայրիկ, հեռացիր,

Շուտ, շուտ հեռացիր... ես ընդունում եմ...

ՎԱՐՍ.

Ա՛խ, էմմանուէլ:

ԷՄՄ.

Ասում եմ ոչ որ

Զը միջամտի, վերջացած է այդ: (Ինքն իրան).

Բաւական է, որ իմ կարթը հասաւ

Սրա հոգու մէջ յաւիտենապէս

Թագնուած որդին... այժմ ինձ պէտք է

Այդ կարթը հանել, ազատութիւն տալ....

(Շփոթուած բոլորը գնում են: Մնում են Վարս-
սենիկ ու Հեղինէն:)

ՎԱՐՍ.

Մայրիկ, դու ինձ միշտ միամտացնում էիր,
Թէ ոչինչ չի պատահել, այս ի՞նչ էր...

ՀԵՂԻՆԷ

Զաւակս, ամեն կերպ ես կաշխատեմ
Քանգարելու այդ:

ՎԱՐՍ.

Բայց նա յամառ է

Եւ շատ յամառ է:

ՀԵՂԻՆԷ

Ես կը համոզեմ:

(Գնում են)

ՏԵՍԻԼ Թ.

(Մահտեսեանի բնակարանում մի սենեակ մտնում
է Զարիկ):

ԶԱՐԻԿ (մենակ, երգում է)

Արշալուսի մէջ հոգն է թափառում

Եւ մի տխուր ձայն ականջիս բերում...

Օ՛, կանգ առ, մի գայ, տրտմաձայն հովիկ,

Դեռ մի յոյս ունի տարաբախտ Զարիկն:

Նորապսակ ուռենին,

Կանգնած առուի եզերքին...

Սպասում էր արեին...

Ահա հասաւ արեւը,

Ուրախ դողաց տերեւը

Բայց չը գիտեմ ինչո՞ւ նա

Վառեց նրան անխնայ:

Ես կը գնամ, էլ չեմ գալ

Այստեղ, այստեղ էլ չեմ գալ,

Նշանածս ինձ խաբեց

Ինձ անպատուեց ու թողեց:

Ախ, երկինք ու երկիր, թող փոխուեն ձեր օրէնքները, թող մայրս գերեզմանից դուրս գայ, յայտնեմ նրան ցաւերս մի անգամ էլ, ապա թող մեռնեմ... (արտասուում է:) Ես մի որբ աղջիկ՝ ապաւինած մի թշուառ ծերունի հօր, ինձ այսպէս սոսկալի կերպով խաբեցին... (Մօտենում է սեղանին, առնում է թուղթ ու գրիչ և շտապում է գրել:)

Ո՛չ, ո՛չ, չեմ ուզում... Օ՛, էմմանուէլ,

Այժմ կանգնած ես առջևս խրոխտ

Յաղթականի պէս, դու ինձ չես ներում...

Օ՛, հեռո՛ւ, հեռո՛ւ, ինձ մի յայտնուիր:

(Պատառոտում է գրած նամակը և ցրում յատակի վրայ:)

Օ՛, նեղ, նեղ է.... շուրջս անդադար

Բարձրանում են դժոխային սև, սև

Բոցեր. չեմ կարող այնտեղից անցնել....

Բայց ո՛չ, ո՛չ, այնտեղ.... այն ժայռի կատարն...

Լաւ է.... շատ լաւ է.... կերթամ այնտեղից...

Կերթամ, շուտ գնամ....

(շտապով դուրս է գնում):

ՎԱՐԱԳՈՅՐ

ԱՐԱՐՈՒԱԾ Ե

ՏԵՍԻՆ Ա.

(Հեղինէի սենեակում)

(Մտնում են Հեղինէ և Սուլթանեանը)

ՍՈՒԼ.

Տիկին, դուք ինչպէս ուզում է կարծէք

Իմ մասին, բայց ես պիտի կատարեմ

Իմ պարտքը. ահա եկել է այն խեղճ

Նահատակի հայրը. աղաղակում է,

Մաղերն է փետում. հիմա աւելի

Հեշտ է ծովերին հրամայել, քան

Թէ մի փորձ փորձել հաշտեցնելու

Նրան իր գրութեան հետ: Բայց ես

Եկել եմ խոնարհ կերպով խնդրելու,

Որ չը խառնուէք դուք այս խնդրի մէջ:

Տատանում էք դուք և կասկածում էք

Ձեր լսածների ազդեցութեան տակ....

Ձեմ վիրաւորում,

Դա յատուկ է մարդկային բնութեան.

Շատ անգամ ես էլ ենթարկուել եմ այդ

Կասկածանքներին՝ երբ որ մի մարդու

Մասին ինձ մի բան հաւատացրել են.

Ձը նայելով, որ լաւ ճանաչելիս եմ

Եղել ես նրան: Յամենայն դէպս,

Կրկնում եմ խնդիրս:

ՀԵՂԻՆԷ

Շնորհակալ եմ:

ՍՈՒԼ.

Հրամայէք ինձ, որ չը խառնուեմ
ես ձեր գործերին... Բնչ պիտի անեմ:

ՀԵՂԻՆԷ

Դա ձեր գործն է:

ՍՈՒԼ.

Տիկին, ձեզ վաճառեց

կարող է սպառնալ:

ՀԵՂԻՆԷ

Թող թէկուզ ամբողջ

Աշխարհը քանդուի, հիմքից կործանուի:

ՍՈՒԼ.

Ես զարմանում եմ, տիկին, ինչո՞ւ էք
Մերժում ձեր խենթի ծառայութիւնը:

ՀԵՂԻՆԷ

Մենամարտութեան էք կանչում որդուս,
Նրան սպանէք:

ՍՈՒԼ. (մի կողմ)

Ուրեմն այդ է....

Հրաշալի է... (բարձր) Տիկին, ես խօսքս
Յետ կը վերցնեմ, թէ միայն այդ է
Ձեզ վերաւորել:

ՀԵՂԻՆԷ

Կարո՞ղ էք նրան

Համոզել արդեօք:

ՍՈՒԼ.

Էմմանուէլի՞ն:

ՀԵՂԻՆԷ

Այո, հէնց նրան, կարծում էք հեշտ է:

ՍՈՒԼ.

Աստուած իմ, Աստուած, խեղճը հիւանդ է.

Եթէ ֆնացած լինէր նրանում

Մեր դատողութեան մի հիւլէն անգամ՝

Կը զիջէր խեղճ մօր դառն աղաչանքին:

ՀԵՂԻՆԷ

Դուք սխալուում էք, այդ աստիճանին

Դեռ նա չի հասել:

ՍՈՒԼ.

Ուրեմն կարո՞ղ ենք

Քանգել նրա այդ սոսկալի վճիռն:

ՀԵՂԻՆԷ

Նախ՝ ասացէք դուք, կարելի՞ է ինձ

Իմանալ արդեօք, թէ Բնչը մղեց

Ձեզ նման մի լուրջ ու շատ լուրջ մարդու

Այդ ասպարէզը:

ՍՈՒԼ.

Օ, մայր իմ, մայր իմ,

Մի ցանկանար այդ բանը ինձանից

Իմանալ, խնդրում, աղաչում եմ քեզ:

ՀԵՂԻՆԷ

Հմ, ուրեմն դուք համոզուած չէ՞ք, որ

Ճշմարտութիւնը կարող էք ասել

(Մտնում է Եղիազար)

ՍՈՒԼ.

Ես էլ չեմ ուզում ճշմարտախոսել:

ԵՂԻԱԶԱՐ

Տիկին, կանչում են:

ՀԵՂԻՆԷ

Քալիս եմ, այ մարդ,

Պէտք է գնալ սրանց խճճածն արձակել:

(Ծառայի հետ գնում են)

ՍՈՒԼ. (մենակ)

Երկնքի չափ խոր է մարդկային հոգին. պէտք է
ստիպուած լինել իջնել այնտեղ զբուած սանդուխքի
աստիճաններից միշտ դէպի խորը: Զը պէտք էր տիկ-
նոջ մօտ քրքրել խնդիրը: Ուրիշը չի կարող նրա կաս-
կածը փարատել. սոսկալի դէպքը չի կարողացել նրա
դէմ պարզել ճշմարտութիւնը, նա դեռ ևս տատան-
ւում է:

ՏԵՍԻԼ Բ.

(Մտնում է Բաբա. նոյնը և Բաբա)

ԲԱԲԱ

Ասում են, որ այդ մարդն ինքն է եղել
իբր մահուան պատճառն:

ՍՈՒԼ.

Ի՞նչպէս թէ ինքը:

ԲԱԲԱ

Այդպէս են ասում:

ՍՈՒԼ.

Ի՞նչպէս են ասում

կամ բացատրում:

ԲԱԲԱ

Ասում են, իբրև

նա ուղեցել է նրան սպանել.

նա պաշտպանուել է և յաջողուել է

նրան սպանել:

ՍՈՒԼ.

Դուք հաւատում էք....

Ուրիշներն ի՞նչ են ասում այդ մասին:

(Մտնում է Մարտիրոս)

ԲԱԲԱ

Համարեա ոչ ոք չի հաւատում թէ

Այդպիսի մի բան կարող է լինել:

(Դէպի ծառան)

Հմ, ի՞նչ կայ, այ մարդ, դժու ի՞նչ ես ասում:

ՄԱՐՏԻՐՈՍ

Աղա, մի մարդ է ուղում ձեզ տեսնել:

ԲԱԲԱ

Ո՞վ է ուղում տեսնել:

ՄԱՐՏԻՐՈՍ

Մի գիւղացի:

ԲԱԲԱ

Գիւղացին մեզ հետ ի՞նչ գործ ունի որ:

ՍՈՒԼ.

Ասա թող գայ ներս, տեսնենք այդ ո՞վ է:

(Ներս է գալիս ՄՆՕ)

ՍՈՒԼ.

Հա, ահ, խեղճ մարդ, սա մեր Սմբաթի հայրն է:

ԲԱԲԱ (դէպի ՄՆՕն)

Գլխարկդ վեր առ:

(ՄՆՕն ուշադրութիւն չի դարձնում, երկար լուռ
կանգնած է:)

ՍՈՒԼ.

Ի՞նչ պիտի ասես, ինչո՞ւ չես խօսում,

Այ խեղճ, թշուառ մարդ:

ՄՆՕ (սպանալից)

Այդ ո՞վ է արել...

Զը կարծէք թէ էս դողացող ձեռներն

Անպէտքացել են... կամ կը մոռանում

Որդուս արիւնը:

ՍՈՒԼ.

Այդ շատ լաւ բան է,

Ի՞նչ պիտի անես:

ՄՆՕ

Ի՞նչ պիտի անեմ....:

ՍՈՒԼԹ.

Ձէ՞ որ մի անեղ պատասխանատուութիւն

կը ըլնի ք՞ վրայ:

ՄՆՕ

Թող ինձ խորովեն:

ՍՈՒԼ.

Այդ էլ ուրիշ է:

ՄՆՕ

Կը մտանեմ նրան

Կառավարութեան:

ՍՈՒԼ.

Կառավարութեան,

Կառավարութեան:

ՄՆՕ

Հա՛, հէնց... ինչո՞ւ ես

ներանից վախենում:

ՍՈՒԼ.

Ես մի բան արած

Չունեմ, վախենամ: Բայց ասա, ինչպե՞ս,

Դրանով արդեօք ի՞նչ պիտի շահես.

Դրանով որդուդ յարութիւն կը տաս:

ՄՆՕ

Հօ սիրտս էլի մի կը հովանայ:

ՍՈՒԼ.

Դրանով երբէք հանգիստ չես գտնիլ.

Որդիդ մեռնելուց յետոյ ինչ կուզես

Սրա, քո վերքը չի բժշկուելու:

ՄՆՕ

Ա՛խ, բա ի՞նչ անեմ, Աստուծոյ անէծքը

Թող չորացնի այն մարդուն, որը

Ձեռ բարձրացրեց իմ որդու վրայ:

Բայց ասէք, ասէք, ո՞վ այդպէս արեց:

ՍՈՒԼ. (մի կողմ)

Խիստ կասկածում եմ, որ սա կարող է

Լնել այն, ինչ որ ես եմ ցանկանում.

Հակառակ դէպքում ես եմ տուժելու,

Ուրեմն այս հարցը յօդուտ նրա

Պիտի վճուել, հանգամանքների

Բերմունքը այս է, ուրիշ ելք չը կայ:

(Դէպի նա) Այս բոլորէն կասեմ քեզ ո՞վ է,

Բայց խօսք պիտի տաս վարուելու այնպէս,

Ինչպէս քո օգուտ, շահն է պահանջում:

ՄՆՕ

Լաւ, ասա տեսնեմ:

ՍՈՒԼ.

Դու չէիր ուզիլ

Մինչև կեանքիդ վերջն ազատ, ապահով

Լինէիր, խեղճ ես, բաւական է, ինչ

Քրտինք ես թափել. այժմ պէտք է քեզ

Հանգիստ վայելել՝ օրական երկու

Լնդամ ժամ գնալ, Աստուծուն աղօթել,

Մեռելիդ վրայ մի արձան կանգնել,

Պերեզման օրհնող քահանաներին

Առատ նուէր տալ: Հիմա այդպիսով

Որդուդ յիշատակն աւելի յարգած

Կը լինէիր, թէ ոչ:

ՄԱՐՏԻՐՈՍ

Աղէն շատ խելօք է հրամայում:

ԲԱԲԱ. (Դէպի Սուլ.)

Այ մարդ, դու խելքդ կորցրել ես, խնայ
Մի ասող չը կայ, աւանակ, քեզ ի՞նչ.
Ինչի՞ ես խառնուում էդպէս բաների:
(Բռնելով Մնօի թևից):

Է՛յ, գնա, գնա, թշնամուդ դաի,
Ինչ կուզես արա, քո ուզած մարդը
Այստեղ չի, գնա: (դէպի Սուլ.)
Ասես թէ սահուն սառոյցի վրայ
Ընկած եղ լինիս, էս՝ կողմը քաշոււի,
Թող գնայ բանին:

ՍՈՒԼ. (մի կողմ Մնօին)

Դու գնա, կը դամ:
(Գնում են բոլորը:)

ՏԵՍԻԼ Գ.

(Նորից ներս են գալիս Սուլ. և Մնօ)

ՍՈՒԼԹ.

Նա ծերացել է, խելքը կորցրել.
Նրա խօսքերը մի գրօշ չարժեն,
Միայն ինձ լսիր, իմ խորհուրդը շատ
Բարի խորհուրդ է. լսես, չես զղջալ:
Է՛հ, ի՞նչ ես ասում, համաձայնում ես:

ՄՆՕ

Լաւ, միայն ասա, թէ ո՞վ է արել:

ՍՈՒԼ.

Այդ անողը մեր պարոն Գէորգի
Որդին է՝ ո՛րը, արդէն աշխարհին.
Յայտնի է հիւանդ, խելագարուած է՝
Եւ պատահմամբ է եղել այդ բանը:

ՄՆՕ

Տէր Աստուած, նրան պիտի պատահէր.
Բայց ես ուզում եմ այդ մարդուն տեսնել:
ՍՈՒԼ.

Տէր Աստուած, այ մարդ ի՞նչ կարիք ունես:
Ես կը վերջացնեմ և դու յաւիտեան
Ապահով կը լինես:

ՄՆՕ

Ոչ, ես անպատճառ

Ուզում եմ տեսնել:

ՍՈՒԼԹ.

Ի՞նչ պիտի անես:

ՄՆՕ

Հաւատացիր ինձ, ոչինչ չեմ անիլ.
Զե՞ս հաւատում ինձ, առ ահա մահակս՝
Իմ միակ զէնքը, առ պահիր քեզ մօտ:
(Տալիս է նրան մահակը և գնում են:)

ՏԵՍԻԼ Գ.

(Մտնում են Հեղինէ և Էմմանուէլ)
ՀԵՂԻՆԷ

Ա՛խ, որդեակ, որդեակ, դու վերջին անգամ
Ուշ դիր խեղճ մօրդ տառապանքներին:
ԷՄՄ.

Մայրիկ, խենթերը յիշողութիւնից
Զուրկ են. ես այժմ կտրող եմ վճռել,
Բայց վաղը՝ զիտեմ պիտի մոռանամ:
ՀԵՂԻՆԷ

Մի կարգալ մահու մեր դատաւճիռն:

ԷՄՄ. (Երգում է)

Օ՛, թող մեռնեն խենթերը,
Էլի կը դան օրերը,
Դուք վարդի պէս կը ծաղկէք,
Խենթին „ոգորմի“ կասէք:
Գիտեմ ի՞նչ ես ցանկանում,
Ես այդ քեզ չեմ կարող տալ...

(դուռը ծեծում են)

Ո՞վ է մեզ կանչում, ներս եկէք տեսնեմ:
(Ներս են գալիս Մնօ ու Մարտիրոս: Մնօն
քարացածի պէս կանգնած է Էմմանուէլի դէմ և նա-
յում է նրան):

ԷՄՄ. (ինքն իրան)

Նրա պահանջը աւելի մեծ է,
Քան իր կորուստը, նրան չեմ խղճում:
(դէպի նա) Ի՞նչ ես ցանկանում, այ մարդ, հեռացիր,
Կամ թէ չէ խօսիր. բան, ի՞նչ ես ուզում,
Գլուխս կտրիր, աւերիր տունս,
Գոռն, կատաղիր, փրփրն, ի՞նչ ես
Ուզում, ասա շուտ, ուրեմն եկել ես
Դու մեզ ծաղրելով, խօսիր, դէ՛հ, խօսիր...
(Մնօն յարձակւում է նրա վրայ, մօտենում է
Մարտիրոսը, Մնօին բաժանում է նրանից: Ներս է
գալիս Երւանդը)

ԷՄՄ.

Վահ, ի՞նչ ես ուզում այս մարդիկ ինձանից.
Միթէ՞ արածս արդար հատուցումն
Ձէ՛ր, միթէ՞ մենք սիրտ չունենք, այ մարդիկ:
ՀԵՂԻՆԷ (մի կողմ Մնօին)
Աստուած մեր զլիին բարկացել է,
Տեսնո՞ւմ էք, որ նա չի հասկանում թէ

Ինքն ի՞նչ է անում:

ՄՆՕ

Ինչի՞ էք թողնում
Նրան էսպէս, փիէ, է, նա կարող է էլ
Շատերին անել:

ԵՐԻԱՆԴ

Հանգստացէ՛ք, լաւ,
Նա մեղաւոր չէ, հեռացէ՛ք շուտով:
ՀԵՂԻՆԷ
Թողէ՛ք մենք ձեզ բաւարարութիւն
Կը տանք, ծերունի:

ՄԱՐՏԻՐՈՍ

Գնանք, աղէն ինձ
Պատուիրել է, որ շուտ գնանք այստեղից:
ՀԵՂԻՆԷ
Գնանք, ես ձեզ հետ ահա գալիս եմ:
(գնում են բոլորը)

ՏԵՍԻՆԷ Դ.

(Գալիս են Երւանդ և Էմմանուէլ)
ԷՄՄ.

Այժմ զգում եմ, որ ես հիւանդ եմ,
Այս շատ ցաւալի դիպուածները մէջ
Ես բաց եմ թողել և մոռացել եմ
Ամենակարեւորը քեզ հաղորդելու:
Արդեօք ի՞նչ կասես այս երազներին.
Այդ նոր մեռնողն էլ խոստովանուեց,

Որ ինքն է գործել այդ սոսկալի ոճիրը:
ԵՐԻԱՆԴ

Վահ, ճիշտ ես ասում:

ԷՄՄ.

Նա վախենում էր

Վերջին դատաստանից. խոստովանուէց
Եւ ներումն խնդրեց:

ԵՐԻԱՆԴ

Ասա ինձ, խնդրեմ,

Երազից առաջ ունեցել ես դու
Արդեօք մի առիթ՝ կասկածելու որ
Այդ նա է արել:

ԷՄՄ.

Հասկանում եմ ես

Ի՞նչ ես ասում դու. լոկ միայն նրան
Ես ատում էի, էլ ուրիշ ոչինչ.
Այդ հարցերն արդէն հնացել են
Ուղիղ մի պատասխանի համար:

ԵՐԻԱՆԴ

Բայց ես դրանից բան չեմ հասկանում:

ԷՄՄ.

Նոյնպէս ես. սակայն այդ երևոյթը
Հոգուս հետ ունի մի ազգակցութիւն
Եւ համանման երևոյթները
Քիչ չեն փոխում այս անսահմանութեան
Մէջ կղզիացած

Հոգուս արամադրութիւնը... Լսիր.
Բայց և այնպէս մի ցաւ է պատահել ինձ,
Ինձ կորցնում եմ, երբ այդ յիշում եմ:

ԵՐԻԱՆԴ

Մահից ես երկչում:

ԷՄՄ.

Ա՛խ, ի՞նչ է, ի՞նչ է

Անիծեալ կեանքը. — չնչին մասերի
Մի ամբողջութիւն, որ մահը պիտի
Նրանց բաժանի նորից մասերի:

ԵՐԻԱՆԴ

Մեծ մարդիկը չեն քեզ հանգիստ տալիս:
ԷՄՄ.

Ա՛հ, ի՞նչ ես ասում, դու էլի ինձ
Լաւ չես ճանաչել, եթէ լինէի
Ամբողջ աշխարհի հրամայողը՝
Իմ մտքերիս բարձր իշխանութեամբ
Կեանքիս անսահման շաւղի վրայ ես
Ոչ մի քայլ չէի
Արած լինիլ, համեմատելով այս
Անխուսափելի, բայց և ակամայ
Զգտումներիս հետ.... Բայց տես նա ի՞նչ է.
Ահա այնտեղ, տես լուսնի շողերի
Տակ մի ինչ որ բան սեկն է տալիս:

ԵՐԻԱՆԴ

Մարդ է, մարդ պիտի լինի, տեսնում եմ:
ԷՄՄ.

Մարդ է, տեսնում եմ, զալիս է դէպ մեզ:
ԵՐԻԱՆԴ

Նա մօտենում է. ո՞վ պիտի լինի
Այս կէս զիշերին:

ԷՄՄ.

Մահտեսեանը չէ,

Նրան նման է:

ԵՐԻԱՆԴ

Հա, հէնց նա ինքն է.

Բայց ինչ տարօրինակ շարժումներով.
Մօտենանք տեսներ, ինչ է պատահել:
(Մօտենում է սրանց Մահտեսները երգելով)

ՄԱՀՏԵՍԵԱՆ

Վայ, բերել են թաղելու.

Վրէն սև հող ածելու.

Գերեզմաններ, բացուեցէք,

Մեռելներին դուրս բերէք,

Թող աղօթեն ու երգեն:

Ինչո՞ւ Աստծուն փառք չը տալ,

Ինչո՞ւ զուր տեղն այսպէս լալ.

Վաղը կը գայ էլի տուն,

էլի տուն, էլի տուն:

ԵՐԻԱՆԴ

Այս մարդը կարգին խելագարուած է,

Կանգնեցներ և խօսեցներ:

ՄԱՀՏԵՍԵԱՆ

Ճպուռը տխուր է ճուռում,

Ձարիկիս սուգն է անում.

Մենք էլ նրան չենք տեսնիլ,

Նրա հետ էլ չենք խօսիլ:

Ահա այն բլրի տակին

Մի օր կը տաս քո հողին.

Այնտեղ երկար չը մնաս,

Թէ չէ պէտք է սևանաս:

Հայ, հոյ, հայ, հոյ. թողէք ես գնամ

Ահա այնտեղից, ահա այնտեղից

Եկան թափուեցին, տարան, քանդեցին:

Ա՛խ, մի թողէք կը թռչի,

Քարափէցը վայր կնկնի:

ԵՐԻԱՆԴ

Ի՞նչ է պատահել, այ մարդ:

ՄԱՀՏԵՍԵԱՆ

Հրէն, տեսէք,

Սրանք գերեզմաններ չեն. (ցոյց տալով դէպի
մերձակայ ժայռերը):

Ահա էն սև սև ծառերի տակով.

Սպասէք, էյ, հէյ. (դէպի երևանող) այ մարդ,
վերարկուս

Կը տամ քեզ, եթէ քո փայտը տաս ինձ:

ԵՐԻԱՆԴ

Քո ինչի՞ն է պէտք իմ փայտը, այ մարդ:

ՄԱՀՏԵՍԵԱՆ

Որ զրաւ դնեմ օղեվաճառի մօտ,

Մի բաժակ օղի տանք գիւղի գզրին,

Մեզ տանի դէպի գերեզմաններ:

ԷՄՄ.

Անպատճառ մի բան պատահած պիտի

Լինի սրանց հետ մեր բացակայութեան

Միջոցին. սրան թող խօսեցներ: (դէպի Մահ-
տեսներ)

Անունդ ինչ է, ինձ ճանաչում ես:

ՄԱՀՏԵՍԵԱՆ

Ես կին ունէի, Աստուած ողորմի

Նրա հոգուն. ես շատ փող ունէի.

Առէք մեր աղից մի տասը հազար,

Նա մեզ կը փրկի:

ԷՄՄ.

Քեզ հարցնում եմ,

Ինձ ճանաչում ես, յիշում ես, երբ դեռ

Կենդանի էր մեր ողորմած հոգի
Մայրիկը — քո կինն. նա շատ էր սիրում
Ինձ. միշտ պաղպաղակ էր ուտացնում,
Երբ գալիս էի, դու էլ շատ էիր
Ուրախանում: Է՛հ, անցկացած օրեր:

ՄԱՀՏԵՍԵԱՆ

Այս սրտեղ ենք մենք, գլուխս այլևս
Դատարկ չէ, էլ չի ցաւում: Էմմանուէլ,
Հիմա փառք Աստուծոյ խօմ լաւ ես. բայց
Մայրդ նեղանում, շատ է նեղանում,
Երբ կէս գիշերին դու դուրս ես գալիս
Ման գալու այստեղ:

ԷՄՄ.

Բայց ասա, այստեղ

Դու ի՞նչ ես շինում այս կէս գիշերին:

ՄԱՀՏԵՍԵԱՆ

Ոչինչ, գնում եմ գերեզմանները,
Այնտեղ է միակս, իմ խեղճ Զարիկը:

ԷՄՄ.

Գնանք տուն, տուն գնանք, Զարիկը տանն է:

ՄԱՀՏԵՍԵԱՆ

Ձեմ գալ տուն, չէ, չէ:

ԷՄՄ.

Ձէ, պիտի գնանք:

ՄԱՀՏԵՍԵԱՆ

Ձեմ ուզում, չեմ գալ. անխ, ի՞նչ էք ուզում,

Ձեմ գալիս էլի. չեմ գալիս, չէ, չէ:

(Նրան տանում են, նա սկսում է բարձր ձայնով
լալ, ինչպէս մի մանուկ):

ՏԵՍԻԼ Ե.

(Մանում են Էմմանուէլ, Վարսենիկ, Երւանդ)
ԷՄՄ.

Վարսենիկ, այսօր հետաքրքիր ես
Դարձել. աչքերիդ տարօրէն այդ լուրջ
Արտայայտութիւնը քերեց իմ հոգու
Վրայից բոլոր անցեալի դառը
Յիշատակները. ես ընկճուած եմ:

ՎԱՐՍ. (հեկեկալով զրգում է նրան)

Ո՛հ, եղբայր իմ, եղբայր իմ, եղբայր
Էմմանուէլ,

ԷՄՄ.

Ահ, բաւական է:

ՎԱՐՍ.

Իմ Էմմանուէլ, չեմ սիրում նրան,
Նրան ատում եմ. ներքի ինձ, ան, ներքի:
ԷՄՄ.

Մի ատիւր ոչ ոքի, որովհետև
Ատելութիւնը կիրք է մեր մէջ. իսկ
Կիրքը մեր մէջ կիրք է յարուցանում.
Թող արատաւոր բոլոր կրքերից
Ազատ լինի քո սէրը. և լինի
Կրակի նման ամեն բան գտող,
Ոչ ապականոց, ստորացնող:

ՎԱՐՍ.

Ես կը լսեմ քեզ, ամեն մի խօսքդ
Որպէս թանկագին աւանդ կը պահեմ
Իմ հոգու խորքում մինչև իմ մահը,
Բայց լսիր, եղբայր.

Եթէ կեանքումդ զոնէ մի անգամ
Տաճել ես դէպի քո թշուառ քոյրը
Մի լաւ գգացմունք՝ յիշիւ այդ, լսիւ
Իմ աղաչանքը:

ԷՄՄ.

Ի՞նչ է, քոյրիկս,

ՎԱՐՍ.

Թող մենամարտութեան միտքը, սիրտս
Սկ է պատել. սոսկալի երազներ
Ճնշում են ինձ, ինչպէս մի սարսափելի
Ծանրութեան տակ մի շատ տկար մարմին:
Նոր եմ հասկանում, որ նա խաբեբայ է,
Մի մեծ խաբեբայ:

ԷՄՄ.

Ես այդ չեմ կարող:

ՎԱՐՍ.

Մի մերժեր, եղբայր, թող մտածեմ, որ
Մի եղբայր ունեմ և նրա քաղցր
Հովանաւորութիւնը իմ հետ կը լինի
Մինչև իմ մահը

ԷՄՄ.

Այդ իմ ոյժիցը

Վեր է, սիրելիս:

ՎԱՐՍ.

Ա՛խ, էմմանուէլ:

ԵՐԻԱՆԴ.

Շատ մի վրդովւէք օրիորդ. վստահ
Կարող եմ ասել, այդ խաղը յօգուտ
Եղբօրդ կը վերջանայ:

ՎԱՐՍ.

Այդ Աստուած գիտէ:

ԵՐԻԱՆԴ.

Մի բան, օրիորդ. ի՞նչ է պատահել
Մահաւետեանի հետ այս քանի օրը:
ՎԱՐՍ.

Մի՞թէ այդ մասին ոչինչ չը գիտէք:
ԷՄՄ.

Համարեա ոչինչ:

ՎԱՐՍ.

Ի՞նչպէս թէ ոչինչ,

Ճիշտ էք ասում, որ ոչինչ չէք լսել:
ԵՐԻԱՆԴ.

Կատա՞կ էք անում:

ՎԱՐՍ.

Օ, այդ ուրիշից

Խնդրեմ իմացէք:

ԷՄՄ.

Դէհ, ասա, ի՞նչ կայ:

ՎԱՐՍ.

Զարիկը.... Զարիկը....

ԵՐԻԱՆԴ.

Ի՞նչ է, մեռել է:

ԷՄՄ.

Ի՞նչ է պատահել:

ՎԱՐՍ.

Թէ մեռած լինէր

Բնական մահով՝ բարեկամները

Եւ հայրը այնքան չէին վշտանալ.

Խեղճ հայրը արդէն խելագարուած է:

ԵՐԻԱՆԴ.

Տարօրինակ բան:

ԷՄՄ.

Ինչից ստիպուած,
Ինչից է մեռել:

ՎԱՐՍ.

Խիստ այլանդակուած
Դիակը բերին մեծ ժայռի տակից:

ԷՄՄ.

Յայտնի չէ՞ ոչինչ, ի՞նչ է պատճառը,
Ոչինչ չիմացա՞ր:

ՎԱՐՍ.

Համարեա ոչինչ,
Բայց հակառակ իր սովորականին՝
Մի քանի օր էր, որ շատ ախուր էր:

ԵՐԻԱՆԴ.

Օ՛, էմմանուէլ, այստեղ մի բան կայ....
Գնանք խուզարկենք նրա սենեակը:

ԷՄՄ. (գողգոջիւն ձայնով)

Գնանք իմանանք:

(գնում են):

ՏԵՍԻՆԱ 2.

(Մտնում է Սուլթանեանը)

ՍՈՒԼ. (մենակ)

Սրդէն ամեն ինչ անցաւ, վերջացաւ.

Իմ բոլոր դուքսեր ու հնարները

Երկարացրին միայն տանջանքս:

Զարմանալի է. այդքան հարուածներ

Միացած հոգու տանջանքների հետ,

Չը կարողացան նրան տապալել:

Ո՛հ, ճակատագրի անօրէնութիւնն

է՞ր սա, որ բերեց ինձ այս փորձանքը,
Թէ՞ հետեանքն էր իմ սխալներիս.

Ինչո՞ւ չէի մտածում ես, որ նա էլ

Մարդ է, կարող է պաշտպանուել և

Հակառակ հարուածը հասցնել իր

Թշնամուն. ինչո՞ւ թոյլ տուի Սմբատին

Գործադրելու այն խալ վճիռը:

Անցել է. փախչել չեմ կարող. առանց

Իմ կամքի արդէն անհրաժեշտ է

Մենամարտութիւնն: Նա թոյլ է, գուցէ

Յաղթութիւնը ես տարայ, և արդէն

Նպատակներս պատկուած կը լինեն....

Գուցէ հակառակն... օ, սիրտ իմ, սիրտ իմ,

Այդ մասին լուռ կաց... քնած սպասիր

Մինչև այդ վայրկեանն. ես մարդ կուղարկեմ

Նրա մօտ՝ ինչ որ անելու է, շուտ

Եւ շատ շուտ անի:

(գնում է)

ՏԵՍԻՆԱ Է.

(Մահաբանի բնակարանում, Զարիկի սենեակը
մտնում են Երևանդ և Էմմանուէլ, խուզարկում են):

ԵՐԻԱՆԴ.

Սատանայի միտքն մինչև այստեղ չի

Հասել. այստեղ դեռ մի մարդ չի մտել,

Եթէ ոչ, նորից մի մոլորութիւն

Ճշմարտութեանը միշտ պիտի գերէր.

Խեղճը հէնց այսպէս ամեն բան թափուած

Թողել է, շտապել՝ կատարելու իր

Այդ անուելի որոշումը:

ԷՄՄ

Խեղճ:

ԵՐԻԱՆԴ

Պէտք է հաւաքել այս պատառոտած թղթի կտորներն, սրանց վրայ ինչ որ գրուած բաներ են երևում: ԷՄՄ.

Օհօ, Երևանդ, այստեղ մի կտորի վրայ երևում է անուանս սկզբնատառերից մէկը:

ԵՐԻԱՆԴ

Հաւաքիր, հաւաքիր, թող համեմատենք:

(Հաւաքում են, համեմատում և սկսում է կարգաւ Երևանդը:)

«Ա՛խ, էմմանուէլ, էմմանուէլ, ես քեզ արժան չէի. ես քեզ դաւաճանեցի, բայց ոչ զիտակցաբար, ինձանից անկախ, այս խարդախ զգացմունքներս ինձ քեզանից յափշտակեցին և մօտեցրին նրան, որ քեզ յայտնի էր արդէն.... Նա ինձ այնպէս թովեց, ինչպէս օձը թռչնակին. նա ինձ խաբեց, անպատուեց և թողեց: Բայց աղաչում եմ քեզ, ներիր ինձ... ո՛հ, ներիր ինձ. վրէժս առնելու համար քեզ չ' ենթարկես փորձութեան, ես արժանի չեմ, զգում եմ, որ մահս անգամ իմ արածի հատուցումը չէ... դէհ, յաւիտեան մնաս բարով:

Քո Զարիկ»

Բայց արդեօք ինչո՞ւ է գրել նա և

Յետոյ պատուել:

ԷՄՄ.

Ինչո՞ւ, հասկանալի է.

նա ամաչել է իր այդ արած արարքից:

ԵՐԻԱՆԴ

Նա մեղաւոր չէ:

ԷՄՄ.

Այդպէս մի ասիր.

Բոլորս նոյն չափով անասուններ ենք,

Երբ զրգուած է մեր ախորժակը:

ԵՐԻԱՆԴ

Ես զարմանում եմ, թէ դու ինչպէս ես

Այդպէս սառը դատում այս հանգամանքում:

ԷՄՄ.

Ես ինքս լաւ չեմ հասկանում ինչո՞ւ.

Բայց գիտեմ, որ այդպէս է և ոչ

Ուրիշ կերպ:

ԵՐԻԱՆԴ

Հապա ինչի՞ համար էր

Ձեր կռիւները, ինչո՞ւ սկզբից

Այնքան հակառակ էիր դու նրա

Գոյութեան:

ԷՄՄ.

Ես ինչ որ ասել եմ նրա մասին, նոյնն էլ կասեմ. մինչև անգամ կարող եմ ասել, որ ես չեմ ներում նրան, որովհետեւ նրա բոլոր արարքները ղեկավարւում են որոշ ծրագրով և զիտակցաբար, հետեաբար, այդ սպանութիւնը նրա կողմից պատահական մի գործողութիւն չէ, կամ բռնկուած կրքերի հետևանք: Նրան կարելի էր յարգել, եթէ այդ զիտակցական գործողութիւնները ուղղուած լինէին դէպի աւելի մի մաքուր նպատակ, բայց նրա այդ զիտակցութիւնը հպատակեցրած է յաւիտենապէս մարդկային բնութեան յատուկ մոլութիւնների, որով և գեղաժարւում են՝ Սուրբաններ, Վիլհելմներ և ամբողջ ազգեր և եթէ զարգացած ազգերի մէջ այդ մոլութիւնները քաջ գային զիտակցութեան ետեից, այն ժամանակ միան-

գամից կ'որոշէր մեր դժբախտ աշխարհի ճակատագիրը: Գանք դարձեալ դէպի մեր հարցը. շատ լաւ, դիցուք թէ մենք նրա գոյութեանը վերջ տուինք սրով՝ այսինքն սպանութեամբ, բայց այդ մի շատ միամիտ գործողութիւնը ի՞նչ ընդհանուր կամ մասնաւոր ինդիւիդ կարող է լուծել... հաւատացնում եմ քեզ, նա թոյլերի և տկարների զէնքն է. եթէ՛ նա փոքրաթիւ զէպքերում կատարւում է կրքի ազդեցութեան տակ, բազմաթիւ զէպքերում կատարւում է այն ժամանակ, երբ կանգ է առնում մի մեծութեան առաջ, նրան ընկճելու ոչ մի հնարաւոր միջոց չը գտնելով. ահ, թշուառականներ են սպանողները և ծիծաղալի իրենց գործողութեամբ:

ԵՐԻԱՆԴ

Բայց չէ՞ որ մեր երկրագնաւի վրայ ահագին թւով դեռ ապրում են անգիտակից սպանողներ, որոնց սրերը ամեն օր շողում են այդ գիտակցութեան զլխին:

ԷՄՄ.

Այդ ժամանակաւոր է ընդհանրապէս. բայց մասնաւորապէս ճշշող գիտակցութիւնը իր ազատութեան հնարը կը գտնի. եթէ՛ հարկաւոր է նրան սուր, թող վերցնի, կամ ինչ միջոց, որ կը թելադրեն նրան սպանողները.....

ԵՐԻԱՆԴ

Ուրեմն դու ի՞նչ ընթացք ես ուղղում
Տալ ներկա հարցին:

ԷՄՄ.

Է՛հ, նա կանչել է,

Ես էլ ընդունել. էլ ի՞նչ ընթացք տալ:

ԵՐԻԱՆԴ

Ա՛խ, էմմանուէլ....

ԷՄՄ.

Հասկացայ միտքդ,
Մտածում ես, որ ես տանել կը տամ:

ԵՐԻԱՆԴ

Ո՛հ, ես, իբրեւ մարդ, ենթարկւում եմ
Հոգուս տրամադրութեան. ինձ պաշարել են
Տխուր, շատ տխուր նախազգացումներ:
Թոյլ տուր քեզ մի վատ առաջարկութիւն
Անել իմ կողմից:

ԷՄՄ.

Ինչ հնարաւոր է,
Ես այն կ'ընդունեմ:

ԵՐԻԱՆԴ

Հնարաւոր է,
Եթէ ցանկանաս:

ԷՄՄ.

Դու լաւ գիտես, որ
Ցանկութիւններիս հետ ես այնքան էլ
Կապուած չեմ:

ԵՐԻԱՆԴ

Ուրեմն վերջացած է այդ:

ԷՄՄ.

Դեռ աստ տեսնեմ:

ԵՐԻԱՆԴ

Պէտք է փոխենք մեր
Այս ներկա դերը:

ԷՄՄ.

Ի՞նչպէս թէ փոխենք:

ԵՐԻԱՆԴ

Այո, անպատճառ պիտի փոխենք այդ.
Ես պիտի կանչեմ նրան. թէև այս

Կը լինի վատութիւն՝ և սա անկասկած
Ցոյց է տալիս իմ յաւակնոտութիւնն
Եւ ուրիշի մօտ գերազանցութիւնս,
(Բայց զիտեմ սրանք դու ինձ կը ներես.)
Եւ ես, մի վատ բան անելով, ուզում եմ
Մի մեծ շարութիւն անհետացնել
Երկրի երեսից՝ թէն կալոյ է
Ինձ չը յաջողուել, կամ թէ յաջողուել:
ԷՄՄ.

Անկարելի է:

ԵՐԻԱՆԴ

Օ', լաւ մտածիր.

Տկար ես, ոյժերդ քեզ գաւաճանել
Կարող են, և նա կը հասնի ամենիս
Ոչ ցանկալի իր վատ նախապնդումներին:
ԷՄՄ.

Ճշմարիտ է, որ ոյժերս արդէն
Թողել են ինձ. բայց ես պիտի փորձեմ
Բախտս ու տեսնեմ:

ԵՐԻԱՆԴ

Նա շատ ճարպիկ է

Եւ դու կեանքումդ զէնք չես վերցրել,
'ի բաց առեալ այս վերջին գէպքը՝ որ....
ԷՄՄ.

Այս վերջին գէպքը ես չեմ ընդունում
Առհաւատչեայ իմ ճարպիկութեանը,
Բայց պիտի փորձեմ, չը նայելով, որ
Էլի վստահ չեմ, որ ես կը տանեմ:

ԵՐԻԱՆԴ

Օ', մի մերժեր ինձ, կատարիր ընկերոջդ
Այդ վերջին իղձը:

ԷՄՄ.

Ներիր ինձ, Երւանդ,
Որ այս խաղը ինձ, զիտեմ, չափից դուրս
Հետաքրքրում է. մանաւանդ, այլեւ
Անհնարին է այս կեանքում քարշ գալ
Ինձ, անհնարին է, ներիր, որ այդ
Եսից ոյժ չունիմ հրաժարուելու:

ԵՐԻԱՆԴ

Մի աւելացնիր զոհերի թիւը
Այդ խարդախ մարդու, Աստուած իմ, Աստուած,
Չը զիտեմ նա ինչով է արժանի
Այդքան զոհերին... այս վերջին զոհը...
Գոնէ Զարիկին չը մոռանայիր:

ԷՄՄ.

Ոչինչ, ես կերթամ նրա շիրիմից ներողութիւն
կը խնդրեմ, արտասուք կը թափեմ նրա վրայ, որ նրա
աճիւններէից ծաղիկներ բուսնեն և հովանաւորեն նրան,
դժոխքի կրակից աւելի տաք սիրտս շրթունքներէս
վրայ կը համբուրեմ նրա գերեզմանը. կերթամ կը համ-
բուրեմ և այն սուրբ վայրերը, որտեղ ներկայ եմ ե-
ղել նրա թշուառութիւններին, որպէս զի շրթունքներս
երկար չայրուին... չէ՞ որ ես դեռ կենդանի պիտի
մնամ....:

(Ներս է գալիս Մարտիրոս)
ՄԱՐՏԻՐՈՍ

Աղա, ասում է, որ ես պատրաստ եմ,
Արի, որ կուենք:

ԷՄՄ.

Շատ լաւ, դու գնա:

(Մարտիրոսը գնում է):

ԵՐԻԱՆԴ

Ձը կարողացայ ես քեզ համոզել:
(գնում են)

ՏԵՍԻՆԼ Ը.

Տեսարանը ներկայացնում է մի լայն ասպարէզ.
Գալիս են այնտեղ Սուլթանեանի բարեկամները մի
քանիսը և յետոյ Սուլթանեան, էմմանուէլ, Երւանդ,
Հեղինէ և Վարսենիկ:

Սուլթանեանի բարեկամները մէկը,
(ակնարկելով Վարսենիկին)

Օրիորդը սաստիկ կերպով գունատուեց,
Նա վախենում է. ինչո՞ւ չեն արդեօք
Նրան այստեղից հեռացնում: Էյ,
Երւանդ, լսիր ինձ, ուշդ սրտեղ է,
Մի շուրջդ նայիր, ի՞նչու չես նրան
Առաջնորդում տուն:

ԵՐԻԱՆԴ

Այդ ճիշտ ես ասում:

Օրիորդ, խնդրում, ազաչում եմ ձեզ,
Գնանք ինձ հետ տուն, սրտներդ ամուր
Պահեցէք, ի՞նչ կայ:

Վ.Ա.Ր.Ս. (բացականչելով)

Դարձի՛ր, մի անիր, իմ անուշ եղբայր,
Իմ էմմանուէլ:

ԷՄՄ.

Դրան տարէք տուն, շուտ, շուտ տարէք:

(Տանում են նրան)

Հիմա Սուլթանեան, գալիս եմ դէպ ձեզ՝
Յարմար, շատ յարմար վայրկեան է այս մեզ

Խոստովանուելու: Խոստովանուիր, որ
Ձեր ընտրած բոլոր այդ միջոցները
Չ'արդարացրին ձեր քաղցր յոյսերն,
Խոստովանուիր, որ այն ակնկալած
Ձեր վայելքները զիմակ ունէին

Դրսիցը դրած - վատ կնոջ զիմակ,
Որ գերեց սիրաներդ և մատնեց ձեզ
Այս յանկարծակի ահուկի ժամին:
Խոստովանուիր, որ սև մոխիր դարձաւ
Ձեր մէջ այն հողը, որտեղ ձեր յոյսը
Անհուն խնամքով ցանում էր իր պերճ,
Նագիւրի ծաղիկներն և իմացիր, որ
Նրանք չը ծնած դեռ, թառամեցին
Եւ հազար մի փուշ ու ժանտ տատասկի
Ձոհ գնացին, ո՞հ, և այդ փշերը
Ինքներդ ցանեցիք: Ո՞հ, ինչո՞ւ արդեօք,
Ինչո՞ւ չը պէտք է անել ամեն ինչ
Ուղիղ միջոցով....

Միթէ այդպէս չէ... չէք պատասխանում...

Բերէք զէնքերը, մենք պիտի կռուենք.

Քայլերով չափենք տեղը, մենք քանի

Քայլերի վրայ պիտի կռուենք, հա՛....

(Տրւում է նրանց զէնքերը)

Համեցէք մէջտեղ, չը կարծէք թէ իմ

Գնտակը կարող է վրիպել, անցնել

(Կանգնում են հինգ սաժէն հեռաւորութեան վրայ)

Եւ չը կարծէք թէ ձեր հաշիւներով

Չափել էք արդէն ինձ ամբողջապէս:

ՀԵՂԻՆԷ (ընկնում է մէջ տեղ)

Երւանդ, այ Երւանդ, մի թողնիլ, Երւանդ,

Մի թողնիլ Երւանդ:

ՍՈՒԼ. ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՑ ՄԷԿԸ

Պարոն, խնայեցէք այս դժբախտ կնոջն,
Եթէ հնար է, թողէք այդ բանը:

(Սուլթանեանը այդ ժամանակ անշարժ կանգ-
նած է)

ԷՄՄ.

Սուլթանեան, սիրադ պինդ պահիր, ահա
Եկաւ գնտակը, նայիր ձեռներիս,
Նրանք չեն դողում, նրանք կարող են
Այս բոստանի և մինչև անգամ

Անգունդը տանել հարազատ եղբորը,
Հարազատ մօրը... միևնոյն գէպքում.

Ուզում էք արդեօք ոյժերս իմանալ.

Դրէք այնտեղ մի շատ աննշան իր.

Գնտակով նրան երկինք թռցնեմ.

Ձէք հաւատում դուք, դէհ հիմա տեսէք:

(Հրապէսը արձակում է հակառակորդի ռաների
մօտ, խփելով մի փոքրիկ քարի)

ՍՈՒԼ.

Ի՞նչ պիտի անեմ ես, ինձ շուտ սպանէք....:

ԷՄՄ.

Ձեզ չեմ սպանում. ձեր մէջ սպանելու

Ոչինչ չի մնացել... դուք հազար անգամ

Սպանուել էք... Ո՛հ, ո՛չ, նրան ես

Ձեմ կարող սպանել....: Մարդիկ, լաւ նայէք,

Էլ ո՞վ կարող նրան սպանել:

Սուլթանեան, ագնիւ խօսք եմ ասում ձեզ,

Աղաչում եմ ձեզ, կատարէք ձեր խօսքն,

Մահն ինձ համար կարող է լինել

Մի բարեբար հրեշտակ, չէք հաւատում....

Աղաչում եմ ձեզ, չը կարծէք թէ ես

Այս անում եմ կեանքս խնայելու,
Ոչ, վերջին անգամ խնդրում եմ և շատ,
Շատ եմ խնդրում, ընդունէք խնդիրս:

ՀԵՂԻՆԷ

Ի՞նչ հրաշալի ելք ունեցաւ այս,
Որդի, Սուլթանեան, հասկացիր նրան,
Իսկոյն և եթ թող, թող, եկէք գնանք:

(Սուլթանեանը մոլորուած սկսում է յետ նայել,
օգնում ձեռները ճօճում է, բացասական նշաններ
տալով:)

ԲՈՂՈՐԸ

Սա ի՞նչ է անում:

(Յանկարծ մերձակայ ժայռի տակից պայթիւն է
լսւում, գնդակը առնում է էմմանուէլին և էմմա-
նուէլն ընկնում է:)

ՍՈՒԼ. (ինքն իրան,

Ա՛խ, ա՛խ, անգգամ, չը հասկացար ինձ:

ԵՐԻԱՆԴ

Ո՛հ, դու դաւաճան, նենգաւոր, խարդախ.

(Հեղինէն ուշաթափ ընկնում է, Երևանդը յար-
ձակւում է Սուլթանեանի վրայ և նրան սպանում:)

ՍՈՒԼ. ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Էյ, պարոն, պարոն:

ԵՐԻԱՆԴ

Ամենաչնչին հատուցումն էր այս

Իր արածներին:

ԷՄՄ.

Երևանդ, մեռնում եմ,

Ինչո՞ւ են այսպէս դժգոյն նայում ինձ.

Բնութեան գործը մարդը կատարեց....

Մի բան կայ, որ ինձ սարսափեցնում է,

Որ անգիտակցութիւնից առաջացած
Գիտակցութիւնը դարձեալ միանում է
Անգիտակցութեան հետ.....

ԵՐԻՍՆԴ

Ահ, էմմանուէլ.

էՄՄ.

Բնութեանը ես չեմ կարողանում
Հանդուրժել, ան, ես պապակւում եմ,
Ձուր տուէք խմել... չէ, էլ ժամանակ
Ձը կայ, օդը ինձ դաւաճանում է,
Շունչ չի տալիս ինձ... դէհ, մնաք բարե...
Յաւիտեան մնաք.....

Մեռնում է:

ԵՐԻՍՆԴ (Համբուրելով նրա սառած ճակատը)

Գնաս բարե:

Նա մեռաւ, մեռաւ.... բարեկամներ, այս
Խեղճ կնոջը տարէք տուն, ես այլ ես
Ոյժ չունեմ ոչինչ անելու, տարէք:

ՍՈՒԼ. ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՅ

Ի՞նչ անենք ապա այս դիակները.....

ՎԱՐԱԳՈՅՐ

ՎԵՐՋ



ՀՀ Ազգային գրադարան



NL0338740

Դիմել՝ Երևան

Տպարան „ԼՈՅՍ“ Արշակ Յակովբեանցի:

30439

